ԷՋՄԻԱԾԻՆ

1974

ԺԱ

ԼԱ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Հոյակերտեր

1974

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց Հայրապետի ողջույնի խոսքը գահասրահում՝ ուղղված Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք Տ. Նիկոլաոս Զ-ին 3

Նորին Սրբություն Տ. Նիկոլաոս Զ-ի խոսքը գահասրահում 6

Հաղորդագրություն 9

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց Պապ և Պատրիարք Նորին Սրբություն Նիկոլաոս Զ-ի այցելությունը Մայր Աթոռ 12

«Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակը 24

ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ՔԵՇԻՇՅԱՆ—Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը Մայր Աթոռում . . 27

Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտինյանը Մայր Աթոռում 29

Հայրապետական բարձր գնահատություն 31

Տիրամոր քառասունքը 32

Ճնորհակալական 33

ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ 34

Ձեռնադրություններ ս. Հակոբյանց Մայր տաճարում 36

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՈՒՔՅԱՆ—Հայ հոգևորականի դերը մեր ժողովրդի կյանքում 38

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ—Ծարեցի իշխանազունները Հաղբատ և Սանահին վանքերի առաջնորդներ 43

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ—Հովհաննես Խիլանցի 51

Ա. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ—Քիշնևի հայկական գաղութը և նրա մի քանի եկեղեցական արձանագրությունները 59

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 14/IX 1974 թ.: Ստորագրված է տպագրության 19/XII 1974 թ.:
Տպագրական 4 մամուլ+4 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 771

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1974 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ ՈՒՂՂՎԱԾ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՊ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ՆԻԿՈԼԱՈՍ Զ-ԻՆ

(24 Նոյեմբեր 1974 թ.)

«Զի բարի կամ զի վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սաղմ. ՃԼԲ 1)։

Ձերդ Սրբություն,

Այս լուսավոր զգացումով, մի անգամ ևս ողջունում ենք Ձեր ներկայությունը այստեղ Մայր Աթոռ ս. Էջմիածնում, Հայաստանյայց առաքելական եկեղեցու և հայ քրիստոնեական հավատքի կենտրոնում։

Ճշմարտապես ուրախ ենք, և փառք ենք տալիս Ամենակալ Աստծուն, որ շնորհեց մեզ այս եղբայրական ողջագուրումը այստեղ՝ բազմադարյան ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռում։

Այս պահը պատմական է և հույժ նշանակալից և անկասկած աստվածահաճո, որովհետև առաջին անգամն է, որ Աղեքսանդրիո հունաց օրթոդոքս եկեղեցու Պատրիարքը և Պապը համայն Աֆրիկայի, իր շքախմբով այցի է գալիս ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետին։

Թող Տերը օրհնի մեր այս ողջագուրումը և օգնի ու առաջնորդի մեզ, որ լուսավորված իր սուրբ Ավետարանի լույսով, Իր կամքը կատարենք, մեր մտածումներով և մեր ձեռաց գործերով։

Մեզ համար ի մասնավորի թանկագին է Աղեքսանդրիո ձեր պատմական Աթոռը, սուրբ Մարկոսի առաքելական Աթոռը, զորավորագույն սյուներից մեկը համայն քրիստոնյա աշխարհի, որ այնքան բախտորոշ դեր է կատարել անցյալում, մանավանդ իր մեծահռչակ եկեղեցական հայրերով, ինչպես Կղեմեսը, Որոգինեսը, սուրբ Գրիգոր Սքանչելագործը և ապա Մեծն Աթանասն ու սուրբ Կյուրեղը։ Չենք կարող չհիշել նաև, թե Աղեքսանդրիայում է, որ 2-րդ դարում հիմնվեց ու զարգացավ առաջին քրիստոնեական դպրության կենտրոնը, բառի գիտական իմաստով, կենտրոն, որի գիտության լույսը 4-րդ և 5-րդ դարերում հասավ նաև Հայաստան աշխարհ։

Եվ հակառակ պատմության հաճախ ողբերգական պատահարների և աճռելի նահատակությունների, ձեր Աթոռը շարունակել է իր առաքելությունը մինչև մեր օրերը, երբ կյանքի նոր պայմաններում, հավատարիմ իր փառավոր ավանդությանց, նա մնում է ջահակիրներից մեկը արևելյան ուղղափառ եկեղեցիների մեծ ընտանիքի:

Խորապես գնահատելով Ձեր Աթոռի անցյալի մեծ ծառայությունը և ներկա օրերի առաքելությունը, աղոթում ենք, որ Տերը անսասան պահի ձեր եկեղեցին իր նոր սպասավորներով ու հավատացյալ ժողովրդով, և Ձերդ Սրբության պարգևի հովվապետական գործունեության երկար տարիներ՝ եկեղեցաշեն փայլուն իրագործումներով:

Ձերդ Սրբություն, քրիստոնեական եկեղեցիները մեր օրերին, առաջնորդված սուրբ Հոգով և ճշմարիտ ավետարանական ոգով, ընթանում են եղբայրական փոխադարձ սիրո և հարգանքի ճանապարհով, համերաշխ գործակցության ճանապարհով, նպատակ ունենալով հետզհետե ամրապնդել աշխարհի համաքրիստոնեական եղբայրությունը և կենսագործել նրա լիակատար միությունը Քրիստոսի սիրույն մեջ:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին գիտակցությունը ունի սույն տիրավանդ հրամայականի և այդ գիտակցությամբ է, որ բարի եռանդով ու լավատեսությամբ մասնակցում է էկումենիկ շարժմանը իբրև անդամ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ու ջանք չի խնայում՝ մերձենալու, միատեղ աղոթելու և միատեղ գործելու քույր եկեղեցիների հետ, բոլորի հանդեպ նույն սիրով և նույն հարգանքով:

Մեր եկեղեցին, իբրև Արևելքի հին եկեղեցիներից մեկը, հարազատության զգացում ունի հատկապես օրթոդոքս եկեղեցիների մեծ ընտանիքի հանդեպ, որին այնքան մոտ է իր հավատքի խոստովանությամբ, իր սուրբ խորհուրդներով, իր ավանդություններով: Եվ որոշ դավանաբանական բանաձևումների տարբերությունները, որոնք ժառանգել ենք հեռավոր անցյալից, անշուշտ որ այսօր մենք արգելք չենք նկատում, որ մեր եկեղեցիները ընթանան ու գործակցեն էկումենիկ ոգով և հավատան ապագայի առավել լիակատար միության: Մենք վստահ ենք, թե նույն սուրբ Հոգին, որ առաջնորդում է մեզ բոլորիս էկումենիկ ճանապարհի վրա, պիտի առավել լուսավորի եկեղեցիները, որ նրանք գտնեն ամենաերջանիկ բանաձևումները լիակատար միության, բանաձևումներ, որոնք լինեն իրոք՝ Աստծուն հաճելի և ողջունելի բոլոր քրիստոնյաների համար, բանաձևումներ, որոնք ապահովեն քրիստոնեական հավատքի հիմնական ճշմարտությունները միայն, առանց սահմանափակելու ազատությունը աստվածաբանական մտածողության, հարգելով ու պահպանելով պատմականորեն զարգացած ազգային եկեղեցիների նկարագիրը, մշակույթն ու հոգեբանությունը, և անխախտ պահելով նրանց նվիրապետական ինքնագլուխ ու ինքնավար դարավոր կարգը: Մեր կարծիքով, դեռևս բավական երկար ճանապարհ ունենք անցնելու, և հանգրվան առ հանգրվան առաջանալու, հասնելու համար լիակատար միության ըղձալի նավահանգստին: Մինչ այդ, պարտավոր ենք անձանձրույթ աղոթել, որ առավել ու առավել աճի և ջերմանա եղբայրական սերը մեր եկեղեցիների և անձամբ մեր հոգևորականներիս միջև, որովհետև սերը ամենահաղթ է և անկարելին իսկ կարելի դարձնող: Որովհետև սերը «ամենայնի տևէ, ամենայնի հաւատայ, ամենայնի յուսայ, ամենայնի համբերէ: Սէր ոչ երբեք անկանի» (Ա Կորնթ. ԺԳ 7):

Ձերդ Սրբություն, մեր օրերին, համայն աշխարհը կանգնած է իր բազմահազարամյա պատմության մի բախտորոշ հանգրվանի առաջ, երբ ավելի քան երբեք մարդկության առաջ դրվում է լինելու կամ չլինելու հարցը: Կարծում ենք, թե այս իրադրությունը բոլորիս այնքան պարզորոշ է և հստակ, որ հարկ չկա այստեղ այն ապացուցելու: Եվ, եթե այս է իրողությունը, ապա հստակ պետք է լինի նաև մեզ քրիստոնյաներիս, հատկապես եկեղեցիների պատասխանատու ղեկավարներիս պարտականությունը, այն է, ջերմ եռանդով աղոթել ու գործել խաղաղության, ազգությունների բարեկամության և պետությունների համերաշխ գործակցության համար, որովհետև մեր Աստվածը խաղաղության Աստված է:

Մենք հաստատում ենք, թե Քրիստոսի անունով գործող եկեղեցիները, մեր օրերում, ամեն բանից առաջ պարտավոր են հանդես գալ իրենց բոլոր ոգեկան ուժերով իբրև հավատարիմները Քրիստոսի խաղաղության պատգամի, ներկա աշխարհում այն կյանքի կոչելու վճռականությամբ:

Սպասելի է, որ միջեկեղեցական համաշխարհային էկումենիկ շարժումը ևս առաջին հերթին առավել հետևողականությամբ ծառայի նույն ավետարանական պատգամի կենսագործմանը: Ամեն բանից առաջ, ատոմական մեր դարաշրջանում, պետք է ապահովել խաղաղ ու արդար գոյակցությունը պետությունների և ազգությունների, պետք է վերջնապես ազատել մարդկությանը պատերազմների արհավիրքներից, ավելի ճիշտ ասած, նրա իսպառ բնաջնջումից: Ինչ վերաբերում է մեր եկեղեցուն, նա, ռուսաց պրավոսլավ մեծ եկեղեցու, Սովետ Միության մեջ գործող մյուս քրիստոնեական եկեղեցիների և այլ կրոնական կազմակերպությունների հետ միասնաբար, աշխատում է իր պարտքը ի կատար ածել իր բոլոր ուժերով:

Մենք մխիթարված ենք նաև, որ մեր պետությունը, Սովետական Միությունը, անշեղորեն գործում ու անընդհատ պայքար է մղում ի պաշտպանություն աշխարհի խաղաղության սրբազան դատի:

Մեր ողջագուրման այս պատմական առիթը կամենում ենք օգտագործել, եղբայրական սիրով կոչ անելու Ձերդ Սրբության և մեր բոլոր քույր եկեղեցիներին, անձանձրույթ աղոթելու համայն աշխարհի խաղաղության, բոլոր ազգերի ու բոլոր պետությունների խաղաղ գոյակցության համար:

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր Մեր ի Քրիստոս, Ձեր այս պատմական այցելությամբ Դուք հոգեկան մխիթարություն բերեցիք մեր Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, մեր հավատացյալ ժողովրդին ու նաև անձամբ Մեզ:

Ընդունեցեք Մեր շնորհակալությունը, Մեր հարգալից սերը և Մեր սրտից բխած ամենաբարի մաղթանքները Ձեր քաջառողջության, Ձեր արևշատության և ձեր սուրբ Աթոռի անսասանության համար:

«Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» այժմ և հավիտյան. ամեն:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՆԻԿՈՂԱՈՍ Զ-Ի ԽՈՍՔԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

(24 Նոյեմբեր 1974 թ.)

Զերդ Սրբություն,

Հանուն Տիրոջ և Աստծո և Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի, որը ապաստումն է մեր հավիտենական կյանքի, Զերդ Սրբության, հայկական ուղղափառ եկեղեցու հարգարժան նվիրապետության, սրբազան կղերին և ձեր եկեղեցու բարեպաշտ հոտին և ձեր ժողովրդին հղում եմ սբ. Մարկոսի ավետարանական գահի առաքելական եկեղեցու օրհնությունը:

Հայոց քույր եկեղեցին, ինչպես նաև նրա բարեպաշտ Գլուխը՝ Զերդ Սրբությունը, մեզ անծանոթ չեն. առավել ևս անծանոթ չեն իրար մեր եկեղեցիների աստվածասեր ժողովուրդները՝ հելլենները և հայերը:

Մենք, Սրբազան Եղբայր, բազմիցս հանդիպել ենք միջեկեղեցական ժողովներում, և Ձեր անձը մեր հոգում ծնել է առանձին հարգանքի և եղբայրական սիրո զգացում դեպի Ձեզ: Ձեր և հայ եկեղեցու հանդեպ մեր զգացումների ապացույցը մեր և մեր ուղեկիցների՝ Աքսիումի միտրոպոլիտ սրբազան Մեթոդիոսի և Նիկոպոլսի աստվածասեր եպիսկոպոս Իրինեոսի ներկայությունն է այստեղ: Մեր ներկայությունը հայ եկեղեցու և հայ ժողովրդի կենտրոնում՝ սբ. Էջմիածնում, որտեղ մարտիրոսացել են հայ եկեղեցու սրբերը, ապացույցն է մեր ընդհանուր հավատի վերարծարծման և նրա վերանորոգման համար երկուստեք գոյություն ունեցող ցանկության:

Ս. Գիրքը, Սրբազան Եղբայր, մեզ տեղափոխում է այն դեպքերին, որոնք, Ծննդոց Գրքի համաձայն, տեղի են ունեցել Արարատ լեռան վրա, որտեղ փրկվել է Նոյի տապանը: Այս կետից վերսկսվեց կյանքը և զարգացավ ամբողջ երկրի վրա:

Հայաստանը եղել է առաջին թագավորություններից մեկը, որոնք ընդունեցին քրիստոնեությունը և զարգացրին եկեղեցական այն հայտնի ճարտարապետությունը, որից առաջացավ գոթականը:

Հերոսական ժողովուրդ ունեցող քաղաքակրթության և քրիստոնեական եկեղեցու այս կենտրոնը մենք գալիս ենք որպես սիրելի եղբայրներ ի Տեր՝ ներկայացնելով եղբայր ժողովուրդների, որոնք թեև շատ տառապեցին դարերով, սակայն դարձան հայտնի ամբողջ աշխարհին մատուցած իրենց պայծառ ծառայություններով:

Իրենց դարավոր ու փառավոր պատմության ընթացքում հայերը սերտ համերաշխության մեջ են եղել հույների հետ, և հազիվ թե հնարավոր լինի գտնել որևէ ժամանակաշրջան, երբ այս երկու ժողովուրդները գործակից չեն եղել:

Դեռևս Հերոդոտը վկայում է Հայաստանի վարչակարգի և երկրի անասնապահության զարգացման մասին: Քսենոֆոնը նկարագրում է Հայաստանը որպես ընդարձակ և հարուստ երկիր: Հելլենիզմի մեծ արտելքը Աղեքսանդր Մեծի միջոցով հայերին մոտեցրեց հելլենական կենտրոններին և երկու ժողովուրդների համագործակցությունը, ինչպես վկայում են հելլեն մատյանները, տարածվեց մարդկային գործունեության բազում ոլորտներում:

Բայց ամեն ինչից առավել մենք այժմ հիշում ենք Հայաստանի արևմտյան հատվածը, որտեղ Մեծն Աղեքսանդրի ժառանգների օրոք հաստատվեցին հայտնի գաղատացիք, որոնց ուղղել է իր կարևորագույն թղթերից մեկը հեթանոսների առաքյալ ս. Պողոսը: Դեռևս իր ժամանակին հելլեն աշխարհագրագետ Ստրաբոնը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել Հայաստանի մասին, որոնց համաձայն հայոց արքունիքը անպայման գիտեր հունարեն, որով նախքան հայ գրերի գյուտը, հաճախ հրապարակվում էին մատյանները, կրոնական երկերը և պետական հրամանները: Հանրահայտ է, որ մեր երկու ժողովուրդների հաղորդակցությունը եղել է սերտ և տևական:

Քրիստոնեությունը մեր ժողովուրդներին առավել մոտեցրեց իրար: Հելլենական Անտիոքը եղել է մեր ժողովուրդների կապի կենտրոնը, նախքան Գրիգոր Լուսավորիչը, որը և 302 թ. եպիսկոպոս ձեռնադրվեց Կեսարիայի հույն եպիսկոպոս Ղևոնդիոսի կողմից:

Դուք գիտեք, Սրբազան Եղբայր, թե մեր եկեղեցին ս. Գրիգորի հիշատակը տոնում է սեպտեմբերի 30-ին և պատվում նրան որպես մեծափառ քահանայապետ, համաշխարհային լուսատու, անտուն հովիվ և ուսուցիչ:

Քրիստոնեությունը, Սրբազան Եղբայր ի Քրիստոս, իր հետևորդներին մոտեցրեց իրար: Միացրեց նրանց խղճերը ու դարձրեց նրանց մի Տիրոջ մարմնի անդամները, Տիրոջ, որն ասաց. «Ով ճաշակի իմ մարմինը և ըմպի իմ արյունը, կմնա իմ մեջ և ես՝ նրա մեջ»: Աստվածային այդ շնորհներին հաղորդակցվելով, մենք հաղորդակից ենք լինում Քրիստոսի թագավորությանը: Այս է ճշմարտությունը, որը կազմում է մեր հավատի հիմքը. այսուհանդերձ, մենք մասնակից չենք միևնույն սեղանին և չենք հաղորդվում միևնույն գավաթից: Մենք ուրախ կլինենք, եթե մեր այստեղ գտնվելու ընթացքում արդյունավետ զրույցներ ունենանք, որոնք նպաստեին մեր եկեղեցիների միավորման և այդ միավորմամբ՝ մեր հավատի գանձի ավելացման:

Ուստի մեր խոսքը եզրափակենք սուրբ վկա և Մեծ Հայքի լուսավորիչ ս. Գրիգորի կոնդակով ու այն հատվածով, որոնցով հույն եկեղեցին մեծարում է հայոց եկեղեցու սրբին:

«Հավատացյալներ. սուրբ երգերով և շարականներով փառաբանենք այսօր որպես մարտիկ ճշմարտության գերապայծառ Քահանայապետին, արթուն հովվին և ուսուցչին. Գրիգորիոսին, տիեզերական լուսատուին. քանզի նա միջնորդ է Քրիստոսի առաջ մեր փրկության համար:

Հավատացյալներ. այս մեծ պսակավորի, աստվածային լուսատուի, Հայաստանի հովվի և առաջամարտիկի հիշատակը փառաբանենք աստվածաշունչ երգերով. քանզի նա հեռացրեց սին կուռքերի խավարը և ոչնչացրեց դևերի ներգործությունը: Տառապանքները նա տարավ կայուն ոգով ու շնորհով և միջնորդում է Քրիստոսի առաջ մեր փրկության համար:

Մանոթ էիր «արթուն կացէք» Տիրոջ խոսքին.

Երբ Աստված կոչեց, դու, Հայր, արթուն հայտնվեցիր:

Ու Մեծ Հայքի Գրիգորիոսը վախճանվեց երեսուներորդ օրը»:

Ամեն:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ Տ. ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ԾՐԱԳՊԱՏՎԱԾ ՀԱՅ, ՌՈՒՍ
ԵՎ ՀՈՒՅՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Առաջինի եղբայրական հրավերով Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց Պապ և Պատրիարք Նորին Ամենապատվություն Նիկոլաոս Զ-ը 1974 թվականի նոյեմբերի 19—26-ը պաշտոնական այցելություն տվեց Մայր Աթոռ սուրբ Էջմիածին:

Սրբազան Պատրիարքին ուղեկցում էին գերաշնորհ տ. Մեթոդիոս Աքսիումի միտրոպոլիտը և գերաշնորհ տ. Իրինեոս Նիկոպոլսի եպիսկոպոսը:

Այս առթիվ մասնավոր հրավերով Մայր Աթոռ էր ժամանել նաև ռուս պրավոսլավ եկեղեցու Կիևի էկզարխ գերաշնորհ Ֆիլարետ միտրոպոլիտը՝ իբրև ներկայացուցիչը Նորին Սրբություն Տ. Պիմեն ռուսաց Պատրիարքի:

Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ էին ժամանել Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի Փարիզի փոխանորդ տ. Գյուտ եպիսկոպոս Նագաշյանը:

Բարձրաստիճան հյուրերի այցելության առիթով Մայր Աթոռում էին գտնվում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը, Ադրբեջանի թեմի առաջնորդ տ. Վահան եպիսկոպոս Տերյանը, Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը և վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը:

Նոյեմբերի 19-ին Երևանի օդանավակայանում հայրենադարձաց հյուրերին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը՝ շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով:

Ալեքսանդրիայի եկեղեցու Սրբազան Պատրիարքին օդանավակայանում դիմավորեց նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Սուրեն Հովհաննիսյանը:

Երկու Հայրապետները, շրջապատված իրենց հետևորդներով, հանդիսավոր շքերթով մուտք գործեցին Մայր տաճար և ողջագուրվեցին Փրկչի Իջման սուրբ սեղանի առաջ:

Նոյեմբերի 23-ին երկու Հովվապետները Մայր տաճարում ներկա եղան կիրակամտի երեկոյան ժամերգությանը, որից հետո տեղի ունեցավ համատեղ էկումենիկ աղոթք:

Նոյեմբերի 24-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետը մատուցեց ս. պատարագ, որի ընթացքում փոխանակվեցին ողջույնի խոսքեր երկու Հայրապետների միջև Մայր տաճարում և ապա Վեհարանի գահասրահում:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը Հայոց Հայրապետի կողմից տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի բարձրաստիճան հյուրերի:

Նոյեմբերի 22-ին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը «Արմենիա» հյուրանոցում Նիկոլաոս Զ Սրբազան Պատրիարքի և նրա շքախմբի անդամների պատվին տվեց պաշտոնական ճաշկերույթ:

Նույն օրը, երեկոյան, երկու Հայրապետները ներկա եղան հոգևոր ճեմարանում ի պատիվ հյուրերի կազմակերպված ուսանողական հանդեսին, որի ընթացքում ճեմարանի ուսանողությանն ուղղված ջերմ ողերձով հանդես եկավ տ. Նիկոլաոս Զ Պատրիարքը:

Մայր Աթոռում գտնվելու օրերին մեծարգո հյուրերը այցելեցին Մայր տաճարի և Հին Վեհարանի թանգարանները, Վաղարշապատի պատմական վանքերը՝ ս. Հռիփսիմե և ս. Գայանե, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, սուրբ Գեղարդի վանք, Զվարթնոցի ավերակներ, Գառնիի հեթանոսական տաճար, ս. Մեսրոպի շիրիմ Օշականում, Խորվիրապի վանք և Եղեռնի հուշարձան, ուր բարձրաստիճան հյուրերը ծաղկեպսակ դրեցին և աղոթեցին հայ նահատակաց հոգիների համար:

Նոյեմբերի 25-ին, առավոտյան, Վեհարանում տեղի ունեցավ մասնավոր տեսակցություն Վազգեն Ա Հայրապետի և Ալեքսանդրիայի Նիկոլաոս Զ Պատրիարքի միջև:

Այս առթիվ երկու եկեղեցիների ներկայացուցիչների միջև տեղի ունեցած մտքերի փոխանակման ընթացքում հաստատվեց, որ երկու եկեղեցիները գիտակցում են, թե սկզբից ևեթ հույն օրթոդոքս եկեղեցին և Հայաստանյայց առաքելական եկեղեցին պահել են և մինչև օրս էլ շարունակում են պահել եղբայրական փոխադարձ հարգանք միմյանց նկատմամբ, որ նրանք հավատարիմ են մնացել նույն հավատքի խոստովանությանը, պահպանել են նույն խորհուրդները ու առաքելական հաջորդականությունը, զարգացրել են իրենց աստվածաբանական մտածողությունը, իրենց ուրույն լեզուներով ու մշակույթով՝ յուրաքանչյուրը պահելով իր ինքնավար և ինքնագլուխ եկեղեցական կառույցը:

Երկու Հայրապետները քաջալերում են հետզհետե առավել մերձեցումը և աստվածաբանական դիալոգը օրթոդոքս եկեղեցիների և արևելյան հին եկեղեցիների միջև՝ առավել ամրապնդելու համար երկու եկեղեցիների միջև քրիստոնեական եղբայրության և միության ոգին:

Սույն տեսակցության ընթացքում երկու Հայրապետները հաստատեցին նաև, որ խռովահույզ արդի աշխարհում բոլոր քրիստոնյա եկեղեցիների սեպուհ պարտքն է՝ գոհացում տալ մեր ժամանակների այժմեական հարցերին, այն է՝ հանգցնել պատերազմի օջախները, պահպանել և ամրապնդել աշխարհի խաղաղությունը և կենսագործել եղբայրությունը, բարեկամությունը և սոցիալական արդարությունը ժողովուրդների միջև:

Նրանք անհրաժեշտ գտան, որ եկեղեցիները պետք է շարունակեն որոնել այն ուղիները, որոնք ամրապնդում են ազգությունների և պետությունների միջև խաղաղ գոյակցությունը և համերաշխ գործակցությունը՝ այսպիսով աշխարհի առաջ վկայելով իրենց սերը և հավատարմությունը Քրիստոսի Ավետարանի հանդեպ:

Սուրբ Էջմիածնում, սույն պատմական հանդիպման առթիվ, երկու Հովվապետները հղում են իրենց եղբայրական սիրո ողջույնները օրթոդոքս և արևելյան հին եկեղեցիներին, ինչպես նաև բոլոր քրիստոնեական եկեղեցիների պետերին և հույս հայտնում տեսնելու վերահաստատումը եկեղեցիների միության Քրիստոսի սիրո մեջ:

Սույն հաղորդագրությունը խմբագրվեց և ստորագրվեց սուրբ Էջմիածնում 1974 թվականի նոյեմբերի 25-ին:

ՆԻԿՈԼԱՈՍ Զ
ՊԱՊ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ
ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՀՈՒՆԱՑ ՊԱՊ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՆԻԿՈՂԱՈՍ Զ-Ի ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

ԺԱՄԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի եղբայրական հրավերով սույն թվականի նոյեմբերի 19-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 19-ին, Մայր Աթոռ ժամանեց Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք **Նիկոլաոս Զ-ը:**

Սրբազան Պատրիարքին ուղեկցում էին Աքսիումի **տ. Մեթոդիոս միտրոպոլիտը** և Նիկոպոլսի **տ. Իրինեոս եպիսկոպոսը:**

Այս առթիվ մասնավոր հրավերով Մայր Աթոռ էր ժամանել նաև Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ և Ուկրաինայի էկզարխ **տ. Ֆիլարետ միտրոպոլիտը՝** իբրև ներկայացուցիչը Տ. Պիմեն ողորմած Պատրիարքի:

Դարձյալ այս առթիվ Վեհափառ Հայրապետի հրավերով նախապես Մայր Աթոռ էին ժամանել Ռումինիայի և Բողդարիայի հայոց առաջնորդ **տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը** և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի Փարիզի փոխանորդ **տ. Գյուտ եպիսկոպոս Նագաշյանը:**

Քույր եկեղեցու բարձրաստիճան հյուրերի այցելության առիթով Մայր Աթոռում էին գտնվում նաև Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ **տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը,** Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ **տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը,** Ադրբեջանի թեմի առաջնորդ **տ. Վահան եպիսկոպոս Տերյանը,** Շիրակի թեմի առաջնորդ **տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը** և վրահայոց թեմի առաջնորդ **տ. Գեվորգ եպիսկոպոս Սերայդարյանը:**

Նոյեմբերի 19-ին, երեկոյան, Երևանի օդանավակայանում հարգարժան հյուրերին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց **Ամենայն Հայոց Վեհափառ**

Հայրապետը՝ շրջապատված հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներով և Մայր Աթոռի պատասխանատու աշխատակիցներով:

Հարգարժան հյուրերին օդանավակայանում դիմավորեց և բարի գալուստ մաղթեց Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. **Սուրեն Հովհաննիսյանը:**

Հուզիչ էր հայոց աշխարհում, ս. Գրական այս հողի վրա, պատմության մեջ առաջին անգամ լինելով, հայ եկեղեցու Գերագույն Պետի և Ալեքսանդրիայի ս. Մարկոսի պատմական Աթոռի Գահակալի ու նրանց շքախմբի անդամների հանդիպումն ու ողջագուրումը:

Օդանավակայանից երկու Հայրապետները հանդիսավոր շքերթով և պատվո ավտոմեքենաների շարասյունով ուղևորվեցին դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածին:

Մայր տաճարի զանգերը հնչում են տոնականորեն: Մայր տաճարի գլխավոր մուտքի առաջ լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը և վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը, ի գլուխ Մայր Աթոռի միաբանության, դիմավորեցին երկու Հովվապետներին, որոնք «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Մայր տաճար՝ հավատացյալ բազմության խանդավառ արտահայտությունների ներքո:

Իջման ս. սեղանի առաջ երկու Հայրապետները, ծնրադիր, միասին աղոթեցին և մի անգամ ևս ողջագուրվեցին ի Քրիստոս եղբայրական սիրո համբույրով:

Այնուհետև երկու Հայրապետները եկեղեցական թափորով առաջնորդվեցին Վեհարան, ուր տեղի ունեցավ ջերմ ու սրտագին զրույց երկու Հովվապետների և նրանց շքախմբի անդամների միջև:

Ժամը 21-ին Վեհարանի սեղանատանը, ի պատիվ թանկագին հյուրերի, տրվեց բարիգալստյան ճաշկերույթ, որից հետո հունաց Սրբազան Պատրիարքը իր շքախմբով ուղևորվեց Երևան, «Արմենիա» հյուրանոց:

ՀՅՈՒՐԵՐԸ ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ԵՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԻՆ

Նոյեմբերի 20-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, **Տ. Նիկոլաոս Զ Պատրիարքը** իր շքախմբով ժամանեց Մայր Աթոռ և տեսակցություն ունեցավ **Հայոց Հայրապետի** հետ:

Ժամը 11.30-ին Հայոց Հայրապետի առաջնորդությամբ հյուրերը այցելեցին Վեհարանի դահլիճները, ապա Մայր տաճար, եկեղեցական արվեստի թանգարան, Հին Վեհարան և ծանոթացան Մայր տաճարի եկեղեցական արվեստի թանկարժեք նմուշներին:

Ժամը 13-ին հյուրերը այցելեցին Վաղարշապատի պատմական վանքերը՝ ս. Հռիփսիմե, ս. Գայանե, ապա Զվարթնոցի ավերակները:

Ժամը 14.30-ին երկու Հայրապետները իրենց շքախմբի անդամներով ճաշեցին Ղազարապատի վերջերս վերակառուցված միաբանական սեղանատանը:

Ժամը 17.30-ին Տ. Նիկոլաոս Պատրիարքը իր հետևորդներով այցելեց Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին, որը այժմ նորոգության մեջ է: Եկեղեցու քահանայից դասը, հավատացյալ բազմության մասնակցությամբ, Սրբազան Պատրիարքին դիմավորեց և առաջնորդեց դեպի խորան,

ուր Սրբազան Պատրիարքը իր աղոթքը կատարեց և օրհնեց հավատացյալներին:

Տ. Ռուբեն ավագ քահանա Մարտիրոսյանը անհրաժեշտ բացատրություններ տվեց եկեղեցու պատմության և ներկայումս կատարվող վերանորոգչական աշխատանքների մասին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 21-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, երկու Հայրապետները իրենց շքախմբի անդամներով այցելեցին Երևանում ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, որի շքամուտքի առաջ Մատենադարանի տնօրեն պրոֆ. Լևոն Խաչիկյանը, շրջապատված հաստատության պատասխանատու և գիտական աշխատակիցներով, ջերմորեն դիմավորեց և բարի գալուստ մաղթեց թանկագին այցելուներին: Երկու Հովվապետները և իրենց ուղեկիցները, հսկայի տնօրենի առաջնորդությամբ, ծանոթացան Մատենադարանի զանազան բաժիններին և այստեղ պահվող հայ գրչության հնագույն և գեղեցկագույն նմուշներին:

Հունաց Պատրիարքը և նրա շքախմբի անդամները մեծ հետաքրքրությամբ ծանոթացան Մատենադարանում գուրգուրանքով և խնամքով պահվող հունական մշակույթին, փիլիսոփայությանը, պատմությանը և արվեստին վերաբերող ձեռագրերին, որոնք հայ և հույն ժողովուրդների մշակութային և հոգևոր սերտ կապերի պայծառ վկայությունն են հանդիսանում:

Ժամը 12-ին Տ. Նիկոլաոս Պատրիարքը իր շքախմբով և հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների ընկերակցությամբ այցելեց ս. Գեղարդ պատմական վանք:

Հայ հոգևոր մշակույթի կենտրոն հանդիսացող այս հռչակավոր վանքի մեծ դարպասի առաջ հունաց Սրբազան Պատրիարքին աղ ու հացով դիմավորեցին տ. Պարգև, տ. Նարեկ եպիսկոպոսները, վանքի վանահայր տ. Դանիել վարդապետ Շամլյանը, վանքի միաբանությունն ու պաշտոնեությունը և բազմաթիվ ուխտավորներ:

Հարգարժան հյուրերը վանքի զանգերի զվարթ ղողանջի ներքո առաջնորդվեցին ժայռափոր հնադարյան տաճարից ներս, ուր կատարեցին իրենց աղոթքը և ուխտը: Մեծարգո հյուրերին պատմական մանրամասն տեղեկություններ տրվեցին տ. Վահան և տ. Նարեկ եպիսկոպոսների կողմից վանքի պատմության, ճարտարապետական-կառուցողական արվեստի մասին:

Վանական հյուրասրահում ս. Գեղարդ վանքի միաբանության կողմից ջերմորեն հյուրասիրվելուց հետո, Տ. Նիկոլաոս Պատրիարքը հրաժեշտ տվեց՝ օրհնելով վանահորն ու միաբանության անդամներին, և մեկնեց լավագույն տպավորություններով:

Դեպի Երևան վերադարձի ճանապարհի վրա Մայր Աթոռի թանկագին հյուրերը այցելեցին Գառնիի վերականգնվող հեթանոսական տաճար, որը Հայաստանում հելլենիստական շրջանից մնացած առաջին դարի միակ և մեծարժեք բարձրարվեստ հուշարձանն է: Այստեղ հյուրերին տաճարի կառուցման, պատմության մասին սպառիչ տեղեկություններ տվեց վերականգնման աշխատանքները ղեկավարող հնագետ և ճարտարապետական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս Ալ. Սահինյանը:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ
(1974 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25)

ԱՂՈԹՔ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Նոյեմբերի 22-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, հայ և հույն եկեղեցիների հոգևոր պետերը իրենց շքախմբերով այցելեցին Երևանի Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան: Հանուն հույն օրթոդոքս եկեղեցու, ծաղկեպսակներ դրվեցին հայ նահատակաց հուշարձանին: Այնուհետև տեղի ունեցավ հոգեհանգստյան մասնավոր կարգ ու աղոթք՝ 1915 թվականի Ապրիլյան եղեռնին զոհված հայ նահատակների հիշատակին:

ԱՅՑ Ս. ՄԵՍՐՈՊԻ ՇԻՐՄԻՆ

Նույն օրը, ժամը 11-ին, Տ. Նիկոլաոս Սրբազան Պատրիարքը իր շքախմբի անդամների և հայ բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ այցելեց Օշականում ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզման և երկյուղած բարեպաշտությամբ խոնարհվեց հայ եկեղեցու մեծ երախտավորի ու սրբի շիրմի առաջ՝ սրտաբուխ աղոթքով օրհնելով հիշատակը հայ դպրության հիմնադրի և անխոնջ մշակի: Այստեղ ևս Սրբազան Պատրիարք Հորը բացատրություններ տրվեցին վերջին տարիներում վերանորոգչական աշխատանքների և եկեղեցու արևմտյան, հարավային և հյուսիսային պատերի վրա կատարված որմնանկարների մասին, նկարներ, որոնք վերաբերում են Ե դարի սկզբին ս. Սահակի, ս. Մեսրոպի և հայոց Վռամշապուհ թագավորի օրով Հայաստանում կատարված մշակութային-կրթական իրադարձություններին:

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՇԿԵՐՈՒՑԹ Ի ՊԱՏԻՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՀՈՒՑՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Ժամը 15-ին Երևանում, «Արմենիա» հյուրանոցի կապույտ դահլիճում, Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար **Սարգիս Գասպարյանը,** ի պատիվ Մայր Աթոռի բարձրաստիճան հյուրերի, տվեց պաշտոնական ճաշկերույթ:

Ընդունելությանը ներկա էին **Հայոց Հայրապետը,** Ուկրաինայի էկզարխ **տ. Ֆիլարետ միտրոպոլիտը,** հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և Մայր Աթոռի պատասխանատու աշխատակիցները:

Ընդունելությանը ներկա էին նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար **Սուրեն Հովհաննիսյանը,** խորհրդի անդամներ՝ ակադեմիկոս **Բաբկեն Առաքելյանը** և **Մանվել Բաբլոյանը:**

Սեղանը ղեկավարեց պրն. Սարգիս Գասպարյանը, որը Հայաստանի կառավարության, եկեղեցական խորհրդի ու անձամբ իր անունից ջերմորեն բարի գալուստ մաղթեց Հայոց Հայրապետին, Մայր Աթոռի մեծարգո հյուրերին և բոլոր ներկաներին:

Պրն. Սարգիս Գասպարյանը առաջին բաժակը բարձրացրեց Ալեքսանդրիայի հունաց Պատրիարքի և նրա շքախմբի անդամների կենացը՝ իր խոսքի մեջ վեր հանելով հայ և հույն ժողովուրդների մշակութային դարավոր կապերը անտիկ շրջանից մինչև մեր օրերը:

Այնուհետև պրն. Գասպարյանը ողջունեց ներկայությունը Ուկրաինայի էկզարխ տ. Ֆիլարետ միտրոպոլիտի՝ կանգ առնելով ուկրաինացի և հայ ժո-

ղովուրդների ու եկեղեցիների վաղեմի բարեկամության և մշակութային հարաբերությունների վրա, հարաբերություններ, որոնք առավել զարգացան և ամրապնդվեցին սովետական իշխանության տարիներին:

Պատասխան շնորհակալության խոսքով հանդես եկավ Տ. Նիկոլաոս Զ Պատրիարքը, որը նախ իր անկեղծ շնորհակալությունը հայտնեց Հայոց Հայրապետին՝ ս. Էջմիածին այցելության հրավերի, ցույց տրված եղբայրական հյուրասիրության համար, ինչպես նաև, ի դեմս պրն. Գասպարյանի, Հայաստանի կառավարությանը՝ իրենց պատվին կազմակերպված սույն ընդունելության համար: Սրբազան Պատրիարքը այնուհետև կանգ առավ հայ և հույն մշակույթների և եկեղեցիների պատմական հարաբերությունների վրա՝ շեշտելով, որ մեր օրերում բարեբախտություն է, որ եկեղեցիները մոտենում են միմյանց, հոգևոր պետերի և եկեղեցական պատվիրակությունների փոխայցելություններ են կատարվում՝ միմյանց ավելի մոտիկից ճանաչելու և համագործակցելու համար:

Ապա Սրբազան Պատրիարքը հաջողություն մաղթեց հայրենիքում իր ազգային-եկեղեցական վերածնունդը ապրող հայ ժողովրդին, ինչպես նաև բարգավաճում և բարօրություն՝ հայրենյաց:

Ողջույնի և շնորհակալության խոսքով հանդես եկավ նաև Տ. Պիմեն Պատրիարքի ներկայացուցիչ տ. Ֆիլարետ միտրոպոլիտը, որն ընդգծեց հայ և ռուս եկեղեցիների և ի մասնավորի հայ և ուկրաինացի ժողովուրդների ու նրանց մշակույթների կապն ու պատմական հարաբերությունները, հարաբերություններ, որոնք մեր օրերին սովետական իշխանության ստեղծած խաղաղ ու բարօր պայմաններում է՛լ ավելի ընդարձակվեցին ու խորացան:

Իր խոսքի մեջ տ. Ֆիլարետ միտրոպոլիտը, որպես վկայություն իր արտահայտությունների, հայտնեց, որ վերջերս Կիևում, ս. Սոֆիա Մայր տաճարում, հայտնաբերվել է մի հին հայերեն արձանագրություն, որը պատմական մի նոր ապացույց է հայ և ուկրաինացի ժողովուրդների վաղեմի բարեկամության:

Այնուհետև պրն. Սարգիս Գասպարյանը բաժակ առաջարկեց Հայոց Հայրապետի կենացը՝ բարձրորեն գնահատելով Նրա եկեղեցաշեն, հայրենանվեր, խաղաղասիրական գործունեությունը ու շեշտելով նաև Նորին Սրբության եռանդուն ջանքերը միջեկեղեցական հարաբերությունների ամրապնդման:

Հայոց Հայրապետը, խոսք առնելով, ասաց. «Սիրով ընդունեցինք մեր պետական իշխանության ջերմ հրավերը և ներկա եղանք սույն ընդունելությանը Մայր Աթոռի թանկագին հյուրերի հետ միասին՝ գլխավորությամբ Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց Պատրիարք Նիկոլաոս Զ-ի:

Քիչ առաջ երախտագիտությամբ և ուշադրությամբ լսեցինք ջերմ ու բովանդակալից խոսքը մեր պետության ներկայացուցիչ պրն. Ս. Գասպարյանի:

Այս հանդիսավոր առիթով, Մենք, որպես Հայոց Հայրապետ, պարտք ենք զգում Մեր խորին շնորհակալությունը հայտնելու պրն. Ս. Գասպարյանին երկու կարևոր հանգամանքների համար. նախ՝ Մայր Աթոռի թանկագին հյուրերի պատվին այս ճաշկերույթը կազմակերպելու, և երկրորդ՝ իր այնքան ջերմ և ճշմարիտ խոսքերի համար, խոսքեր, որոնք արտասանվեցին մեր քրիստոնեական առաքելության և գործի հաջողության կապակցությամբ:

Մենք խորապես զգացված ենք պրն. Ս. Գասպարյանի և՛ վերաբերմունքից, և՛ գնահատական խոսքերից: Այս հանգամանքը մի անգամ ևս պարզորոշ կերպով ցույց է տալիս այն բնականոն, սիրալիր հարաբերու-

թյունը, որ ստեղծվել է այստեղ, պետության և եկեղեցու միջև: Գուցե ճշմարիտ է հաստատել, որ Մենք երջանիկ կաթողիկոս ենք, և Մեզ է վիճակվել ապրել և գործել վերածնված հայրենիքում և մեր հարազատ ու հավատացյալ ժողովրդի ծոցում, հայրենի պետության ստեղծած օրինավոր ու գործնական նպաստավոր պայմաններում:

Թույլ տվեք ուրեմն բաժակ բարձրացնել մեր հայրենի կառավարության ներկայացուցիչ պրն. Սարգիս Գասպարյանի կենացը ու մաղթել նրան քաջառողջություն և երկար տարիներ՝ եկեղեցու ու պետության հարաբերությունները միշտ այսպես բարվոք վիճակում պահելու համար»:

Ջերմ մթնոլորտում տեղի ունեցած սույն պաշտոնական ճաշկերույթն ավարտվեց Տ. Նիկոլաոս Պատրիարքի աղոթքով:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 22-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին, երկու Հայրապետները իրենց շքախմբերով այցելեցին հոգևոր ճեմարան՝ ներկա լինելու իրենց պատվին կազմակերպված ուսանողական հանդեսին:

Հոգևոր ճեմարանի սաները հանդես եկան արտասանություններով, խմբերգերով, դաշնամուրային մենանվագներով և շարականների երգեցողությամբ:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քահանա Մարուքյանը, հանուն տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության, բարիգալուստյան և ողջույնի հետևյալ խոսքերով դիմեց Ալեքսանդրիայի հուսաց ամենապատիվ Պատրիարքին և նրա շքախմբի անդամներին:

«Հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության համար երջանկություն է նվիրական այս հարկի տակ ընդունել Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հուսաց Նիկոլաոս Զ Պատրիարքին և նրա շքախմբի անդամներին:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը սկիզբ է առել Դ դարից, ս. Գրիգոր Լուսավորչի օրով: Այստեղ է, որ Ե դարում մեր թարգմանիչ վարդապետները Աստվածաշունչը թարգմանել են հայերեն և Ավետարանի լույսը տարածել Հայաստան աշխարհում:

Մեր ժողովուրդը այդ օրվանից իր հոգևոր, մշակութային արժեքների զարգացման, իր հավատքի պահպանման և իր ֆիզիկական գոյատևման համար մղել է բազմաթիվ անհավասար պայքարներ ու տվել անհամար նահատակներ վասն Հիսուսի և հայրենյաց:

Ս. Էջմիածնի հոգևոր կրթական այս հաստատության սաներից շատերը պատմության մեջ սուրբ գրական, գիտական ստեղծագործություններով և հայրենասիրական գործունեությամբ փառավորել են այս հաստատության անունը:

Այսօր Ամենայն Հայոց Հայրապետի՝ Տ. Տ. Վազգեն Ա-ի օրով ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը ապրում է իր զարգացման նոր շրջանը՝ հավատարիմ անցյալի իր հոգևոր, կրթական, դաստիարակչական ավանդներին: Այսօր հոգևոր ճեմարանի շրջանավարտ սաներից շատերը հոգևորականի կոչումով, որպես հովիվներ, Ավետարանի քաջ մշակներ, առաջնորդներ, սպասարկում են հայ եկեղեցուն հայրենի երկրի և սփյուռքի հայ եկեղեցիների մեջ:

Ձերդ Ամենապատվություն, հոգևոր ճեմարանն այսօր ունի 34 սաներ, որից մեկ երրորդը սփյուռքահայ պատանիներ են: Ուսման տևողու-

թյունը վեց տարի է. նրանք պատրաստվում են եկեղեցու ապագա սպասավորներ դառնալու:

Մեր սաները ընդհանուր եկեղեցու պատմությունից և հայ եկեղեցու մատենագրությունից գիտեն քրիստոնեական հավատքի տարածման և ուղղափառության պաշտպանության գործում Ալեքսանդրիայի սուրբ Մարկոսի պատմական Աթոռի և Ալեքսանդրյան քրիստոնեական դպրոցի կատարած մեծ դերի մասին: Ե դարի երկրորդ կեսում հայ եկեղեցու թարգմանիչ վարդապետներից ոմանք, ինչպես մեր պատմահայր Մովսես Խորենացին և ուրիշներ, իրենց աստվածաբանական, փիլիսոփայական, քերականագիտական բարձրագույն կրթությունը ստացան Ալեքսանդրիայում՝ քաջապես տիրապետելով հելլեն լեզվին և դպրությանը:

Անցյալում եկեղեցիների միջև եղել են դավանաբանական բաժանումներ և անհասկացողություններ: Այսօր ժամանակները փոխվել են: Էկումենիկ շարժումը ամեն մի եկեղեցու դուրս է բերել դավանաբանական դոգմաներով սահմանազատված իր շրջագծից, որովհետև Քրիստոս մի է և Նրա հիմնած եկեղեցին ևս մեկ է: Քրիստոսի Ավետարանը այսօր էլ հրամայականորեն մեզ թելադրում է միմյանց մոտենալ, գործակցել Քրիստոսի լույսի տարածման համար, պայքարել հանուն մարդկության գալիք պայծառ ապագայի, հանուն ժողովուրդների խաղաղության և եղբայրության գործի:

Թող միշտ ծաղկեն ու բարգավաճեն Հայաստանյայց առաքելական և Ալեքսանդրիայի օրթոդոքս եկեղեցիները և հավատացյալ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը»:

Հանդեսի ավարտին, տեսչի հրավերով, ճեմարանի ուսանողությանն ուղղված օրհնության խոսք ասաց Տ. Նիկոլաոս Պատրիարքը՝ իր ուրախությունը հայտնելով, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի եղբայրական հրավերով գտնվում է ս. Էջմիածնում, և այժմ առիթ է ընծայվել իրեն լինելու այս հոգևոր-կրթական հաստատության մեջ, ուր պատրաստվում են հայ եկեղեցու և հայ ժողովրդի հոգևոր ծառայությանը կանչված եկեղեցական շնորհալի մշակներ:

Ամենապատիվ Սրբազան Պատրիարքը հուզումով հիշեց իր ուսանողական տարիները հունական հոգևոր ակադեմիաներում, ուր ինքը պատրաստվում էր ապագա իր հոգևոր կոչմանը:

Այնուհետև Սրբազան Պատրիարքը իր օրհնությունը տվեց հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը ու միաժամանակ շեշտեց, որ քրիստոնեական եկեղեցին ներկա ժամանակներում ապրում է իր պատմության կարևոր շրջաններից մեկը, երբ քրիստոնեական բոլոր եկեղեցիները եղբայրաբար համագործակցում են և աշխատում մոռանալ անցյալի բաժանման տխուր պարագաները՝ միահամուռ ձգտելով ի գլուխ բերել Քրիստոսի եկեղեցու ցանկալի միությունը:

«Քրիստոնեական եկեղեցիների կարևոր առաքելություններից մեկն է նաև այսօր,—նշեց Պատրիարքը,—Քրիստոսի Ավետարանը քարոզելու սրբազան առաքելության հետ միասին ամրապնդել համերաշխության ոգին, համագործակցությունը եկեղեցիների միջև: Եթե անցյալում քաղաքական կամ կրոնական որևէ պատճառ կարող էր առիթ հանդիսանալ եկեղեցիների միջև համերաշխության ոգու խափանմանը, ապա այսօր, նման երևույթներ տեղի ունենալ չեն կարող և չպետք է տեղի ունենան»:

Իր օրհնության խոսքի ավարտին ամենապատիվ Տ. Նիկոլաոս Պատրիարքը շեշտեց նաև մեր օրերին Ալեքսանդրիայի իրենց Աթոռի և Մայր Ա-

թոռ ս. Էջմիածնի է՛լ ավելի սերտ գործակցության անհրաժեշտությունը, որպեսզի երկու քույր եկեղեցիները հարատևեն իրենց սրբազան առաքելության մեջ Քրիստոսի եկեղեցու փառքի համար:

Ապա սրբազան Պատրիարքը օրհնեց հոգևոր ճեմարանի հարկի տակ կատարվող հոգևոր, կրթական աշխատանքները: Հանդիսության ժամանակ տեսչի ելույթն անգլերենի էր թարգմանում ճեմարանի ավագ վերակացու Սարգիս սրկ. Սարգսյանը:

ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Նոյեմբերի 28-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Տ. Նիկոլաոս Սրբազան Պատրիարքը իր հետևորդներով ուխտի գնաց Խորվիրապի վանք, որը կառուցվել է ի հիշատակ հայ եկեղեցու մեծ լուսավորչի: Ս. Գրիգոր Լուսավորիչը հայ եկեղեցու առաջին և միակ սուրբն է, որի հիշատակը սեպտեմբեր ամսի 30-ին հանդիսավորապես տոնում են օրթոդոքս բոլոր եկեղեցիները՝ վեր հանելով Հայոց մեծ Հայրապետի լուսավորական-քարոզչական առաքելությունը հայ եկեղեցու կազմակերպման գործում, ծառայություն, որը ներկայանում է քրիստոնեական ընդհանուր եկեղեցում մեծ սրբի և նահատակի լուսապսակով:

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում երկու Հայրապետները ներկա եղան կիրակամտի ժամերգությանը, որը կատարվեց Մայր Աթոռի միաբանների և ճեմարանի ուսանողների մասնակցությամբ:

Տեղի ունեցավ էկումենիկ աղոթք, որին իրենց մասնակցությունը բերին, աղոթքներով և շարականներով, թանկագին հյուրերը: Էկումենիկ այդ աղոթքի մեջ հարազատորեն արտահայտվում էր մեր ժամանակները հատկանշող միջեկեղեցական այն առողջ շարժումը, որը ձգտում է քրիստոնեական եկեղեցիների մերձեցման և եղբայրական համագործակցության Քրիստոսի սիրո մեջ:

Երեկոյան ժամը 20-ին Վեհարանի հանդիսությանց դահլիճում Մայր Աթոռի բարձրաստիճան հյուրերի համար ցուցադրվեց «Ս. Էջմիածին» գունավոր կինոնկարը, որը նվիրված էր 1969 թվականի մյուռոնօրհնության և Վեհափառ Հայրապետի գահակալության 15-րդ տարեդարձի հանդիսություններին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Նոյեմբերի 24-ին, **կիրակի օրը**, Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Հայոց Հայրապետը:

Այսօր տոն է Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հավատացյալ հայ ժողովրդի համար: Առավոտյան ժամը 11-ին **Հայոց Հայրապետը** քահանայապետական լրիվ զգեստավորման մեջ և ընկերակցությամբ Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի **Պատրիարք Նիկոլաոս Զ-ի** ու նրա շքախմբի անդամների և մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության, հանդիսավոր շքերթով ու Մայր տաճարի զանգերի ցնծագին ղողանջների տակ առաջնորդվեց եկեղեցի՝ մատուցելու օրվա հանդիսության առթիվ քրիստոնեական եղբայրության ս. պատարագը:

Վեհարանից դեպի Մայր տաճար ձգվող շքերթի երկու կողմերում կանգնած հավատացյալ բազմությունը խանդավառ արտահայտություններով էր դիմավորում երկու Հայրապետներին:

Մայր տաճարը զարդարվել էր տոնականորեն: Ավագ բեմի առաջ, ձախակողմյան դասում, Տ. Նիկոլաոս Զ Պատրիարքի համար դրված էր առանձին պատրիարքական աթոռ:

«Հայր սեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ «Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա» (Մատթ. ԺԸ 20) բնաբանով, և ողջունեց ներկայությունը Ալեքսանդրիայի հույն օրթոդոքս պատրիարքության՝ գլխավորությամբ Տ. Նիկոլաոս Զ Սրբազան Պատրիարքի:

Իր քարոզի ավարտին Հայոց Հայրապետը եղբայրորեն Ավագ սեղան հրավիրեց Նորին Սրբությունն Նիկոլաոս Զ Պատրիարքին՝ իր ողջույնը և օրհնությունը տալու հայ հավատացյալ ժողովրդին:

Հուզիչ էր և պատմական այն պահը, երբ ս. Սեղանի բեմի վրա, հայ եկեղեցու կամարների ներքո, մի անգամ ևս ի Քրիստոս եղբայրության սիրո համբույրով ողջագուրվեցին երկու Հայրապետները:

Նորին Սրբությունը Իր ողջույնի խոսքի մեջ իր և իր շքախմբի անունից ջերմ շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին եղբայրական հրավերի, ջերմ դիմավորման և ողջույնի ու բարեմաղթությունների համար և ապա տվեց իր օրհնությունը Մայր Աթոռի միաբանությանը, ներկա հավատացյալ ժողովրդին և ողջ հայ եկեղեցուն՝ աղոթելով, որ Տերը օրհնի և պտղաբեր դարձնի այս պատմական հանդիպումը իր եկեղեցու փառքի, քրիստոնյաների միության և աշխարհի խաղաղության ու բարօրության համար:

Հավարտ ս. պատարագի Մայր տաճարի երգչախումբը գեղարվեստական բարձր մակարդակով հունարեն լեզվով քառաձայն կատարեց մի հատված հունական պատարագից՝ արժանանալով հունաց Սրբազան Պատրիարքի մասնավոր գնահատանքին:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Ս. պատարագի ավարտին երկու Հովվապետները եկեղեցական թափորով առաջնորդվեցին Վեհարանի գահասրահ, ուր տեղի ունեցավ պաշտոնական հանդիսություն:

Գահասրահում էին նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը և տեղակալ Սուրեն Հովհաննիսյանը:

Այս հանդիսավոր առիթով Հայոց Հայրապետը ողջունեց Ալեքսանդրիայի հունաց Պատրիարքին ու նրա շքախմբի անդամներին ջերմ և բովանդակալից ուղերձով (տե՛ս «Էջմիածին» ամսագրի սույն համարը, էջ 3):

Այնուհետև հանդես եկավ Տ. Նիկոլաոս Զ Պատրիարքը՝ Հայոց Հայրապետին ուղղված սրտագին պատասխան ուղերձով (տես նույնը, էջ 6):

Ապա, հանուն ռուսաց Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի, Հայոց Հայրապետին ուղղյալ ողջույնի հետևյալ ջերմ խոսքով հանդես եկավ Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ և Ուկրաինայի էկզարխ տ. Ֆիլարետը.

«Զերդ Սրբություն,

Թույլ տվեք ինձ, նախ և առաջ, շնորհակալություն հայտնել Ձեզ այն հրավերի համար, որ Դուք ուղարկել էիք Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին՝ ս. Էջմիածին ուղարկելու իր ներկայացուցչին, Ալեքսանդրիայի եկեղեցու Ամենապատիվ Պատրիարք Նիկոլաոս Զ-ի Հայաստանյայց առաքելական եկեղեցու կենտրոնին տված պաշտոնական այցելության առիթով:

ԾԻԾԵՌՆԱԿԱՌԵՐԸ. ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Պատմական այս ուրախ օրը, երբ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Վազգեն Ա-ը ս. Էջմիածնի սրբազան կամարների տակ առաջին անգամն է ընդունում Ալեքսանդրիայի եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Ամենապատիվ Նիկոլաոս Ջ Պատրիարքի, ես պատիվն ունեմ հաղորդելու Մոսկվայի և համայն Ռուսիոյ Պատրիարք Պիմենի ողջույնները և բարի մաղթանքները։

Մենք ուրախանում և հոգեպես մխիթարվում ենք, երբ ականատես ենք լինում օրթոդոքս եկեղեցիների և հին արևելյան եկեղեցիների միջև եղբայրական կապերի զարգացման։

Այս տարի ռուս պրավոսլավ եկեղեցին ուրախությունն ունեցավ հյուրընկալելու հայ եկեղեցու պատվիրակությանը՝ Նորին Սրբություն Վազգեն Ա-ի գլխավորությամբ։ Ռուս եկեղեցու սրբազան վայրերը այցելելիս մենք միասին աղոթեցինք «Աստուծո սուրբ եկեղեցիների պայծառության և նրանց միության համար»։

Ռուս եկեղեցու առաջնորդներն ու հոգևոր իշխանավորները, ինչպես նաև հոգևորականներն ու աշխարհականները ոչ միայն Սովետական Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում, ուր ապրում են հայեր, օգտվել են և օգտվում են հայ եկեղեցու, նրա ծայրագույն Պատրիարք-կաթողիկոսի եղբայրական վերաբերմունքից և հյուրասիրությունից։ Դա վկայությունն է այն բանի, որ ռուս պրավոսլավ եկեղեցու և հայ առաքելական եկեղեցու միջև գոյություն ունեն իսկական եղբայրական փոխհարաբերություններ։

Պողոս առաքյալի խոսքերով ասած՝ ինչպես մեր մեջ ապրող աստվածային շնորհները կարիք ունեն ջերմացման, այնպես էլ եղբայրական փոխհարաբերությունները պահանջում են մշտական զարգացում և ամրապնդում։ Այս ձևով մեր եկեղեցիները փոխադարձաբար հոգեպես հարստանում են։ Մենք բարձր ենք գնահատում հայ առաքելական եկեղեցու բազմադարյան հոգևոր մշակույթը և պատմական փորձը, եկեղեցի, որը հարուստ է քրիստոնեական դպրության հոգևոր հուշարձաններով։

Մեր էկումենիկ գործակցությունը հաջողությամբ զարգանում է ինչպես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներսում, այնպես էլ երկկողմանի հիմունքներով։

Մեզ հուսադրում է այն համատեղ աշխատանքը, որը կատարվում է պրավոսլավ և հին արևելյան եկեղեցիների միջև տեղի ունեցող դիալոգի կապակցությամբ ստեղծված խառն հանձնաժողովում։ Մենք ուրախ ենք, որ դավանում ենք մեկ հավատք առ Քրիստոս Աստված մեր, թեկուզև պատմականորեն առաջացած քրիստոսաբանական տարբեր բանաձևումներ ունենանք։ Մենք աղոթում ենք և գործադրում մեր բոլոր ջանքերը, որպեսզի սուրբ Հոգու օգնականությամբ ավելի շուտ հասնի այն ժամանակը, երբ մենք կիրագործենք հավատքի կատարյալ միությունը և հաղորդության խորհրդի մերձեցումը՝ պահպանելով ներկայիս գոյություն ունեցող տեղական ազգային եկեղեցիների ինքնուրույն վարչակարգը և հարգելով պատմականորեն ստեղծված ավանդություններն ու ազգային հոգևոր մշակույթը։

Ռուս պրավոսլավ և հայ առաքելական եկեղեցիները բաղկացուցիչ մասերն են սովետական ժողովուրդների համերաշխ ընտանիքի, որով և պայմանավորվում է նրանց միասնությունն ու նույն մտածելակերպը ժամանակակից մարդկությանը ծառայելու նրանց գործունեության ասպարեզում, մարդկություն, որը ծարավի է խաղաղության, սոցիալական արդարության և առաջադիմության։

Ձերդ Սրբություն, ընդունեցեք մեր շնորհակալությունները մեզ ցույց տրված եղբայրական սիրո և ավանդական հյուրասիրության համար: Սուրբ Էջմիածնից մենք կտանենք նոր վկայություններ մեր եկեղեցիների միջև գոյություն ունեցող եղբայրական փոխհարաբերությունների մասին»:

Պաշտոնական սույն ողերձների փոխանակումից հետո այս առթիվ հուշանվերներ փոխանակվեցին երկու Հայրապետների միջև:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը, ի պատիվ Տ. Նիկոլաոս Զ Պատրիարքի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ մասնակցությամբ ավելի քան 30 հրավիրյալների:

Որոշված ժամին երկու Հովվապետները մուտք գործեցին սեղանատուն: Պատվո սեղանի շուրջ տեղ գրավեցին Հայոց Հայրապետը, Ալեքսանդրիայի հունաց Պատրիարքը և տիար Ս. Գասպարյանը:

Սեղանը օրհնեց Հայոց Հայրապետը: Այնուհետև այն վերածվեց ճշմարտապես քրիստոնեական սիրո սեղանի: Եղբայրական ջերմ մթնոլորտում փոխանակվեցին ողջույնի բաժակաճառեր, քրիստոնեական եկեղեցիների և հատկապես հայ առաքելական, ռուս պրավոսլավ և հույն օրթոդոքս եկեղեցիների էլ ավելի սերտ գործակցության և ապագա միության ցանկություններով:

Այս ոգով ջերմ ելույթներ ունեցան Հայոց Հայրապետը, Տ. Նիկոլաոս Պատրիարքը, տ. Ֆիլարետ միտրոպոլիտը, տ. Տիրայր, տ. Գյուտ եպիսկոպոսները և ուրիշներ:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՆԻԿՈԼԱՈՍ Զ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

Նոյեմբերի 25-ին, երկուշաբթի օրը, ժամը 12-ին, **երկու Հայրապետների** միջև Վեհարանում տեղի ունեցավ մասնավոր տեսակցություն, ուր մի անգամ ևս գոհունակությամբ հաստատվեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Անքսանդրիայի հույն պատրիարքական Աթոռի միջև էկումենիկ ոգով համագործակցության աշխատանքները շարունակելու և ամրապնդելու անհրաժեշտությունը, աշխատանքներ, որոնց հաջողության համար աշխատում և աղոթում են երկու քույր եկեղեցիները:

Այնուհետև երկու Հայրապետները, շրջապատված իրենց շքախմբի անդամներով, ստորագրեցին համատեղ պաշտոնական հաղորդագրությունը՝ որպես պատմական փաստաթուղթ (տե՛ս նույնը, էջ 9):

Ժամը 18-ին Վեհարանի սեղանատանը հյուրերի պատվին տրվեց հրաժեշտի վերջին ընթրիքը: **Հայոց Հայրապետը** ջերմ մթնոլորտում, եղբայրական սիրալիր զգացումներով տոգորված, բարի ճանապարհ մաղթեց Մայր Աթոռի թանկագին հյուրերին:

Իր պատասխան խոսքում **Տ. Նիկոլաոս Սրբազան Պատրիարքը** շեշտեց, որ Մայր Աթոռ իր գլխավորած պատվիրակությունը հուզումների և ոգևորության անմոռանալի օրեր ապրեց աստվածաշնչական այս հողի վրա, հայ եկեղեցու պատմական կենտրոնում՝ վայելելով եղբայրական ամենաջերմ հյուրասիրությունը Ամենայն Հայոց Հայրապետի: «Մեր հաճելի այցելությունը,— ասաց Պատրիարքը,—մոտենում է իր վախճանին: Հրաժեշտ ենք առնելու

Ձերդ Սրբությունից և վերադառնալու ենք մեր Աթոռը։ Ս. Էջմիածնից մեկնելուց առաջ ուզում ենք վստահեցնել Ձեզ, որ այստեղ մեր այցելությունը երկու եկեղեցիների փոխհարաբերությունների մեր օրերի պատմության մեջ նշվելու է իսկապես որպես հիշատակության արժանի մի իրադարձություն, իսկ մեր այցելությունը պիտի թողնի անջնջելի տպավորություններ և հուշեր։ Խնդրում եմ, Ձերդ Սրբություն,—եզրակացրեց Սրբազան Պատրիարքը,—ընդունել մեր պատրիարքության, անձնապես իմ և մեր եկեղեցու պատվիրակության անդամների եղբայրական շնորհակալությունը՝ ջերմ ընդունելության և հյուրասիրության համար։ Թող Աստված երկար կյանք պարգևի Ձերդ Սրբությանը, որպեսզի կարողանաք այսպես բազմարդյուն կերպով ծառայել ձեր Մայր եկեղեցուն և իրականացնել Ձեր բոլոր բարի ծրագրերը՝ ի պայծառություն ձեր սուրբ եկեղեցու, և բերեք Ձեր եռանդուն աջակցությունը Քրիստոսի եկեղեցու ապագա ցանկալի միության համար»։

Իր խոսքի ավարտին Տ. Նիկոլաոս Սրբազան Պատրիարքը Ալեքսանդրիա փոխադարձ այցելության հրավեր ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ ի գլուխ հայ եկեղեցու մի պատվիրակության։ Հրավերը սիրով ընդունվեց։

Ընթրիքից հետո երկու Հայրապետները առաջնորդվեցին Մայր տաճար, ուր միասին աղոթեցին և մի անգամ ևս ողջագուրվեցին քրիստոնեական եղբայրության սիրո համբույրով։

ՄԵԿՆՈՒՄ

Նոյեմբերի 26-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 5-ին, Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք **Տ. Նիկոլաոս Զ-ը** իր շքախմբով մեկնեց Մայր Աթոռից։

Երևանի օդանավակայանում հարգարժան հյուրերին ճանապարհեց **Հայոց Հայրապետը**՝ շրջապատված ներքին թեմերի թեմական առաջնորդներով և Մայր Աթոռի եպիսկոպոսներով։

Ալեքսանդրիայի հունաց Պատրիարքի այցելությունը Մայր Աթոռ կարձանագրվի որպես հիշատակության արժանի մի իրադարձություն հայ և հույն եկեղեցիների մեր օրերի հարաբերությունների պատմության մեջ։





«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԸ

Նոյեմբերի 27-ին, չորեքշաբթի օրը, ժամը 18-ին, Վեհարանի հանդիսության դահլիճում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, նշվում է Մայր Աթոռի պաշտոնաթերթ **«Էջմիածին»** ամսագրի հրատարակության երեսնամյակը:

Հանդիսության նախագահության պատվո սեղանի շուրջ տեղ են գրավել **Վեհափառ Հայրապետը,** ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը,** Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ **տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը,** ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ **տ. Տիրայր եպս. Մարտիկյանը** և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և **«Էջմիածին»** ամսագրի առաջին խմբագիր **պրոֆ. Առաքել Առաքելյանը:**

Հանդիսությանը ներկա են շուրջ 300 հրավիրյալներ, այդ թվում՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի և «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը, մտավորականներ, թղթակիցներ և այլ հրավիրյալներ:

Հանդիսությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Ս. Հովհաննիսյանը:**

Հանդիսավոր նիստը բացվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվագով և Հայոց Հայրապետի աղոթքով:

Այնուհետև, հանում Գերագույն հոգևոր խորհրդի, հանդիսության բացման հետևյալ իմաստով հանդես է գալիս **տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը.**

«Վեհափառ Տեր,
Պրն. Ս. Գասպարյան,
Հոգևոր հայրեր,
Հարգելի հանդիսականներ,

Բացառիկ ուրախ առիթ է, որ հավաքվել ենք այսօր՝ նշելու համար Մայր Աթոռ ս. Էջմիածնի պաշտոնաթերթ **«Էջմիածին»** ամսագրի հրատարակության 30-ամյակը: Ընդունված կարգ է, որ, ի գնահատություն մարդու, հոբելյանական հանդիսություններ կատարվեն նրա կյանքի որոշ հանգրվաններին, եթե տվյալ անձնավորությունն իր կենդանության օրոք կարողացել է Տիրոջ կողմից շնորհված քանքարը տասնապատկել ու հարյուրապատկել՝ ներդնելով դրանք իր ժողովրդի հոգևոր, բարոյական և, ինչու չէ նաև, նյութական արժեքները հարստացնելու ազնիվ գործի մեջ:

Հոբելյանական հանդիսությունները առավել նշանակություն ու հանգամանք են ստանում, երբ կատարվում են հետմահու, երբեմն դարեր անցնելուց հետո: Դա նշանակում է, որ այդ մարդիկ կարողացել են հաղթահարել ամեն ինչ հարթեցնող «մահվան» ու մնալ «կենդանի» իրենց ժողովրդի ու երբեմն էլ աշխարհի երանելիների պանթեոնում: Արժանանալ այդ պատվին կարողանում են անշուշտ քիչ բացառություններ: Ահա թե ինչու այդպիսի բացառությունների ոգեկոչումի առջև մենք՝ տկարներս ու սովորականի մակարդակից այն կողմ անցնել չկարողացողներս, հիացմունքի ու երբեմն էլ պաշտամունքի աստիճանի հասնող ե-

րախտագիտության զգացում ենք ունենում:

Այսօր պարագան ուրիշ է սակայն: Մի անհատի գործի առաջ չէ, որ կանգնել ենք, այլ մի խումբ մարդկանց տքնաջան ու ազնիվ աշխատանքն իր մեջ ամփոփող ու ամբողջ այդ հավաքական աշխատանքի երեսուն տարվա պատկերն արտացոլող «Էջմիածին» ամսագրի հրատարակման երեսնամյակի առաջ, մեր գնահատանքի ու երախտագիտության խոսքն ասելու այս երջանիկ առիթով, այսօր:

Մեր ժողովրդի պատմության ամենից ճակատագրական մի թվականին՝ գերմանական ֆաշիզմի դեմ մղվող կյանքի ու մահվան պայքարի ամենաթեժ օրերին՝ 1944 թվականին, հայրենի կառավարության բարեհաճ թույլտվությամբ Ամենայն Հայոց Հայրապետությունը սկսեց հրատարակել «Էջմիածին» ամսագիրը, որը և բոլորեց իր հրատարակության երեսուն տարին, հոգևոր, կրոնական, բարոյական ու հայրենասիրական ոգի ու հավատք բաշխելով մեր ժողովրդին, որպես մասունք ու հաղորդություն, և լույս տանելով աշխարհի քառուղիներում աստղերի հույլի նման սփռված մեր եկեղեցու զավակներին և լույ՝ նրանց առկայծող կանթեղներին:

Մեր երախտագիտությունն ու որդիական հարգանքը երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի հիշատակին, որ մղիչ ուժը եղավ ամսագրի հրատարակության:

Մեր խորին շնորհակալությունները Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին, որը կենդանի ու լուսավոր պահեց ամսագիրը մեր օրերում:

Մեր հարգանքն ու շնորհակալությունները ամսագրի նախկին երկու խմբագիրներին՝ պրոֆ. Առաքել Առաքելյանին և պրոֆ. Աշոտ Աբրահամյանին, որոնք ծանր պայմաններում ձեռնհասորեն խմբագրեցին ամսագիրը:

Մեր ջերմ ու սրտագին շնորհակալությունները ներկա խմբագիր Արթուն Հատիտյանին, որը մեծ նվիրումով և անխոնջ աշխատանքով փառքի պատվանդանին է հասցրել «Էջմիածին» ամսագիրը մեր օրերում:

Թող Տերը իր հովանու տակ պահի «Էջմիածին» ամսագիրը և նրա աշխատողներին: Ամեն»:

Հանդիսությունը բաղկանում էր երկու մասից: Առաջին մասում՝ զեկույց, ողջույնի և օրհնության խոսքեր, իսկ երկրորդում՝ գեղարվեստական ծրագրի կատարում:

«Էջմիածին» ամսագրի հրատարակության 30-ամյակի առթիվ ընդարձակ ու բովանդակալից զեկույցով հանդես է գալիս խմբագիր **Ա. Հատիտյանը** (սույն զեկույցը կտպագրվի ամսագրի 30-ամյակին նվիրված բացառիկ համարում):

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես են գալիս **տ. Տիրայր եպս. Մարտիկյանն** ու **պրոֆ. Ա. Առաքելյանը:**

Հանդիսության ժամանակ ողջույնի և շնորհավորական ջերմ խոսքով հանդես է գալիս նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը:**

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության 30-ամյակին նվիրված հանդիսության Ա մասը եզրափակվում է **Հայոց Հայրապետի** գնահատանքի և օրհնության ջերմ ու սրտառուչ խոսքով:

Ն. Ս. Օծությունը մի անգամ ևս ոգեկոչում է հիշատակը երանաշնորհ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի, որի նախաձեռնությամբ 1944 թվականի հունվարին հրատարակվում է ամսագիրը, և Իր գնահատանքին ու օրհնությանն է արժանացնում ամսագրի նախկին խմբագիրների՝ **պրոֆ. Ա. Առաքելյանի, պրոֆ. Ա. Աբրահամյանի** և ներկայիս խմբագիր **Ա. Հատիտյանի,** խմբագրական մարմնի անդամների, աշխատակիցների և ամսագրի հրատարակությանն իրենց սրտագին մասնակցության բաժինը բերած հոգևորական ու աշխարհական մտավորականների աշխատանքները:

Հայոց Հայրապետը Իր գնահատանքի և օրհնության խոսքի մեջ շեշտում է, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթը հետ այսու է՛լ ավելի լայն չափով շարունակի իր էջերը տրամադրել մեր ժողովրդի հոգևոր, քրիստոնեական ու հայեցի դաստիարակությանը նվիրված կրոնաշունչ հոդվածների և ուսումնասիրությունների հրատարակությանը, իր ուշադրության կենտրոնում պահի միշտ **Մայր Աթոռ-հայրենիք-սփյուռք** հարաբերությունների կարևորությունը՝ հոգևոր սնունդ ու ազգային-հայրենասիրական իրավ գիտակցություն ջամբելով մեր ժողովրդի մանավանդ սփյուռքահայ հայրենակարոտ հատվածին՝ ամրապնդելով ոգեշունչ ու կենդանի կապը Մայր Աթոռի, սփյուռքի և վերածնված մայր հայրենիքի միջև, որովհետև հայության գոյատևման և ազգապահպանման տեսակետից սփյուռքի համար չկա այլ փրկարար ճանապարհ, եթե ոչ բոլոր հայ հոգիների և սրտերի եղբայրացումն ու միավորումը ս. Էջմիածնի օրհնության և վերածնված հայրենիքի վեհ զգացման մեջ:

Հայոց Հայրապետը ամենայն կարևորությամբ խմբագրության առաջ խնդիր է դնում նույնպես ամսագրի էջերը լայնորեն տրամադրել մեր ժամանակները հատկանշող է-

կումենիկ շարժման գործունեությանը, որով մեր եկեղեցին էլ, այդ եկեղեցիների կողքին և նրանց հետ, դիալոգի մեջ է մտնում այսօրվա աշխարհին ու մարդկությանը հուզող բազում հրատապ հարցերի հետ և դրանցով ինքն էլ է թարմանում, իր մեջ գտնում կենսունակության և առաքելության մշտանորոգ և անսպառ ուժեր:

Տասը տարի տևող ընդմիջումից հետո գործադրության է դրվում «Էջմիածին» ամսագրի 30-ամյակին նվիրված հանդիսության գեղարվեստական հետևյալ ծրագիրը:

Առաջինը հանդես է գալիս վաստակավոր արտիստուհի, ասմունքող **Վերա Հակոբյանը**, որը ասրումով արտասանում է Գևորգ Էմինի «Սասունցիների պարը»:

Ապա եղույթ է ունենում Մայր տաճարի երգչախումբը՝ գեղարվեստական ղեկավար՝ վաստակավոր արտիստ **Խորեն Մելիքանեջյան**: Խումբը կատարում է. Ալ. Հարությունյան, «Սասունցիների պար»՝ դաշնամուրի վրա կատարում է **Լևոն Աբրահամյանը**, Տ. Զուխաջյան, Հորհոր աղայի քառյակները, մենակատար՝ **Վալերիկ Հարությունյան**, Կոմիտաս Վարդապետ, «Առավոտուն բարի լուս», Ալան Հովհաննես, «Ցար նազանի», մենակատար՝ **Լուսինե Զաքարյան**, Ալ. Հարությունյան, «Հայրենիքիս հետ», խումբը և մենակատարներ՝ **Լուսինե Զաքարյան** ու **Կոստյա Սիմոնյան**, Կոմիտաս Վարդապետ, «Սուրբ-սուրբ»՝ երգչախումբ, Մ. Եկմալյան, «Տէր, կեցո», խմբերգ, մենակատար՝ **Ոնիկ Թերզյան**, Մ. Եկմալյան, «Լռեց. ամպերը...»՝ խմբերգ, մենակատար՝ **Ոնիկ Ոդաբաշյան**. Խ. Մելիքանեջյան, «Էջ Միածինն ի Հօրէ»՝ երգչախումբ, Էդ. Հովհաննիսյան, «Երեւոնի-Երևան»՝ երգչախումբ:

Հանդիսության ավարտին, հանուն Հայոց Հայրապետի, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը ջերմ շնորհակալություն է հայտնում օրվա հանդիսությունը կազմակերպող «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը և հանդեսին իրենց մասնակցությունը բերած Մայր տաճարի երգչախմբի մենակատարներին, երգչախմբին և բոլորին՝ իրենց ներկայության համար:

Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊ. ՆԵՐՍՈՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետի հրավերով, ուխտավորաբար ԱՄՆ-ից Մայր Աթոռ ժամանեցին տ. Տիրան արքեպ. Ներսոյանը և ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը:

Սրբազան հայրերին օդանավակայանում դիմավորեցին Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Արիս եպս. Շիրվանյանը և Սարգիս սարկավագ Սարգսյանը:

Մայր տաճարում իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, սրբազան հայրերը Վեհարանում ներկայացան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և ջերմ զրույց ունեցան Նրա հետ:

Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը մեկ ամիս մնալով Մայր Աթոռում, երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Վեհարանում դասախոսության ձևով սեմինար պարապմունքներ անցկացրեց Մայր Աթոռի երիտասարդ միաբանների հետ՝ «Մարկոսի Ավետարանի մեկնությունը» ընդհանուր թեմայով:

Դասախոսությանը ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև տ. Տիրան արքեպ. Ներսոյանը Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի հրավերով հոկտեմբերի 20-ին ս. պատարագ մատուցեց Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում և հոգեշունչ քարոզ խոսեց՝ «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և էօծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս: Քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն» (Ղուկ. Դ 18) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի բազում հավատացյալներ ս. հաղորդություն ստացան:

Տ. Տիրան արքեպիսկոպոսի՝ Մայր Աթոռում գտնված օրերին տեղի ունեցավ մեր սիրելի Տիրամոր մահը: Հոկտեմբերի 8-ին տ. Տիրան սրբազանը նախագահեց Տիրամոր հուղարկավորության և թաղման արարողություններին և իր հուզիչ դամբանականով հանգամանորեն բնութագրեց հանգուցյալ Տիրամորը՝ որպես հավատացյալ հայ կնոջ, ուսուցչի և Հայոց Հայրապետի մոր:

Այնուհետև տ. Տիրան սրբազանը Մայր Աթոռում գտնված օրերին իր ներկայությամբ և ընկերակցությամբ սիրեց Հայոց Հայրապետի վշտակիր սիրտը:

Ապա Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանի հրավերով հոկտեմբերի 26—28 օրերին տ. Տիրան արքեպ. Ներսոյանը ուխտավորաբար գտնվեց Շիրակի թեմում:

Հոկտեմբերի 27-ին, կիրակի օրը, Գյումրի խաչի տոնի առիթով, ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում տ. Տիրան սրբազանը պատարագեց և հավարտ ս. պատարագի քարոզեց՝ շեշտելով հավատացյալների կյանքում խաչի խորհրդի հոգևոր ու բարոյական նշանակությունը:

Սրբազան հայրն այցելեց նաև Հառիճայի և Մարմաշենի պատմական վանքերը և եղավ Կիրովականի ս. Հարություն եկեղեցում, ուր սրբազան հորը ջերմորեն ընդունեցին տ. Վազգեն քհն. Կարագյոզյանը և տ. Զավեն քհն. Մուկուչյանը:

Հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 1-ը Վեհափառ Հայրապետը և տ. Տիրան արքեպ. Ներսոյանը մի քանի օրով հանգստանալու մեկնեցին Դիլիջանի «Վեռնային Հայաստան» առողջարան:

Նոյեմբերի 2-ին Վեհափառ Հայրապետը և տ. Տիրան արքեպ. Ներսոյանը այցելեցին Բյուրական, «Հայկաշեն» հայրապետական ամառանոցը: Նրանց ընկերակցում էին տ. Արիս եպս. Շիրվանյանը և Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը:

Նոյեմբերի 8-ին Վեհարանի սեղանատանը տրվեց ողջերթի ընդունելություն-ճաշկերույթ՝ ի պատիվ տ. Տիրան արքեպ. Ներսոյանի:

Ողջերթի սույն ճաշկերույթին ներկա էին տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, տ. Հմայակ եպս. Ինդոյանը, պրն. Գրիգոր Խանջյանը և պրն. Պարգև Շահբազյանը:

Վեհափառ Հայրապետը բաժակ բարձրացրեց տ. Տիրան արքեպ. Ներսոյանի կենացը՝ հայտնելով Իր գոհունակությունը նրա՝ Մայր Աթոռում գտնվելու կապակցությամբ, և քարի ճանապարհ մաղթեց նրան:

Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը պատասխան խոսքով իր խորին շնորհակալությունը հայտնեց Հայոց Հայրապետին՝ ջերմագին ընդունելության և սիրալիր հյուրասիրության համար:

Նոյեմբերի 10-ին տ. Տիրան արքեպ. Ներսոյանը, հրաժեշտ տալով Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին, մեկնեց լավագույն տպավորություններով:

Տ. Տիրան սրբազանին ճանապարհեցին Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, Սարգիս սրկ. Սարգսյանը և Արտաշես սրկ. Մուշեղյանը:

ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ՔԵՇԻՇՅԱՆ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՄԱՐՏԻԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի հրավերով նոյեմբերի 1-ին, ուրբաթ օրը, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ մասնակցելու համար համայն Աֆրիկայի և Ալեքսանդրիայի Տ. Նիկոլաոս Զ հունաց Սրբազան Պատրիարքի՝ Մայր Աթոռ այցելության առթիվ՝ նոյեմբերի 19—26 օրերին կազմակերպվելիք հանդիսություններին:

Մայր Աթոռում գտնված օրերին տ. Տիրայր սրբազանը ուխտագնացություններ է կատարում, պատարագում և քարոզում մի շարք եկեղեցիներում:

Նոյեմբերի 15—16 օրերին տ. Տիրայր եպիսկոպոսը, Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոսի հրավերով, այցելում է Շիրակի պատմական հուշարձանները, այդ թվում՝ Հառիճայի, Մարմաշենի, Սանահնի և Հաղբատի վանքերը:

Դեկտեմբերի 1-ին, կիրակի օրը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի հրավերով, տ. Տիրայր եպիսկոպոսը Երևանի ս. Հովհաննես եկեղեցում պատարագում է և Բանին կենաց բարոզությամբ մխիթարում հավատացյալներին:

Տ. Տիրայր սրբազանը հայ եկեղեցու երիտասարդ ու խոստումնալից իշխանավորներից մեկն է: Նա 14 տարի ձեռնհասորեն ղեկավարում է Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերը՝ սրտեռանդն մասնակցությամբ և համերաշխ գործակցությամբ վերոհիշյալ համայնքների պատվարժան թեմական իշխանությունների:

Տ. Տիրայր սրբազանն իր առաջնորդության տարիներին բարեկամական, սիրալիր հարաբերություններ է պահել և պահում է էկումենիկ ոգով Ռումինիայի և Բուլղարիայի օրթոդոքս քույր եկեղեցիների հոգևոր պետերի, հոգևորականության, ինչպես նաև օրինական, գործնական ու բարոյական գետնի վրա լավ հարաբերություններ՝ տեղի պետական իշխանությունների հետ:

Այս տարի, մարտին, տ. Տիրայր արքազանը Ռումինիայի Արևելագետների միության հատուկ ժողովում միաձայնությամբ ընտրվել է վերոհիշյալ միության անդամ:

Մայիսին տ. Տիրայր Եպիսկոպոսը, որպես թեմական առաջնորդ, մասնակցել է Բուխարեստում Պետական պալատի Սոցիալիստական Միասնության ճակատի անդրանիկ համագումարին՝ ընկերակցությամբ Ռումինիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ դոկտ. Գրիգոր Բամբուկճյանի և Բուխարեստի հայոց հոգևոր հովիվ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանի:

Սոցիալիստական Միասնության ճակատի համագումարը, ի շարս Բուխարեստի այլ հոգևոր պետերի, տ. Տիրայր եպս. Մարտիկյանին միաձայնությամբ ընտրում է Սոցիալիստական Միասնության ճակատի Գերագույն Ազգային Խորհրդի անդամ:

Օգոստոսին, Ռումինիայի ազատագրության 30-ամյակի կապակցությամբ, Ռումինիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը պարգևատրվում է «Ռումինիայի հանրապետության աստղ» շքանշանի 3-րդ աստիճանով, Սոցիալիստական Միասնության ճակատի Գերագույն Ազգային Խորհրդի նախագահ Չաուշեսկուի վկայականով և 30-ամյակի մեդալով:

Դեկտեմբերի 3-ին, երեքշաբթի օրը, տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը, հրաժեշտ տալով Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռին, մեկնում է իր թեմ Բուխարեստ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերջերս Բեյրութում, Հ. Բ. Ը. միության Լիբանանի շրջանային հանձնախմբի հովանավորությամբ և տեր ու տիկին Գևորգ և Մարի Կարմիրյանների նվիրատվությամբ, հայկական կրթական մի նոր օջախ իր դռներն էր բացել աշակերտության առաջ: Այս նոր վարժարանն արդարորեն կրում է բարերարների ազգանունը:

Արդարև, չափազանց մխիթարական է արձանագրել, որ ափյուռքում եկեղեցու կողքին հայ դպրոցը հանդիսանում է կարևորագույն օջախը ոչ միայն մեր նոր սերնդի հայեցի ու քրիստոնեական դաստիարակության, այլ նաև ամուր խարիսխն ու հաստատուն վեմը ազգապահպանման:

Հայոց Հայրապետի հրավերով հոկտեմբերի սկզբներին ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում տեր և տիկին Գևորգ-Մարի Կարմիրյանները, որպես Մայր Աթոռի բարերարներ:

Հոկտեմբերի 6-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Վեհարանում Իրեն սեղանակից դարձնել հարգարժան հյուրերին և, ի նշան հայրապետական Իր բարձր գնահատության, պրն. Գևորգ Կարմիրյանի կուրծքը զարդարում է ս. Գրիգոր Լուսավորչի ադամանդակուռ Ա կարգի շքանշանով:

Հայոց Հայրապետը միևնույն ժամանակ հոկտեմբեր 21 թվակիր Իր սրբատառ օրհնության կոնդակին է արժանացնում տեր և տիկին Կարմիրյաններին՝ նրանց կատարած սրտաբուխ բարերարությունների համար, որպես «որդիական այնքան ջերմ վերաբերմունքի» արտահայտություն «Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հանդեպ», «ի պայծառություն միածնաէջ Մայր տաճարին»:

Հայրապետական օրհնության սույն կոնդակը տպված է «Էջմիածին» ամսագրի հոկտեմբեր համարում (էջ 4):

ՏԻՐԱՄՈՐ ՔԱՌԱՍՈՒՆՔԸ

Նոյեմբերի 16-ին, շաբաթ օրը, լրացավ Տիրամոր՝ Սիրանույշ Պալճյանի մահվան քառասունքը:

Ժամը 16-ին Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը եկեղեցական թափորով գնացին ս. Գայանե վանք, ուր միաբանական գերեզմանատանը ամփոփված են աճյունները հանգուցյալ Տիրամոր:

Թարմ ծաղիկներով զարդարված Տիրամոր գերեզմանի վրա կատարվում է հանգստյան կարգ՝ հանդիսադրությամբ տ. Արիս եպս. Շիրվանյանի, մասնակցությամբ ողջ միաբանության և հոգևոր ճեմարանի ուսանողության:

Արարողությանը ներկա է նաև Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 17-ին, կիրակի օրը, Տիրամոր քառասունքի առթիվ Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Արիս եպս. Շիրվանյանը և, հավարտ ս. պատարագի, քարոզում «Ես իսկ եմ յարութիւն և կեանք, որ հաւատայ ինս, թէպէտ և մեռանի, կեցցէ» (Հովհ. ԺԱ 25) բնաբանով: Իր քարոզում պատարագիչ սրբազանը շեշտում է Քրիստոսի հարության պատմական ու հոգևոր նշանակությունը հավատացյալի կյանքում, որպես գրավականը հոգու անմահության, և Քրիստոսի հարության լույսի տակ խարոզիչ սրբազանը անդրադառնում է նաև հանգուցյալ Տիրամորը, որը հարության հույսով իր աչքերը փակեց, որպես ճշմարիտ հավատացյալ հայ կին:

Ս. պատարագին ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի պատասխանատու բաժինների վարիչները, մտավորականներ, ծանոթներ Երևանից, որոնք եկել էին հարգելու Տիրամոր հիշատակը՝ նրա մահվան քառասունքի առթիվ:

Ս. պատարագին ներկա էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և Լիբանանի պառլամենտի անդամ դոկտ. Մելքոն Էպլիղաթյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ:

Հոգեհանգստյան «Յորժամ» շարականը, երգչուհի Լուսինե Զաքարյանի սրտագին կատարմամբ, վերացնում է բոլոր հոգիները:

Ապա Մայր տաճարի երգչախումբը, վաստակավոր արտիստ Խորեն Մելխանեջյանի շնորհալի ղեկավարությամբ, վեհ ու հանդիսավոր հնչեցնում է, երգահան Ալ. Հարությունյանի մշակմամբ, «Գթա, Տէր, ի հոգիս մեր ննջեցեալոց» շարականը:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր ընդունում է ցավակցություններ Տիրամոր մահվան քառասունքի առթիվ:

Ժամը 14.30-ին Ղազարապատի վերակառուցված վանական սեղանատանը տրվում է հոգեճաշ շուրջ 60 հոգու՝ Տիրամոր մահվան քառասունքի առթիվ:

Հոգեճաշին ներկա են նույնպես Մայր Աթոռի բոլոր միաբանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մասնավոր հրավիրյալներ, որոնց թվում նաև դոկտ. Մելքոն Էպլիղաթյանը:

Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև հանգուցյալ Տիրամոր պայծառ ու անմոռաց հիշատակը մի անգամ ևս սրտառուչ խոսքերով ոգեկոչում են տ. Տիրայր եպս. Մարտիկյանը ու «Էջմիածին» ամսագրի խմբագիր պրն. Արթուն Հատիտյանը:

Հոգեճաշի ավարտին շնորհակալության և օրհնության ջերմ խոսք է ասում Հայոց Հայրապետը՝ Տիրամոր մահվան և քառասունքի առթիվ ամենն կողմից և ամենայն մասամբ արտահայտված անկեղծ ու խորը վշտակցության համար, ցավակցություններ, որոնք սփոփեցին Իր վշտակիր սիրտը և թեթևացրին Իր կրած կորստի ծանրությունը:

Իր խոսքի մեջ հանգուցյալ Տիրամոր քառասունքի առթիվ տրված հոգեճաշին Վեհափառ Հայրապետը «Հոգւոց» է արտասանում բոլոր ննջեցյալների հիշատակին:

Հոգեճաշն ավարտվում է խմբովին արտասանված Տերունական աղոթքով:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ

Հանուն Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի, Մայր Աթոռիս Դիվանը խորազգաց շնորհակալություն է հայտնում մայր հայրենիքի պետական բարձր իշխանություններին, Մեծի Տանն Կիլիկիո, ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի հայոց Աթոռների գահակալներին, ռուսաց և վրաց եկեղեցիների Սրբազան Պատրիարքներին և բարձրաստիճան հոգևորականներին, թեմական առաջնորդներին, թեմական և եկեղեցական վարչությանց, ազգային-հասարակական կազմակերպությանց, հայ մամուլին և բազմահարյուր վշտակից անձանց՝ Հայաստանից և սփյուռքից, որոնք հեռագրով, նամակներով կամ անձամբ իրենց ցավակցությունը հայտնեցին և աղոթեցին ի Տեր հանգուցյալ Վեհամոր՝ Սիրանույշ Պալճյանի հոգու խաղաղության համար:

Վեհափառ Հայրապետը մխիթարված սրտով բոլորին հղում է Իր ամենաբարի մաղթանքներն ու օրհնությունը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

28-ը հոկտեմբերի 1974 թ.,
Ս. Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 1-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Հարրապետական վիլայում, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

* * *

Նոյեմբերի 2-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում երգեր է ունենում հանրածանոթ ասմունքող, ժողովրդական արտիստ Սուրեն Քոչարյանը:

Ցերեկույթին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում Եղիշե Չարենցի կյանքի և գրական գործունեության մասին բովանդակալից զեկուցում է կարդում մեծանուն բանաստեղծի դուստր գրականագետ Անահիտ Չարենցը:

* * *

Նոյեմբերի 8-ին, կիրակի.—Ը կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 9-ին, շաբաթ.—Այսօր, շուրջ մեկ ամիս Մայր Աթոռում գտնվելուց հետո, հրաժեշտ տալով Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռին, ԱՄՆ է մեկնում տ. Տիրան արքեպ. Ներսոյանը:

Երևանի օդանավակայանում սրբազան հորը ճանապարհում են Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, Սարգիս սրկ. Սարգսյանը և Արտաշես սրկ. Մուշեղյանը:

* * *

Նոյեմբերի 10-ին, կիրակի.—Թ կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին է այցելում Մոսկվայի հեռուստատեսության ռեժիսոր Ռոմանոս Չալթիքյանը:

* * *

Նոյեմբերի 14-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Նոյեմբերի 19-ին, երեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի Փարիզի փոխանորդ տ. Գյուտ եպս. Նագաշյանը։

Հանուն Հայոց Հայրապետի սրբազան հորը Երևանի օդանավակայանում դիմավորում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը։

Մայր տաճարում իր աղոթքն անելուց հետո տ. Գյուտ եպիսկոպոսը Վեհարանում աջահամբույրով ստանում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը։

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին է այցելում հյուրաբար Երևանում գտնվող լիբանանահայ ծանոթ հասարակական գործիչ Փանոս Թիթիզյանը։

*
* *

Նոյեմբերի 25-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին Հայաստանում գտնվող Գերմանական Դեմոկրատական Հանրապետության պառլամենտական պատվիրակության անդամները՝ գլխավորությամբ ԳԴՀ-ի ժողովրդական պալատի նախագահ, ԳԴՀ-ի Պետական խորհրդի նախագահի տեղակալ Հերալդ Գյոտինգը։

Հայոց Հայրապետի և հարգարժան հյուրերի միջև տեղի ունեցավ սրտագին զրույց մի շարք հետաքրքիր հարցերի շուրջ։

*
* *

Նոյեմբերի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Բեյրութ է մեկնում տ. Գյուտ եպս. Նագաշյանը։

*
* *

Նոյեմբերի 30-ին, շաբաթ.—Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գուրգեն քհն. Աշուրյանը։

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ս. ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբեր 27, 28 և 29 օրերը հոգևոր ուրախության և խանդավառության առիթներ էին սրբոց Հակոբյանց միաբանության և Երուսաղեմի հայ հավատացյալ ժողովրդի համար:

Այդ օրերին կատարվեցին մի շարք հոգևոր հանդեսներ և ձեռնադրություններ Երուսաղեմի սրբոց Հակոբյանց Մայր տաճարում:

Դպրության աստիճանի տվչություն

Ուրբաթ, 27 սեպտեմբեր 1974 թ., ս. Հակոբյանց Մայր տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, լուսարարապետ տ. Հայրիկ արքեպ. Ասլանյանը Ժառանգավորաց վարժարանի քսանչորս աշակերտների շնորհեց դպրության չորս աստիճաններ:

Ուրարի տվչություն

Նույն օրը, դպրության աստիճանի տվչությունից հետո, լուսարարապետ սրբազան հայրը «Պահպանիչ»-ով ուրար կրելու արտոնություն շնորհեց ընծայարանի առաջին դասարանի ուսանողներ Սերոբ Գալեմտերյանին, Հակոբ Տուրսունյանին, Սիմոն Պալյանին և Պարույր Մելքոնյանին:

Ձեռնադրություն սարկավագների

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ օրը, ս. պատարագի ընթացքում, լուսարարապետ սրբազան հայրը սարկավագ ձեռնադրեց ընծայարանի երկրորդ դասարանի ուսանողներ՝ ուրարակիր Հարություն Աթեշյանին և ուրարակիր Հրանդ Շերպեթճյանին:

Ձեռնադրություն կուսակրոն քահանաների

Շաբաթ, 28 սեպտեմբերի, երեկոյան ժամերգությունից հետո, ամեն. տ. Եղիշե պատրիարք ս. հայրը կատարեց երկու ընծայալների կոչման արարողությունը ս. Հակոբյանց Մայր տաճարում: Ընծայալներն էին՝ ընծայարանի շրջանավարտներ Սարգիս սարկավագ Տավուտլարյանը և Համբարձում սարկավագ Պալյանը: Խարտավիլակն էր լուսարարապետ տ. Հայրիկ արքեպ. սրբազան հայրը, առընթերակա ունենալով Հրեշտակաց վանքի վանահայր տ. Վահան վրդ. Թոփալյանը և Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուչ տ. Աղան վրդ. Բալիոզյանը:

Ընծայալների իմացական և բարոյական պատրաստության մասին վկայվելուց հետո պատրիարք սրբազան հայրը տվեց կոչման առաջին օրհնությունը: Ապա ընծայալները արտասանեցին ս. Գրիգոր Տաթևացու կողմից բանաձևված Հայաստանյայց եկեղեցու Հավատո դավանությունը:

Կիրակի, 29 սեպտեմբեր, վերացման ս. Խաչի տոնի օրը, տեղի ունեցավ երկու ընծայալների աբեղայական ձեռնադրություն՝ ձեռամբ ամեն. պատրիարք հոր, որը նաև օրվա պատարագիչն էր:

Ճաշու գրքի ընթերցումից առաջ ընծայալները, շարականների երգեցողության ներքո, ծնրադիր ս. խորան բարձրացան և ապա դարձան դեպի ժողովուրդը, իրենց բազուկները գլուխներից վեր պահած՝ ի նշան աշխարհից մեկընդմիշտ հրաժարվելու: Այնուհետև «Աստուածային և երկնային շնորհ» շարականի երգեցողությունից հետո ընծայալները բոլորվեցին պատրիարք սրբազան հոր առջև, որն իր ձեռքերը խաչանիշ դնելով յուրաքանչյուրի գլխին, արտասանեց ձեռնադրության աղոթքը՝ «Ես դնեմ զձեռս ի վերայ սորայ և դուք ամենեքեան աղօթս արարէք զի արժանի լինիցի սա զաստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Ողջույնից հետո աղոթքով և շարականներով ընծայալներին շնորհվում է քահանայության հատուկ եկեղեցական զգեստներ:

ՄԻ ՊԱՀ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Օծում Նորընծաների

Դպիրները եղանակում են «Առաքելոյ աղաւնոյ» հոգեզմայլ շարականը, և պատրիարք սրբազան հայրը սրբալույս մյուռոնով օծում է յուրաքանչյուր Նորընծայի ճակատն ու ափերը՝ նույն պահին նոր անուններով վերակոչելով նրանց. Սարգիս սարկավագը՝ տ. Գեղարդ աբեղա, և Համբարձում սարկավագը՝ տ. Ասպետ աբեղա:

Այնուհետև պատրիարք սրբազանն աղոթքով և օրհնությամբ Նորընծաներին է մատուցում սուրբ սկիհը, որպես խորհրդանիշ ս. պատարագ մատուցելու իրավունքի: Նորընծաները հավատացյալ ժողովրդին են բաշխում իրենց անդրանիկ օրհնությունը: Օծման արարողության ավարտին պատրիարք սրբազանը գեղեցիկ և ներշնչված քարոզով իր երկու հոգևոր զավակներին հորդորում է հավատարիմ մնալ Հայաստանյայց եկեղեցու դարավոր ու սուրբ ավանդություններին և ծառայել նրան որպես անընկուն և հավատավոր մշակներ:

Վեղարի տվչություն

Երեկոյան ս. Հակոբյանց Մայր տաճարում, ընթերցումներով և շարականների երգեցողությամբ, պատրիարք սրբազան հայրը կատարեց Նորընծաների վեղարի տվչությունը:

Նույն օրը, երեկոյան, սրբազան պատրիարք հոր նախագահությամբ միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում նաև Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի ուսանողները: Նորընծաներին այս առիթով շնորհավորում են միաբանության անդամները: Տ. Գեղարդ աբեղա Տավուտլարյանն իր և իր օծակից եղբոր անունից երախտագիտության և շնորհակալության խոսք է ասում պատրիարք սրբազան հորը՝ օրվա հոգևոր տվչության առթիվ, և խոստանում իրենց հետագա աթոռանվեր աշխատանքով արդարացնել իրենց վրա դրված հույսերն ու ակնկալությունները:

Ճաշկերույթի ավարտին պատրիարք սրբազան հայրը շնորհավորում է Նորընծաներին և մաղթում նրանց հավատարիմ մնալ իրենց սուրբ կարգին և աշխատել ի պայծառություն սուրբ Աթոռին և հայ եկեղեցուն:

Տ. Գեղարդ աբեղա Տավուտլարյանը ծնվել է Բեյրութում 1951 թ.: Մեծացել է որբ: Իր նախնական կրթությունը ստացել է Բեյրութի Սահակյան վարժարանում և 1964 թ. ընդունվել է Ժառանգավորաց վարժարան:

1974 թ. հունիսին ավարտել է ընծայարանը:

Տ. Ասպետ աբեղա Պալյանը ծնվել է 1948 թ. Գամշլիում (Սիրիա): Իր նախնական կրթությունը ստացել է Բեյրութում, Ազգային վարժարանում, ապա 1966 թ. ընդունվել Ժառանգավորաց վարժարան:

Ընծայարանի եռամյա դասընթացն ավարտել է 1974 թ. հունիսին:

Հարություն սարկավագ Աթեշյանը ծնվել է Տիգրանակերտում (Թուրքիա) 1954 թ.: 1967 թ. ընդունվել է Ժառանգավորաց վարժարան: Այժմ ընծայարանի երկրորդ կուրսում է:

Հրանդ սարկավագ Շերպեթճյանը ծնվել է 1955 թ. Կ. Պոլսում: Զավակն է տ. Գեղամ քահանայի: 1970 թ. ընդունվել է Ժառանգավորաց վարժարան: Այժմ սովորում է ընծայարանի երկրորդ կուրսում:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է աբեղաներին ու բարեմաղթում նրանց՝ լինել «մշակք առանց ամօթոյ» և արդարացնել տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր հույսերն ու ակնկալությունները՝ ճշմարտապես լինելով հայ եկեղեցու հոգեվոր-սպասին կանչված նվիրյալ հոգևորականներ՝ աթոռանվեր միաբաններ:

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ԴԵՐԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցին կրոնական, մշակութային, ազգային մի հաստատություն է, որը գալիս է դարերից ու գնում է դեպի հավիտենականություն:

Մեր ժողովրդի համար մեր եկեղեցին պատմական այլևայլ պայմանների բերումով դարձել է նաև մեր ազգային նվիրական զգացումների, մեր մշակույթի ծաղկման ու զարգացման կենտրոն: Եվ այս պարագան ո՛չ թե թուլացրել է մեր եկեղեցին, այլ հզորացրել ու տվել այս սուրբ հաստատությանը հայեցի կնիք:

Մեր ժողովրդի պատմության յուրաքանչյուր ժամանակաշրջան իր հրատապ խնդիրներն է առաջադրել և յուրաքանչյուր դարաշրջան իր հոգևոր աննձնուրաց, հավատավոր զավակներն է ծնել այդ հարցերին պատասխանելու գրչով, խոսքով, աղոթքով և երբեմն նաև իրենց կյանքով:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին, որպես հավերժ կենդանի ապրող հաստատություն, գոյատևել է և պատվով կատարել իր կրոնական, ազգային և մշակութային առաքելությունը:

Փոխվում են ժամանակաշրջանները: Գիտության, տեխնիկայի առաջընթացը փոխում է մարդկանց հոգեբանությունը: Նորանոր գաղափարախոսություններ, պատմական նպաստավոր կամ անպաստ դեպքեր տակնուվրա են անում ժողովուրդների կյանքը, նրանց տնտեսական և քաղաքական վիճակը: Նոր պայմանները ծնում են նոր մարդ՝ իր նոր հասկացողությամբ, գաղափարախոսությամբ, ճաշակով, գիտական մակարդակով: Տեղի են ունենում ուրացումներ և պատվանդանի վրա բարձրանում նորանոր աստվածներ:

Այդպես եղավ 20-րդ դարի սկզբին: Առաջին համաշխարհային պատերազմը, ամբողջ աշխարհով մեկ հայտնի մի քանի հեղափոխությունների շարքը, նոր գյուտերը հիմքից ցնցեցին համայն մարդկությանը:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը մեր ժողովրդի զավակները ապրում էին իրենց հայրենի երկրում: Մեր եկեղեցու զինվորյալ զավակների համար հիմնական խնդիրներն էին՝ լուսավորել ժողովուրդը Ավետարանի լույսով, մասնակցել մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին և գլխավորել նրա մշակութային կյանքը: Իսկ եղեռնից հետո մեր ժողովրդի կյանքում ստեղծվեցին նոր պայմաններ: Արևմտահայաստանը և արևմտահայությունը, որպես աշխարհագրական ազգային հավաքական ամբողջական հասկացողություն, վերացավ: Երկիրը ամայացավ իր բնիկ տարրից, և մահվան ճիրաններից մի կերպ փրկվածները սփռվեցին ամբողջ աշխարհով մեկ՝ ստեղծելով սփյուռք, սփյուռքահայություն հասկացությունները:

Արևելահայաստանում, պատմական Հայաստանի փոքր հողակտորի վրա, ստեղծվեց Սովետական մեր Հայաստանը, որն այդ օրվանից դարձել է համայն հայության

համար լույսի և հույսի աղբյուր՝ կյանքի գոյատևման պայքարում:

Մեր ժողովրդի հետ Հայաստանյայց եկեղեցին ևս ապրեց իր դառը ճակատագիրը. իր սպասավորներից շատերը նահատակվեցին, նոսրացան հոգևոր դասի շարքերը, բայց շուտով Երուսաղեմը, Էջմիածինը, Անթիլիասը եղան այն կրթական-կրոնական հաստատությունները, որտեղ եկան դաստիարակվելու եկեղեցու և հայրենիքի սուրբ սեղանների վրա պատարագվող սերունդներ:

Ստեղծված պատմական նոր պայմանները նոր խնդիրներ դրեցին եկեղեցու և նրա սպասավորների առաջ:

Այսօր մեր ժողովուրդը նահապետական սովորություններով, կենցաղով անաղարտ մնացած նախկին զանգվածը չէ: Հայ գյուղացին հայրենիքում իսկ, հակառակ այն բանին, որ կապված է իր հողին, նախկին գյուղացին չէ, նա իր կրթական մակարդակով չի զիջում որևէ երկրի քաղաքացու կրթական մակարդակին: Գիտության, արվեստի, տեխնիկայի համընդհանուր զարգացումը ամենուրեք մարդկանց կենցաղը և գիտակցությունը հիմնովին փոփոխության է ենթարկել:

Մեր ժողովրդի այլևայլ հատվածներ հայրենի երկրից հեռու ճակատագրի բերումով ապրում են տնտեսական, քաղաքական, գաղափարական տարբեր պայմաններում: Ըստ այնմ էլ այսօր հայ հոգևորականի գործը տարբեր պայմաններում տարբերվում է: Միջին Արևելքում, Հայաստանում, զույգ Ամերիկաներում և Եվրոպայի պայմաններում գործող հայ հոգևորականի աշխատանքը միմյանցից տարբերվող հատկանիշներ ունի: Աշխատանքի զանազան բնույթն իսկ ստիպում է խոսել հայ հոգևորականի դերի մասին:

Այսօր էլ հայ հոգևորականը մեր ժողովրդի պատմության, եկեղեցու պայծառացման գործում ակնառու դեր ունի կատարելիք: Առեք ձեր առաջ աշխարհի քարտեզը և տեսեք, թե որտե՞ղ չկան հայ բեկորներ: Ունենք կազմակերպված գաղութներ, քաղաքական և տնտեսական պայմանների բերումով քայքայվող ու նոր ստեղծվող գաղութներ, որոնցից յուրաքանչյուրն իր ցավերն ու հոգսերն ունի, և հոգսերից ամենամեծը հայը հայ պահելն է, որի համար անհատական պայքարը շատ քիչ է: Հայը հայ պահելու գործը համազգային գործ է, և մենք ազգովին պետք է պայքարենք սպիտակ ջարդի դեմ:

Վերհիշյալ պայմաններում հայ հոգևորականը շատ անելիք ունի. նկատի ունենք իրենց կոչման բարձր գիտակցության վրա գտնվող մեր հոգևոր եղբայրներին, լինեն նրանք կուսակրոն կամ ամուսնացյալ քահանաներ: Մեր այժմյան գործերի դժվար կացությունն իսկ մեզ հուշում է միանգամ ևս նշել, ընդգծել պատահական, կյանքում ձախողված, մեր եկեղեցին, դարավոր այս հաստատությունը անվանարկող մարդկանց հոգեվորական ձեռնադրելու հարցը:

Հայ հոգևորականը որտեղ էլ որ պաշտոնավորելիս լինի, պետք է անպայման անցնի վանական կյանքի կրոնական կրթության բովով: Նրա մեջ միս և արյուն պետք է դառնա իր եկեղեցու դավանանքը, կանոնը, ծեսը: Այս ձևով նա կդառնա լիարժեք հայ հոգևորական, որը հասկանում է մեր եկեղեցին, նրա պատմությունը, իր ժողովրդի հոգին և ունկնդիր է լինում իր հայրերի քարոզած Ավետարանի ճշմարտություններին:

Հավատացյալ լինել, մի քիչ ծիսակատարություն իմանալ, չի նշանակում հոգևորական դառնալու բոլոր շնորհներն ունենալ: Մեր օրերին անհանդուրժելի է անգրագիտությունը և կիսագրագիտությունը: Հոգևորականը առնվազն պետք է ունենա միջնակարգ կրթություն, պրպտող միտք, հավատք իր կատարած գործի հանդեպ, լինի կարգապահ, նախաձեռնիր իր եկեղեցու շահերի նկատմամբ, հեռու՝ փառասիրությունից և արծաթասիրությունից:

Մեր ժողովրդի ամբողջ աշխարհով մեկ սփռված լինելը և նրա հոգևոր կյանքի պահանջները հաշվի առնելով, կարելի է հայ հոգևորականի աշխատանքի միջավայրը բաժանել երեք գլխավոր մասերի՝ ցույց տալով նրա աշխատանքի ձևն ու բնույթը:

Առաջին. Վանական շրջանակում աշխատող հոգևորականներ:

Ունենք երեք վանքեր. ս. Էջմիածնում, Երուսաղեմում և Անթիլիասում:

Վանքերում միաբանները ապրում են համախումբ՝ համայնական-վանական մի կյանքով: Նրանք նույն ընտանիքի անդամներն են, որոնք իրենց կարողությունների համապատասխան վարում են այլևայլ պաշտոններ: Այդ աշխատանքները կարող են լինել տվյալ վանքի վարժարանում, տպարանում, ամսագրի խմբագրությունում, Մատենադարանում, Վեհարանում կամ պատրիարքարանում, դիվանատանը, տաճարում, սրբավայրերում և այլուր:

Վանքերում է, որ դարբնվում է մեր այսօրվա հոգևոր սերունդը: Վանքի հոգևոր դպրոցի շրջանավարտները ձեռնադրվում են կուսակրոն կամ ամուսնացյալ քահանաներ, կամ դառնում են ուսուցիչներ և հասարակական գործիչներ: Այստեղ է, որ նրանք զինվում են սուրբ գրական, հայա-

գիտական և հանրակրթական գիտելիքներով, ստանում հայեցի կրթություն՝ դառնալու համար հայ եկեղեցու և մշակույթի անդաստանում աշխատող համեստ սպասավորներ:

Վանքերից դուրս, որպես հովիվներ կամ թեմական առաջնորդներ, նրանք նշանակվում են իրենց հոգևոր պետերի կողմից՝ ի հարկե նկատի առնելով նաև տվյալ թեմի կամ համայնքի ժողովրդի ցանկությունը:

Երկրորդ. Գաղութներ, որտեղ հոգևորականն իր աշխատանքի շեշտը դնում է կրոնական առաքելության և դաստիարակության վրա:

Վանքերից դուրս մեր հոգևոր եղբայրների համար չափված-ձևված գործունեության ասպարեզ չկա: Ամեն մի գաղութ, հայրենի երկրի ամեն մի շրջան, չասելու համար աշխարհում ամեն մի հայ եկեղեցի, ունի իր մտահոգությունները և յուրահատուկ պահանջները:

Մեր հայրենիքում, հայահոծ գաղութներում, օրինակ՝ Միջին Արևելքում, Կ. Պոլսում հոգևորականն իր եկեղեցու միմիայն ծիսակատար քահանան է:

Հայրենի երկրում հոգևորականը հայեցի դաստիարակությամբ, մշակութային գործունեությամբ ծանրաբեռնվելու մտատանջության տակ չէ, քանի որ հայրենի կառավարությունն իր բոլոր միջոցներով մեր երկրի քաղաքացիներին տալիս է հայեցի կրթություն, և օր-օրի վրա մեր մշակույթը, գիտությունը, զարգանում է՝ հիացմունք պատճառելով օտարներին իսկ:

Համարյա նույն պայմանների մեջ են գտնվում Միջին Արևելքի մեր հոգևոր եղբայրները: Այստեղ էլ հայրենակցական միությունները, կուսակցական և բարեգործական կազմակերպությունները իրենց ուսերի վրա են վերցրել նոր սերնդի հայեցի դաստիարակության գործը:

Կ.Պոլսում մեր ժողովրդի հատվածը գրտնվում է բոլորովին այլ պայմաններում: Կան հայկական դպրոցներ, որտեղ մեր երեխաները սովորում են իրենց մայրենի լեզուն: Այստեղ ևս քահանան միմիայն ծիսակատար պաշտոնյա է, սակայն պոլսահայ հատվածի համար եկեղեցին առավելապես և՛ աղոթքի տուն է, և՛ ազգային զգացումները արթուն պահող միակ հաստատությունը:

Քահանան միջնորդ է Աստուծո և ժողովրդի միջև: Նա իր հոտը եկեղեցուն կապելու համար պետք է ունենա ներկայանալի ձայն, լինի լավ քարոզիչ, իր երգեցողությամբ և խնամված քարոզներով հավատացյալներին կարողանա կապել եկեղեցու հետ, որպեսզի եկեղեցի եկող յուրաքանչյուր հավատացյալ իր հետ տանի գեթ հավատքի մի կայծ, ջերմանա Քրիստոսի կյանքով:

Մեր օրերում հավատացյալ մարդկանցից քչերն են հաճախում եկեղեցի:

Հովիվը չպետք է հուսահատվի: Կնունքի, պսակի, թաղման ծիսակատարությունները առիթ պետք է հանդիսանան եկեղեցուց հեռու կամ եկեղեցու հանդեպ անտարբեր մարդկանց շրջապատում Ավետարանի խոսքի զորությունը, ճշմարտությունը քարոզելուն: Հինգ-տասը լոպեի զրույցը պետք է առիթ ծառայեցնել Ավետարանի պատգամները հաղորդելու ունկնդիրներին: Նման առիթներով հատկապես հետաքրքրասեր երիտասարդներ հաճախ սիրում են հոգևորականի գիտելիքների պաշարը տնտղել: Վա՜յ այն հովվին, որը խեղճ է իր գիտելիքներով և իր գործի հանդեպ՝ թերահավատ: Հակառակ կրոնի հանդեպ իրենց անտարբեր կամ թերահավատ վերաբերմունքին, երիտասարդները ցանկանում են հոգեվորականի մեջ տեսնել հավատացյալին, Ավետարանի կյանքով ապրող մարդուն: Ուզում են իմանալ նրա կարծիքը, վերաբերմունքը կյանքում եղած գաղափարական պայքարների շուրջ: Խուսափել այս բոլորից անհնարին է: Հոգևորականը տվյալ երկրի քաղաքացին է, պարտավոր է իմանալ ժամանակի ոգին և պահանջները: Հեշտ չէ հովվի պարտականությունը: Ահա նրան են դիմում կյանքին նոր բացվող աղջիկներ ու տղաներ, որոնց հուզում են և՛ կրոնական, և՛ ազգային, և՛ համամարդկային, և՛ ընկերական հարցեր: Եկեղեցու սպասավորը պետք է այդ հարցերին տա սպառիչ, համոզիչ պատասխան՝ եկեղեցու և ազգի շահերի տեսանկյունից:

Հովիվը այցելություններ պետք է տա իր հոտին: Բայց այդ այցելությունները պետք է լինեն ծրագրված: Ամեն տեղ չէ, որ տնօրհնեքի սովորություն կա: Հոգատար հայրը այցելության ամեն մի առիթ ձեռքից բաց չի թողնի: Իր եկեղեցու անդամների ուրախությունը պետք է համարի իր ուրախությունը: Նրանց հաջողությունների համար պետք է ուրախանա: Մարդիկ երբ դժբախտության կամ սգի մեջ են, ավելի զգայուն են լինում: Եղբայրական մի խրատ, մխիթարական մի խոսք, քաջալերանք, կյանքի դառնությունների դեմ Ավետարանից մի քաղցր խոսք՝ կփարատի նրանց վիշտը, կթեթևացնի կյանքի բեռան տակ կքած նրանց ուսերը:

Հոգևորականի բնավորության քաղցրությունը, քաղաքավարի վերաբերմունքը կդյուրացնի իր հոգևոր աշխատանքը, որով-

հետև նա ժողովրդական մարդ է և պետք է սիրվի ժողովրդի կողմից:

Անձնական օրինակը վեր է ամեն ինչից: Տասնյակ ճառեր, քարոզներ այն ազդեցությունը չեն կարող ունենալ, որքան կենդանի օրինակը: Փարիսեցիների նման քահանայի խոսքի և գործի միջև հակասություններ չպետք է լինեն: Քարոզները պետք է տրվեն միշտ և ոչ հանպատրաստից: Այդ խոսքերի ետին պետք է կանգնած լինի Ավետարանի մարդը: Եկեղեցին կուսակցական ակումբ չէ, այնտեղ պետք է հնչի Քրիստոսի հավիտենական, կենդանի խոսքը՝ վեր հանելով մեր հայրերի հայրենասիրական, ազգային, մշակութային, եկեղեցաշեն ու կրոնական գործունեությունը անցյալում և մեր օրերին: Հովիվը պետք է հետևի իր հոտին, հետևի նրանցից յուրաքանչյուրի գաղափարական նախասիրություններին, տնտեսական և գիտական ինչ մակարդակի վրա էլ որ նրանք եղած լինեն:

Պատրաստված հոգևորականը կարող է օգտակար լինել նաև կիրակնօրյա դպրոցներում, որտեղ գալիս են եկեղեցական, կրոնական դաստիարակություն ստանալու մեր ապագա սերնդի ներկայացուցիչները: Եկեղեցու վաղվա անդամները նրանք են լինելու: Նրանք դառնալու են ապագա հայրեր ու մայրեր, փոխարինելու են իրենց ծնողներին, և մեր եկեղեցին կենդանի է մնալու նրանցով: Արհամարհել կամ չզբաղվել ներկա նոր սերնդով, նշանակում է վաղվա ծիլերն ու ծաղիկները չորացնել և եկեղեցին վերածել թանգարանի: Եկեղեցին հենց ինքը ժողովուրդն է, իսկ աղոթքի տաճարները՝ այդ ժողովրդի հավատքի քարեղեն արտահայտությունը:

Հոգևոր ասպարեզը երբեք էլ հեշտ չի եղել, դրա համար էլ «բազումք են կոչեցեալք», բայց «սակաւք են ընտրեալք»: Շուրջ երկու հազար տարի է, որ Քրիստոսը քարոզվել է, բայց քրիստոնեությունը իր էությամբ մարդկության կողմից լիովին դեռ չի ըմբռնվել: Նրա սիրո ուսմունքը մնացել է աննվաճելի մի բարձունք: Թեև քրիստոնյա ենք, սակայն գործերով, անձնական օրինակով հակառակն ենք ապացուցում: Քրիստոնեությունը ոչ միայն ոչ քրիստոնյա ժողովուրդների մեջ պետք է քարոզել, այլ նաև քրիստոնյա կոչված ժողովուրդների մեջ:

Հաճախ մեր հովիվները աշխատում են քրիստոնյա քույր եկեղեցիների հովիվների հետ կողք-կողքի: Անհրաժեշտ է ստեղծել եղբայրական հարաբերություն և սիրով համագործակցել, որովհետև քրիստոնեական եկեղեցին մեկ է՝ իր գլուխ ունենալով Քրիստոսին, իսկ եկեղեցիները նույն ծառի տարբեր ճյուղերն են կլիմայական, աշխարհագրական տարբեր պայմաններում հասակ առած և ուռճացած:

Երրորդ. Հայ հոգևորականի աշխատանքի բնույթը ցաքուցրիվ եղած հայ գաղութներում:

Հայ հոգևորականը այսպիսի միջավայրում ո՛չ միայն ծիսակատար քահանա է, այլ նաև քարոզիչ, խրատատու հայր, դաստիարակ, ուսուցիչ, կազմակերպիչ, ազգային գործիչ, խմբագիր: Եկեղեցին այսպիսի միջավայրում հայկական տուն է:

Պատկերացրեք մի քանի միլիոնանոց քաղաքում սփռված հայերին, որոնք միայն կիրակի օրերը կարող են հավաքվել եկեղեցու կամարների տակ:

Այսպիսի պայմաններում հովիվը եկեղեցու հոգաբարձուների օգնությամբ ունենում է իր եկեղեցու անդամների հասցեները, հեռախոսի համարները: Նա գիտի նրանց զբաղմունքի տեսակը, տնտեսական վիճակը, ընտանիքի անդամների թիվը: Հաճախ այցելության է գնում նախօրոք ժամադրություն վերցնելով:

Հովիվը պետք է իմանա նաև տվյալ երկրի լեզուն, որովհետև իր եկեղեցու անդամների նոր սերունդը հավանաբար չգիտի մայրենի լեզուն, այլապես նրանք երբեք չպիտի հասկանան միմյանց՝ չհասկանալով նաև մեր եկեղեցու և ժողովրդի պատմությունն ու ժամանակի մտահոգությունները:

Հայեցի դաստիարակության գործը լինելու է հովվի աշխատանքի մտահոգության կենտրոնում: Պետք է կազմակերպել ուսուցումը մայրենի լեզվի, հրատարակել երկլեզվյան թերթիկներ, կազմակերպել գեղարվեստական ցերեկույթներ կամ երեկույթներ: Խնջույքի հայկական ձևն ու ճաշերի տեսակներն իսկ իրենց կարևոր տեղն ունեն հայապահպանման գործում:

Շատերը հուսահատությամբ Եվրոպայի և զույգ Ամերիկաների միջավայրում հայեցի կրթության գործը գտնում են ժամանակավրեպ՝ ընդգծելով, որ մենք շուտով այդ գաղութներում հայեր չենք ունենալու:

Չժխտելով այդ դատումների մեջ որոշ ճշմարտություն, հիմնական հարցն է՝ այդ ձուլումը ձգձգել, ուշացնել՝ զորավիգ ունենալով և՛ այսօրվա հայրենիքի, և՛ ս. Էջմիածնի պայծառ իրականությունը:

Մանավանդ Հայաստանից դուրս հայ հոգևորականի պարտականությունն է՝ այս երկու հավիտենական ճշմարտություններով գոտեպնդել հայ պատանիներին և նրանց խանդավառել ս. Էջմիածնի և հայրենիքի գաղափարներով: Այս երկու սրբությունները դարերից են գալիս և միայն մերօրյա սրբություններ չեն:

Ս. Էջմիածինը մեր հավատքի կենտրոնն է, Ամենայն Հայոց Հայրապետության սիրտը, և ամեն մի հայ զավակն է Էջմիածնի, իսկ այսօրվա հայրենիքը՝ մեր երազների իրականացման ճանապարհին քարակերտ ու քարաժայռ այն պատվանդանը, որից թռիչք են առնելու նաև մեր ապագա երազանքները:

Հայրենի մեր երկրի կատարած նվաճումները գիտության, արվեստի, մշակույթի, ժողովրդական տնտեսության ասպարեզներում պետք է հպարտություն ներշնչեն, և ամեն մի հայ մտածի իր բաժինը բերել մեր երկրի էլ ավելի շենացման և բարգավաճման համար:

Էջմիածինը այսօր էլ մնում է այն սրբություն սրբոցը, որի միջոցով հայրենիք և սփյուռք հանկացությունները կամրջվում են, և հայ հոգևորականը մշտարթուն այդ կամուրջը կենդանի պահող, լուսավորող ջահակիրն է:

Մարդկանց կործանող երկու մոլորություններ կան՝ փառասիրությունը և դրամապաշտությունը: Հոգևորականը հեռու պետք է լինի այս մոլություններից: Լինենք համեստ, աշխատասեր և մեր անձը զոհաբերենք Աստուծո փառքի համար, որպեսզի վարձատրությունը այս կյանքում և անդենականում լինի կատարյալ, այլապես ի՞նչ արժեք պիտի ունենա շահել ամբողջ աշխարհը՝ կորցնելու գնով հավիտենական կյանքը:

Հայ հոգևորականը պետք է պայքարի խառն ամուսնությունների դեմ: Հովիվը իր ծխական աշխատանքը այնպես պետք է կազմակերպի, որպեսզի եկեղեցու շուրջ հավաքվեն հայորդիները՝ ստեղծելով համահայկական ջերմիկ մի մթնոլորտ: Այստեղ հայ պարմանները և պարմանուհիները միմյանց հետ կծանոթանան, և նրանց մտերմիկ ընկերական հարաբերությունները կարող են ավարտվել ամուսնությամբ: Այսպիսով որոշ չափով կարելի է կանխել ձուլման հիմնական վտանգներից մեկը:

Մեր ժամանակաշրջանը էկումենիկ շարժման ժամանակաշրջան է: Սփյուռքահայ մեր հոգևոր եղբայրները ապրում են օտար միջավայրում և հաճախ մասնակցում տարբեր եկեղեցիների կողմից կազմակերպված էկումենիկ աղոթքներին:

Համաշխարհային եկեղեցական խորհրդի կողմից խաղաղության պաշտպանության համար առաջ քաշված ամեն մի հարց հուզում է յուրաքանչյուր քրիստոնյա անհատի: Կյանքը պարտադրում է եկեղեցական տարբեր համայնքների հովիվներին բարեկամական, ընկերական կապեր մշակել: Եվ ամեն մի առաջադեմ շարժում, ուղղված ժողովուրդների մերձեցման և խաղաղությունը ամուր հիմքերի վրա դնելու խնդրին, չի կարող հովիվներին անտարբեր վիճակում պահել: Քրիստոսի խաղաղությունը անհրաժեշտ է համայն մարդկությանը, հատկապես մեզ նման քանակով փոքր ժողովուրդներին:

Հայ հոգևորականը խաղաղության դրոշակակիրն է լինելու այսօր, վաղը և հավիտյան:

Որոշ գաղութներում հայ ժողովրդի հատվածը դիտվում է որպես կրոնական մի համայնք, ըստ այնմ էլ եկեղեցու հովիվը համարվում է հայ համայնքի պետը: Այսպիսի միջավայրում հովիվը դառնում է իր ժողովրդի և տվյալ պետական մարմինների միջև կապ: Նրա միջոցով են լուծվում բազմաթիվ հարցեր: Դիվանագետի շնորհք, օրենքների և օտար լեզվի իմացում պարտադիր է հովվի համար, իր ժողովրդի շահերը պաշտպանելու գործում:

Հոգևորականից այսօր նահատակություն չի պահանջվում, ինչպես անցյալում: Բայց ամեն մի հայ հոգևորականի կյանքը մի այլ տեսակի մարտիրոսագրություն է, նվիրական, սրբազան մի զոհողություն՝ հանուն Քրիստոսի Ավետարանի լույսի տարածման և հանուն մեր հոգևոր արժեքների պահպանման ու զարգացման:

Հայ հոգևորականն այն առաքյալն է, որը իր հայրերից ժառանգ թողնված Ավետարանի և հայրենիքի լույսի ջահը ձեռքին, անվարան ու ինքնավստահ առաջ է ընթանում՝ լուսավորելով իր ժողովրդի ճանապարհը՝ հայացքն ուղղած դեպի մեր պայծառ ապագան: Եթե նա ընկնի իսկ կյանքի պայքարում, կգան ուրիշներ՝ նրա ձեռքից վերցնելու ծառայության ու հովվական առաքելության դրոշակը՝ անցնելու համար նույն ճանապարհներով, միշտ վառ բռնած մեր ժողովրդի հույսի, լույսի, արդարության ջահը...:

Հայ ազնիվ ու նվիրյալ հոգևորականը եղել և մնում է Ավետարանի «Քաջ հովիւը», «որ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ 11):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ
ՄԱՐՈՒՔՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ԾԱՐԵՑԻ ԻՇԽԱՆԱԶՈՒՆՆԵՐԸ ՀԱՂԲԱՏ ԵՎ ՍԱՆԱՀԻՆ ՎԱՆՔԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

ԺԲ դարի վերջում և ԺԳ-ի առաջին քառորդում Հյուսիս-արևելյան Հայաստանի կյանքը նշանավորվեց քաղաքական, տնտեսական ու մշակութային այնպիսի վերելքով, որը երազանք պիտի մնար հետագա հինգ-վեց հարյուրամյակների համար: Զաքարյան իշխանապետների դարն էր դա, արգասիքը ներքին ու արտաքին այն խոհեմ քաղաքականության, որ վարում էին վրաց-հայկական զինական ու պետական դաշինքի հեղինակները: Նրանց կազմակերպող ջանքերի շնորհիվ վերացավ սելջուկ թուրքերի տիրապետությունը, և դրվեց երկրի տնտեսական ու մշակութային բարգավաճման կայուն հիմքը:

Իրենց քաղաքական բեմելից սկսած՝ Զաքարյան զորապետները ամեն կերպ ջանում էին ամրապնդել ու մեկ դրոշի տակ պահել հայ ավատական տները: Նրանց եռանդուն օժանդակությամբ ոտքի կանգնեցին այդ տներից շատերը, որ պիտի հանգչեին իրենց վաղեմի փառքի բեկորների վրա: Այս ժամանակ Արցախ-Խաչենի Առանշահիկ իշխանությունը բաժանված էր արդեն երեք ճյուղի: Նրանցից յուրաքանչյուրն իր կշիռն ուներ տվյալ շրջանի համահայկական կյանքում: Եվ պատահական չէր Զաքարյանների մտահոգությունը՝ երեքին էլ պահելու կազմավորվող զինական ու քաղաքական նոր միավորի մեջ: Նման պարագայում սովորաբար ամենահուսալի միջոց էր համարվում արենակցական կապը: Խաչենի իշխանաց իշխան և Հաթերքի տեր Վախտանգը նրանց արյունակից էր գալիս. եթե Մահկանաբերդի տեր ու Տփղիսի ամիրա Քուրդի քույրը Սարգիս ամիրսպասալար Զաքարյանի կինն էր (Զաքարեի ու Իվանեի մայրը), ապա նույն Քուրդի դուստր Արգու-խաթունն էլ կնության էր տրված Հաթերքի տեր Վախտանգին: Սարգիս ամիրսպասալարն իր դստերերից երկուսին էլ հարս տվեց Խաչեն (Դոփը՝ Ծարի կամ Վերին Խաչենի տեր Հասանին, Խորիշահը՝ Ներքին Խաչենի տեր Վախտանգին), և խնամությունը դարձավ նրանց դաշինքն առավել ամրապնդող գործոն:

Զաքարյանների հովանավորությամբ և հատկապես Դոփի կազմակերպչական արժանիքների շնորհիվ բավականին հզորացավ Ծարի իշխանությունը: Բարեկարգվեցին հոգևոր կենտրոնները, ծաղկեց մշակույթը: Ծարի տարածքում աճած գործիչներից ոմանք երբեմն տոն էին տալիս հարևան զավառների հոգևոր կյանքին: Այս տեսակետից ուշադրության արժանի են ծարեցի իշխանազուն հոգևորականները, որոնց գործունեության շառավիղները հասնում էին Հաղբատ ու Սանահին:

Ներկա հոդվածը մի փորձ է վեր հանելու նշված ժամանակի ծարեցի հոգևոր գործիչներից երեքի կյանքը: Նրանք տոհմակիցներ էին, միմյանց հաջորդող սերունդների ներկայացուցիչներ, կրում էին նույն Հովհաննես անունը և ճակատագրի հետաքրքիր դասավորությամբ անցել են կյանքի ու պաշտոնական վերելքի նույն ուղին: Վերջին պատճառով էլ նրանք ինչ-որ չափով կրկնել են իրար, բայց և կատարել են ինքնատիպ ու հիշատակության արժանի շատ այնպիսի գործեր, որոնք նրանցից յուրաքանչյուրին առանձնացնում են և դասում մեր միջնադարյան մշակույթի երախտավորների շարքը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ԽԱՉԵՆԵՑԻ

Միջնադարի մղձավանջում, սելջուկ թուրքերի տիրապետության՝ մայլ ժամանակաշրջանում և ապա նրանց տիրապետության վերացումից շուրջ կես դար հետո եկած թաթար-մոնղոլների բնաջնջող հոսքի դեմ կանգուն մնալու համար ժողովրդին պետք էր մինչ այդ չեղած ու չտեսնված մի լարում: Անհրաժեշտ էր օգտվել ամենաանհաջող, համարյա բվացող հնարավորությունից և վերականգնել կործանվածը, ստեղծել նորն ու անկործանելին: Այլապես ժողովրդի ֆիզիկական ու հոգևոր գոյատևումն իբրև հարց էլ կվերանար: Այս պայմաններում ժողովրդի ստեղծագործական ուժերին ուղղություն տվող ողջամիտ մարդիկ էին պետք, մեծ կազմակերպիչներ: Եվ ծնվում, ժողովրդի ներսից ելնում էին նրանք: Մեկը վանք ու ամրոց էր կառուցում: Մյուսը դպրոցներ էր հիմնում, ժողովում հոգևոր մշակույթի գանձարանները: Երրորդը վերականգնում էր առաքելական սրբակների տակ հողին հավատարված շեներն ու այգեստանները: Լինում էր և այնպիսին, որ գերմարդկային ուժով իր մեջ այս բոլորն էր հաղորդում, դառնում ժողովրդի արարչական ուժի խորհրդանիշ:

Այդ այդպիսի մեկը, եռանդաշատ ու անհանգիստ մի հոգևորական, որի երկարատև կյանքը շուրջ ութ հարյուր տարի հետո մեզ է ներկայանում որպես ստեղծարար ճիրումի մի գեղեցիկ օրինակ: Վիճական արձանագրություններում նա իրեն կոչում է «Յովհաննէս Խաչենեցի», ուրիշները՝ «Յովհաննէս ի գաւառէն Խաչենոյ»: Այս կից անունները նրան ու իր հայրենակիցներին էին կապում հայրենի Խաչենից դուրս, տվյալ դեպքում՝ Հաղբատ ու Սանահին վանքերում, ուր հոգևոր բարձր պաշտոններ էին վարում, կամ Բաղաց Կապանում, ուր թագավորական գահն էին տեղափոխում Խաչենի իշխանության պայազատները:

Արցախի (ետնագույն Խաչենի) Առանշահիկ իշխանական տունը բազմաթիվ ճյուղեր էր արձակել: Սրանք իրավական ու նյութական տարբեր մակարդակների վրա էին գտնվում, չնայած իշխանական տիտղոսն անբաժան էր յուրաքանչյուրից: Իշխանությունները աստիճանաբար տրոհվում էին տարբեր ոստերի՝ տիրապետության իրենց տարբեր բնագավառներով ու միանգամայն տարբեր ճակատագրերով: Եվ սա արդյունք էր հին դարերից եկող ավատական ավանդների, որոնց համաձայն իշխանական տան ավագ արու զավակն էր հանդիսանում հոր վերխանորդն ու իշխանության ժառանգը: Մյուսները, ճիշտ է, օժտված էին իշխանական իրավունքով, ունեին իրենց բաժին ժառանգություն-հայրենիքը, սակայն պարտավոր էին զբաղվել իշխանության պաշտպանության գործով, այլ խոսքով՝ Երկրամասի գլխավորներն էին հանդիսանում:

Խաչենի իշխանությունը, հայ ավատական այս անբնականի կարգը պահպանելով հանդերձ, մեզ է ներկայանում իր նան մի այլ, համարյա անխախտ սովորույթով: Այստեղ Երկրամասի հոգևոր իշխանությունը ևս իշխանական տան ժառանգական իրավունքն էր: Հետևապես իշխանի արու զավակներից մեկը (հաճախ նույնիսկ երկուսը) պետք է կուսակրոնություն տրվեր, որպեսզի իրավունք ունենար ժառանգելու գավառի հոգևոր առաջնորդությունը: Կուսակրոն իշխանազունները Խաչենում տարբերակված էին. երեք ճյուղերից ամեն մեկն ուներ իրեն հատուկ հոգևորական անունը: Ծարեցիները Հովհաննես էին կոչվում, հաթերքցիները՝ Գրիգոր, Խոխանաբերդի կամ Ներքին Խաչենի տերերը՝ և՛ Հովհաննես, և՛ Գրիգոր:

Եկեղեցական ֆեմերի վրա եղած ժառանգական իրավունքն ինքնին հզոր խթան էր հոգևոր կենտրոնների բարգավաճման համար: Իշխանական տան ժառանգությունն ու տոհմական տապանատունը հանդիսացող վանքերը, նույն այդ իշխանական տան նյութական ու բարոյական բազմակողմանի օժանդակությամբ, ստեղծում էին իրենց առաջնակարգ դպրանոցները, մատենադարանները ու գրչական արհեստանոցները: Այսպիսով, վանքերը կատարում էին գավառների մշակութային կենտրոնների իրենց դերը և, այսօրվա խոսքով ասած, ստեղծում կադրեր ոչ միայն նույն վանքերի, այլև հարևան եկեղեցիների ու բնակավայրերի հոգևոր կյանքի բնականոն ընթացքն ապահովելու համար:

Խաչենի հոգևոր կենտրոններում կրթություն ու դաստիարակություն ստացած եկեղեցական գործիչները բարձր համարում ունեին Արևելյան Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Բավական է հիշել թեկուզ ԺԲ դարի այնպիսի անանավոր վարդապետների, ինչպիսիք էին Գրիգոր Տուտեորդին ու Հաղբատի եպիսկոպոս Բարսեղը[1], Հովհաննես Վանականը ու Վարդան Արևելցին, ծարեցի Հովհաննես անունով եպիսկոպոսները ու հաթերքցի Գրիգորները և շատ ու շատ ուրիշներ, որոնք իրենց կյանքն անմնացորդ ճիրեցին հայ մշակութային գործի կազմակերպմանն ու առաջընթացին:

Ծարեցի մեզ հայտնի առաջին Հովհաննեսը Դվինի ամուսին Հատաի եղբայրն է, մի եռանդաշատ հոգևորական, որի կյանքի ու գործունեության մասին պահպանվել են մատենագրական ու վիմագիր բազմաթիվ նյութեր: Խաչենի իշխանական (Առանշահիկ) տոհմի պայազատն էր նա, ծնված ու մեծացած փառավոր նախնիների օրրանում՝ Վերին Խաչենի լեռնաստանում: Հենց այստեղ էլ, մոտավորապես ԺԲ դարի կեսերին ստացել էր իր կրթությունն ու դաստիարակությունը և նույն դարի 80-ականների սկզբին արդեն հասում այր էր և Սանահնի վանքի առաջնորդը:

Կենսագրական հարուստ ու արժանահավատ նյու-

---

[1] 1172 թ. Հաղբատում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում «տեառն Բարսղի արհիեպիսկոպոսի» մասին գրված է. «...ըստ կամխանկատ գիտութեան վերնոյ դիտմանն՝ եկեալ ի գաւառէն Խաչենոյ, նղեւ... վերատեսուչ համայն քրիստոնէից Հայոց, որ ընդ գաւազանաւ թագաւորութեանն Վրաց» (Գարեգին կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 408):

թերով գծվում է Հովհաննես Ա-ի ապրած կյանքի երկար ու բեղմնավոր կյանքի տարեգրությունը՝ Սանահնի առաջնորդությունից մինչև Հաղբատավանք գնալը, այնտեղից հայրենի Խաչեն վերադառնալը և, վերջապես, շուրջ քսանամյա առաջնորդությունը Հաղբատի վանքում, ուր նա, հոգևոր իր խնդիրները հրաշալի կատարելուց բացի, ծավալեց շինարարական մի այնպիսի գործունեություն, որի արգասիքներն այսօր էլ մեզ են ներկայանում իբրև նույն դարի հայ ճարտարապետական արվեստի լավագույն կոթողներ։

Կիրակոս Գանձակեցին Հովհաննես Ա-ի կյանքի ու գործի մասին տարբեր առիթներով խոսելիս հիշում է և նրա մի խոշոր ծառայությունը, որի համար միայն արժեր, որ երախտագետ սերունդները չմոռանային նրան։ Այս Հովհաննեսն է եղել Սարգիս ամիրսպասալարի երկու որդիների՝ Զաքարեի ու Իվանեի դաստիարակը («Սնուցող նոցունց իշխանացն»)[2]։ Երկու մեծ զորապետները ԺԲ դարի վերջին և ԺԳ-ի սկզբին Մայր Հայաստանին զորավիգ եղան օտար բռնակալների դեմ պայքարելիս և գլխավորեցին հայրենի երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային վերելքը։ Նրանց խոհեմ քաղաքականությամբ էր, որ հայ ու վրացի ժողովուրդների ուժերը միավորվեցին՝ մեծապես խթանելով երկուսի առաջընթացին։ Չի կարելի այս զորապետների կենսագրության մեջ չտեսնել ու չգնահատել այն աքանչելի սերմերը, որ այնպես հմտորեն նրանց հոգու մեջ էր ձգել Հովհաննես ուսուցիչը։ Եվ հենց այն հանգամանքը, որ Զաքարեն իր քրոջ որդի (Հովհաննես Ա-ի եղբայր Հասանի տղա) Գրիգորին Հաղբատի առաջնորդությունից հեռացնելուց անմիջապես հետո հենց իր ուսուցիչ ու դաստիարակ Հովհաննեսին նշանակեց Արևելյան Հայաստանի ամենախոշոր թեմի առաջնորդ, վկայում է այդ օրերի Հայաստանի գերագույն իշխանապետի նրախտագիտությունը Հովհաննեսի նկատմամբ։

Հովհաննես Ա-ի մասին սլահպանված առաջին հիշատակությունը ԺԲ դարի 70-ական թվականների վերջից է։ Այստեղ նրա անունը կապվում է հայոց ազգային հոգևոր ավանդների պահպանման համար մղվող պայքարի և առանձնապես շինարարական-նորոգչական գործի հետ։

Նա մեկն էր Հյուսիս-արևելյան Հայաստանի հոգևոր այն առաջնորդներից, որոնք ԺԲ դարի 70—80-ականներին համառ պայքար էին մղում բյուզանդական թագավորի ու եկեղեցու՝ հայոց հավատի վրա կատարած հոնձգությունների դեմ։ 1178 թ. Գրիգոր Տուտեորդու, Դավիթ Քոբայրեցու և մյուսների հետ Հովհաննեսն ստորագրեց այն նամակները, որոնցով հյուսիս-արևելյան նահանգների վարդապետները մերկացնում էին բյուզանդական քաղաքականության՝ բարեկամական առաջարկներով քողարկված չար նպատակները և Գրիգոր Տղա կաթողիկոսին զգուշացնում էին չգայթակղվել կեղծ բարեկամության առաջարկներով։

Ապա մեկը մյուսի հետևից վիմական արձանագրություններն են խոսում Հովհաննեսի մասին։ Մի տեղ նա այգի է տնկում «մեծաս աշխատութեամբ», և իր եղբորորդի վարդապետ Գրիգորն էլ այգին նորոգում, խաչ է կանգնեցնում[3]։ Մի այլ արձանագրությամբ նրա շինարարական գործն է հիշատակվում։

Հովհաննեսի առաջնորդությամբ 1181 թ. կառուցվեցին Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցին ու նրա զավիթը, ճարտարապետական մի հույժ կարևոր ձեռնարկ, որի իրականացնողն էր ինքը՝ Հովհաննեսը, «աւգնականութեամբ ամիր Զրդին և վարդապետի մեծի Գրիգորի» (Տուտեորդի Խաչենեցու)[4]։

Երեք տարի հետո Տուտեորդին իր հայտնի խաչարձանի վրա հիշատակագրել է վանքի կաթողիկեի նորոգումը Հովհաննեսի առաջնորդությամբ[5]։ Հով-

---

[2] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 171։

[3] Յովհաննէս Ղրիմեցի, Պատմութիւն հոչակաւոր վանից Հաղբատայ ս. Նշանին, Վիեննա, 1865, էջ 150, Ս. Զալպեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, էջ 80։

Ինչպես Ղրիմեցու, այնպես էլ Զալալյանցի մոտ արձանագրության Հովհաննեսի բաժնում թվական է նշանակված Ո—1251, որ թյուրիմացություն է։ Արդեն պրոֆ. Կ. Ղաֆադարյանն է նկատել, որ այստեղ պարզապես գրի չեն առնվել «տասնավորի և միավորի գրերը» (Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե, 1957, էջ 188)։ Սակայն իրավացի չէ գիտնականը, երբ այս և 1181 թ. արձանագրությունների մեջ վանքի առաջնորդ հիշված Հովհաննեսին տարբեր է համարում Հովհաննես Խաչենեցուց և «քուերորդի պատրոնացն» Գրիգորին էլ նույնացնում Տուտեորդու հետ (Սանահնի, էջ 51)։

[4] Ղաֆադարյան, Սանահնի, էջ 104։ Սույն արձանագրության՝ Սանահնի Քոթուկում գրանցված տարբերակի մեջ «վարդապետի մեծի Գրիգորի»-ի փխ. «վարդապետի մեծի թագաւորին» է (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 3032, էջ 70), որ գրչական սխալ պիտի համարել։

[5] Տուտեորդու խաչարձանի գիրն է. «...Կանգնեցաւ ի հայրութեանն Յովհաննէսի, յորում ամի նորոգեցաւ կաթողիկէս սբ. ի թուականս ՈԼԳ» (1184) (Ղաֆադարյան, Սանահնի, էջ 180)։ Այստեղ և այլուր առաջնորդ է միայն Հովհաննեսը, և չի հաստատվում նրա այն աթոռակցությունը Տուտեորդու հետ, որի մասին Կ. Ղաֆադարյանն է գրում իր գրքի 53-րդ ու 185-րդ էջերում։ Տուտեորդին առաջնորդ է հիշված միայն 1189 թ. արձանագրությամբ (Ղաֆադարյան, Սանահնի, էջ 189), որ նշանակում է՝ նա կարճ ժամանակով առաջնորդ է եղել Հովհաննեսի ընդմիջումին։ Ուղղելի է նաև Կիրակոս Գանձակեցու մի տեղեկությունը, որի համաձայն՝ իբր թե Հովհաննեսը Սանահնի առաջնորդ է դարձել «զկնի մահուան Գրիգորոյ, զոր Տուտայ որդին կոչէին» (Կիրակոս, էջ 171)։ Մինչդեռ վերը վկայակոչված

հանքեսը Սանահնի առաջնորդ է հիշվում նաև հետագայի մի շարք արձանագրություններում, մինչև 1191 թ.[6]: Նկատի առնելով, որ 1195 թ. ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում Հովհաննես արդեն Հաղբատավանքի առաջնորդն է[7], պետք է մտածել, որ նա Հաղբատ է տեղափոխվել 1191 և 1195 թթ. միջև: 1196-ին տեղի ունեցավ Մխիթար Գոշի համար կառուցված Նոր Գետինի վանքի նվիրատվությունը: Ըստ Կիրակոսի վկայության՝ «Անդ էր և եպիսկոպոսն Հաղբատայ Յովհաննէս, առաքինի և սուրբ այր»[8]:

1198 թ. մի արձանագրության համաձայն Հովհաննեսը դեռևս եպիսկոպոս էր Հաղբատում: Ինքն այգի էր գցել Սևորդյաց ձորում, մի խաչքարի վրա արձանագրել այդ մասին: Նրա գրի տակ էլ վանքի վարդապետ Գրիգորը թողեց իր արձանագրությունը. «Ի ՈՒԷ—(1198) թվին ես՝ Գրիգոր վարդապետս քուերորդի պատրոնացս, Սոր շինեցի զայգիս և կանգնեցի զխաչս յառաջնորդութեան Հայր Յովհաննէսի վասն յիշատակի նորա և ինձ»[9]:

Այսքանից հետո է, որ Հաղբատի առաջնորդ Հովհաննեսը, ըստ Կիրակոսի տեղեկության, «եթող զաթոռն և գնաց ի Խաչէն»[10]:

Ինչո՞ւ աթոռը թողեց ու գնաց: Կիրակոսի պատմության մեջ պատճառը չկա: Հովհաննես Ղրիմեցին, չգիտես որտեղի՞ց քաղելով, այդպիսի պատճառ է հաստատում Գրիգոր վարդապետի (որին նա թյուրիմացաբար Տուտեորդի է համարում) «խարդավանքները», իբր թե, «զզուեալ ի մխանաց Գրիգորի», Հովհաննեսը թողեց Հաղբատը և գնաց ոչ թե Խաչեն, այլ Սանահին, քանի որ Սանահնում 1205-ին պիտի քանդակեր հյուրատուն կառուցելու մասին իր արձանագրությունը[11]:

Սակայն, անկախ նրանից, որ ոչ մի աղբյուր չի հաղորդում Հովհաննեսի՝ Խաչեն գնալու պատճառը, Ղրիմեցու վարկածն սխալ է իր մանրամասնություններով: Գրիգոր վարդապետը, ինչպես հետո կտեսնենք, Հովհաննեսի եղբորորդին էր և ո՛չ թե Տուտեորդին, Հովհաննեսն իսկապես Խաչեն գնաց և ո՛չ թե Սանահին:

Խաչենում Հովհաննեսը մնաց իր ոգուն ու կոչմանը հարազատ. օգնեց հայրենի գավառի հոգևոր մշակույթի զարգացմանը, բարեկարգեց Դադի վանքի ու Խսթրավանքի թեմերը: Այստեղ նա, հավանաբար, մնաց միայն մի երեք-չորս տարի, քանի որ 1198-ին դեռևս Հաղբատում էր ու 1205-ին էլ Սանահնում պիտի լիներ ու պիտի արձանագրեր իր շինարարական գործերը: Եվ այս կարճ ժամանակում նա կառուցում է Խսթրավանքի կաթողիկեն, նրա պատի վրա թողնելով (1204 թ.) մի արձանագրություն, որով պատմում է, թե ինչպես կառուցեց եկեղեցին, այնտեղ հավաքեց խաչեր, խաչքարեր, ձեռագիր մատյաններ, տնկեց Զոթաց այգին, ապա մատաղ մի այգի (մատաղիս)[12] ևս գցեց և այս բոլորը, Հաթերքի իշխանաց իշխան Վախտանգի միջոցությամբ, հանձնեց իր եղբայր Հասանին ու նրա որդիներին Հասանն էլ նույն արձանագրության տակ դրել է իր գիրը, պատմելով, որ երբ՝ իր եղբայր Հովհաննեսը կառուցեց եկեղեցին ու վանքն իրեն տվեց, ինքն էլ եկեղեցուն ավիրեց խանձորաքակը (երևի գյուղի անունն է, որ հիշվում է նաև ուրիշ արձանագրություններում)[13]:

1205 թ. Հովհաննեսը նորից Սանահնում էր: Ոչ միայն այնտեղ էր, այլև արդեն կառուցել էր վանքի հյուրատունը, նրան ավիրելով Կոշաձորի այգին և «Ուռնագոմուց կեսն»: Այս բոլորը պատմում է նրա կանգնեցրած մի գեղեցիկ խաչքարի արձանագրությունը. «Ի թվականիս հայոց ի ՈԾԴ (1205), ի թագաւորութեանն Վրաց Թամարին, յամիրսպասալարութեանն Զաքարի և Իւանի՝ եղբարց հարազատաց, որդեաց մեծին Սարգսի, ես՝ Հայր Յովհաննէս գաւառաւ Խաչենցի, եկեալ բնակեցա ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս եւ շինեցի զհիւրատունս վասն փրկութեան հոգւոյ իմոյ եւ արեւշատութեան տէրանց մերոց Զաքարի եւ Իւանի, ետու ի հիւրատունս

արձանագրությունից երևաց, որ Հովհաննեսի առաջնորդության օրոք Տուտեորդին վարդապետ էր նույն վանքում:

[6] Ղաֆադարյան, Սանահին, էջ 105—106:

[7] Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 383, Գարեգին կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 591. «զրեցաւ գիրքս այս ի գաւառիս Զորոյգետ, ի վանքս Հաղբատ... յեպիսկոպոսութեան տեառն Յովհաննիսի»:

[8] Կիրակոս, էջ 218:

[9] Ջազվեանց, Ա, էջ 80:

[10] Կիրակոս, էջ 174:

[11] Ղրիմեցի, Պատմութիւն, էջ 154:

[12] Մ. Բարխուտարյանցը (Արցախ, էջ 194), այս արձանագրությունն ընդօրինակելով, «մատաղիս»-ն ընդունել է որպես Վաղաթաս գյուղի մոտ գտնված (իր ժամանակ ավերակ) մի հին գյուղի անուն:

Առաջին անգամ Կարապետ եպիսկոպոսն է կասկածի տակ առել նման բացատրությունը, ենթադրելով, որ, եթե նույն «մատաղիս» բառը կրկնվում է նաև ուրիշ արձանագրություններում, ապա բառը հասարակ անուն է. «մի արդյունաբեր տեղ է երևի և ոչ թե այժմ ավերակ դարձած գյուղի անուն (տե՛ս Կարապետ եպիսկոպոս, Դոփյանք և Մելիք-Ծահնազարյանք, Էջմիածին, 1914, էջ 59):

Այսքանից հետո Թադ. Ավդալբեգյանը «մատաղիս»-ը միանգամայն իրավացի բացատրել է որպես նոր, ջահել այգի՝ «մատաղ» բառից, ինչպես որ «Նորք»-ը՝ «նոր, մատաղ այգի» է նշանակել ակզբնապես: Մատաղիսը և Նորքը հետագայում են դարձել հատուկ անուններ (տե՛ս Թ. Ավդալբեգյան, Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ. Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 317):

[13] Այս արձանագրությունը՝ մի քարի վրա, այժմ պահվում է Մաշտոցի անվան մատենադարանի ցուցասրահում:

զԿոշաձորին այգին և զՈւռնագոմաց կէսն եւ կանգնեցի զխաչս...»[14]։

Այս անգամ արդեն Հովհաննեսը Սանահնում երկար չի մնում, որովհետև տեղի է ունենում մի դեպք, որի շնորհիվ նա կրկին նշանակվում է Հաղբատավանքի եպիսկոպոս։

Վրաց ու Հայոց զորքերի գերագույն հրամանատար Զաքարեն գերագույն իշխանավորն էր դարձել նաև Հայաստանի ազատագրված նահանգների, իրեն համարում էր Հայոց թագավոր ու շահնշահ և ուզում էր ապրել թագավորավայել։ Նա որոշել էր «շարժական» եկեղեցի ունենալ «ի պէտս ճանապարհաց... տեղի պաշտամանն և պատարագի»։ Զաքարեի խոստովանահայր Մխիթար Գոշը խորհուրդ է տալիս այդպիսի քայլ չանել ինքնակամ, այլ նախապես թույլտվություն խնդրել Հայոց կաթողիկոսից ու Հայկական Կիլիկիայի թագավոր Լևոնից։ Զաքարեն այդպես էլ անում է։ Գալիս է թույլտվության գիրը, հետն էլ՝ եկեղեցական ծեսերի կատարման ուղ նոր կանոններ։ Ամիրսպասալարն իր աթոռանիստ Լոռե քաղաքում ժողովի է հրավիրում Արևելյան Հայաստանի հոգևոր առաջնորդներին, որպեսզի նրանց համաձայնությամբ գործի դնի ստացված թույլտվությունն ու նոր կանոնները։ Ժողովում պառակտվում են հոգևոր հայրերը. «տմանք հաւանեցան, և կէսն ոչ»[15]։ Ընդոստ հոգևորականները բացահայտ կերպով ընդդիմանում են Զաքարեի նախաձեռնությանը՝ ուղ կանոնների մեջ տեսնելով բյուզանդական միջամտության մի նոր դրսևորում (Գրիգոր Տղային նրանք ինն կանոններ էին առաջարկել)։

Ընդոստների մեջ էր նաև Հաղբատի առաջնորդ Գրիգորը՝ Զաքարեի քույր Դոփի որդին։ Եկեղեցական նոր կանոնները Հաղբատում կիրառելու համար Զաքարեի կողմից ուղարկված Մինաս եպիսկոպոսին ու նրա պաշտոնյաներին Գրիգորը բրածեռ անել է տալիս[16]։

Զայրացած Զաքարեն մահապատժով է սպառնում Գրիգորիսին։ Սա փախչում է Կայեն գավառը, Մխիթար Գոշի մոտ, հուսալով, որ զորավարի խոստովանահայրն իրեն կփրկի վերահաս պատժից։ Հետո Գրիգորիսն այստեղից էլ անցնում է Կեչառիս, որտեղ և Զաքարեի մարդիկ բռնում ու կալանավորում են նրան։

Զաքարեն Գրիգորիսի փոխարեն Հաղբատի առաջնորդ է նշանակում Հովհաննեսին։

Ե՞րբ է գումարվել Լոռեի ժողովը, որից հետո Ղ կատարվել է Հովհաննեսի ձեռնադրությունը։ Ժողովի հանգամանքների մասին խոսող Կիրակոսը նրա գումարման տարին չի նշում։ Այն պետք է պարզել օժանդակ փաստերի միջոցով։ Հետազոտողները տարբեր տարբերվեր են ընդունում, առանց ասելու, թե ինչի՞ հիման վրա։ Այսպես. Հովհաննես Դրիմեցին Լոռեի ժողովի տարի է համարում ՈԾԴ (1205) թվականը և սրան հաջորդած Անիի ժողովի տարի՝ ՈԾԵ (1206) թվականը[17]։ Համազասպ Ոսկյանը ևս այն կարծիքին էր, թե Լոռեի ժողովը գումարվել է 1205-ին[18]։ Ոսկյանի կարծիքով՝ Անիի ժողովն էլ գումարվել է 1207-ին[19]։ Պրոֆ. Մելիքսեթ-բեկի կարծիքով՝ Լոռեի ժողովը գումարված պետք է լինի 1204—1205 թթ.[20]։ Կ. Ղաֆադարյանը համաձայն չէ նախորդների հետ և նշում է, թե «հաստատուն վկայություն ունենք այն մասին, որ ...Հովհաննեսը վանքի (Հաղբատի.— Ու. Բ.) առաջնորդ է դարձել Լոռվա (Լոռեի.—Ու. Բ.) 1208 թվականի ժողովից հետո»[21]։ Սակայն, դժբախտաբար, գիտնականը չի նշում այն «հաստատ վկայությունը», որի համաձայն պետք է որ Լոռեի ժողովը գումարված լիներ 1208-ին։

Անիի ժողովի գումարման տարեթիվը քննության առարկա հարցի համար անկարևոր համարելով, մենք պետք է ընդունենք, որ Լոռեի ժողովը տեղի է ունեցել 1205-ին կամ ամենաուշը 1206-ին, բայց երբե՞ք 1208-ին։

Սրա համար կա արդեն շատ հաստատուն տեղեկություն. 1207 թվականին Հաղբատում, «ընդ հովանեաւ Սրբոյ Նշանին» ընդօրինակվել է մի Աստվածաշունչ՝ «յառաջնորդութեան սուրբ հայրապետիս մերոյ տեառն Յոհաննիսի, ի թուիս հայոց ՈԾԶ (1207)[22]։ Այս նշանակում է՝ Լոռեի ժողովը պետք է տեղի ունեցած լիներ 1207 թվականից առաջ, որպեսզի նրանից հետո Զաքարեն «քվերորդի» Գրիգորիսին բանտարկեր, և նրա տեղ Հաղբատի առաջնորդ նշանակեր «քվերորդու» հորեղբայր Հովհաննեսին, և այս Հովհաննեսն էլ գործի անցած լիներ, որպեսզի գրիչը 1207-ին նրա անունը հիշեր որպես վանքի առաջնորդի։

Ուրեմն, Հովհաննես վարդապետը Հաղբատավանքի առաջնորդ է դարձել 1205-ին կամ ամենաուշը 1206-ին։

Սրանից հետո Հովհաննեսը, որ արդեն պետք է առնվազն 65—70 տարեկան ծերունի լիներ, կապվում է միայն Հաղբատի հետ։ Այստեղ են անցնում նրա կյանքի վերջին քսան տարիները, որոնց թողած հիշատակների հիման վրա միայն հետազոտողները

---

[14] Ղաֆադարյան, Սանահին, էջ 183—184։

Զալալյանցը (Ա, էջ 28) և Մեսրոպ Մագիստրոսը (էջ 118) այս արձանագրության թվական են արտագրել ՈԶ (1157), որ չի համապատասխանում Թամարի թագավորության (1184—1213 թթ.) ժամանակին (տե՛ս Ղաֆադարյան, Սանահին, էջ 184)։

[15] Կիրակոս, էջ 172։

[16] Անդ, էջ 178։

[17] Դրիմեցի, Պատմութիւն, էջ 86։

[18] Հ. Ոսկյան, Մատենագրական քննություններ, Վիեննա, 1928, էջ 185։

[19] Անդ, էջ 188։

[20] Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հարևանի մասին, Բ, Երևան, 1938, էջ 80։

[21] Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 30։

[22] Գարեգին կաթողիկոս, Ցիշատակարանք, Ա, էջ 785։ Սույն ձեռագրի մասին մանրամասնորեն տե՛ս Գարեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Ա, 1935, էջ 71 և հետգ.։

նրան կոչում են խոշոր շինարար ու մեծ երախտավոր:

Կիրակոսը նրա գործունեությունից առանձնացնում և մի հատուկ աքանչացումով է պատմում Հաղբատի վանքի մեծ գավթի շինարարությունը. «...քակեաց զգաւիթն փոքրագոյն, որ ի դուռն կաթողիկէին Հաղբատայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուած, որ զարմացուցանէ զտեսողսն հիացմամբ»[23]:

Ապա՝ «Եւ այր առաքինի էր Յովհաննէս, և բազում գործս յիշատակի գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս և զհոչակաւոր գաւիթն եկեղեցոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողսն»[24]:

Եվ, իսկապես, միայն այս գավիթը բավական էր, որպեսզի գայիք սերունդները երախտագիտությամբ հիշեին նրա շինարարին:

Հետազոտողները, առանց բացառության, գտնում են, որ Հաղբատի մեծ գավիթը հայ ճարտարապետության ամենափառավոր կոթողներից մեկն է, «իսկ գավիթների ճարտարապետության մեջ՝ առաջինը»[25]:

Ե՞րբ է կառուցվել այս հոյակերտը: Հետազոտողներն իրարամերժ պատասխաններ են տալիս այս հարցին: Կ. Լ. Հովհաննիսյանը գտնում է, որ «Գավիթը հիմնված լինելով 1185 թ., այն հետագա մասնակի փոփոխություններից հետո ստանում է ներկայիս ձևը»[26]: Ոմանք գավթի կառուցման տարի են համարում 1201 թվականը[27]: Կ. Ղաֆադարյանն էլ, մերժելով այս վարկածները, որոնք անհիմն սխալ են, քանի որ հակասում են մատենագրական ու վիմագրական տվյալներին, հայտնում է հիշյալ կարծիքը. «...Մեծ ժամատան կառուցման սկիզբը պետք է համարել 1208 թվականը, Հովհաննես Խաչենցու առաջնորդության առաջին տարին, որովհետև երեք տարի հետո... այդ ժամատունն արդեն կառուցված էր առնվազն մինչև մուտքի ճակատակալ քարը, որի վրա կա 1210 թվականի արձանագրություն, իսկ ժամատան ավարտման թվականը որոշելու առայժմ ոչ մի հիմք չունենք, բայց գիտենք, որ 1210-ական թվականներից այն կողմը չի անցել:

«Նշանակում է, Հաղբատի մեծ ժամատունը կառուցվել է... 1208-ից հետո, 1210-ական թվականներին...»[28]:

Կ. Ղաֆադարյանի մոտ ժամատան կառուցման սկիզբը դրվում է 1208-ից հետո, որովհետև նրա կարծիքով՝ Հովհաննեսը վանքի առաջնորդ է դարձել այդ թվականին: Սակայն տեսանք, որ այս հաշիվը ճիշտ չէ. Հովհաննեսի առաջնորդությունն սկսվում է առնվազն երկու տարի վաղ՝ 1208-ին:

Կարելի է առավել կոնկրետացնել նաև ավարտման ժամանակը, որ հասկացվում է 1210-ից հետո, ավելի ճիշտ՝ 1210-ականներին: Սակայն չէ՞ որ կա ճակատակալ քարի վրա, մուտքի կամարի տակի ամբողջ տարածությունն լրացնող արձանագրությունը՝ քանդակված Զաքարեի ու Իվանեի կողմից 1210 թվականին: Ուրեմն, 1210-ականներն էլ վերացական պատկերացնել չի կարելի, քանի որ Զաքարեն մահացել է 1212-ին: Իսկ արձանագրությունը գրված է նրա անունից:

Դժվար է պատկերացնել, թե շենքն անավարտ է եղել, երբ Զաքարեն ու Իվանեն նրա վրա դրել են իրենց 19 տողանոց արձանագրությունը: Հետևապես չի կարելի մեծ գավթի ավարտման տարին 1210-ից հետո դնել: Ուրեմն կառուցումն սկսվել է 1208-ին, ավարտվել 1210-ին:

Այս առումով էլ ավելի հավանական ենք համարում Կ. Ղաֆադարյանի ենթադրությունն այն մասին, «որ ժամատան կառուցման արձանագրությունը դեռևս չգրված, Զաքարեի հրամարտակին են հատկացրել նրա (գավթի.—Ու. Բ.) պատվավոր տեղը»[29]:

Սա միանգամայն հասկանալի կդառնա, եթե նկատի ունենանք, որ Զաքարեն ու Իվանեն էին Հաղբատի ու շրջակայքի պատրոնները, գավիթը կառուցող Հովհաննեսի սաներն ու հովանավորները:

Հովհաննեսի գործունեության այս վերջին կամ Հաղբատյան շրջանը լի է մշակութային մի շարք երևույթներով: Նրա օրոք՝ և նրա գլխավորությամբ վանքը շարունակում էր կատարել գրչական խոշոր կենտրոնի իր դերը:

Այստեղ, հենց այս տարիներին ստեղծվում են բազմաթիվ ձեռագրեր, որոնցից մեզ հասած օրինակներն աչքի են ընկնում գրչական ու մանրանկարչական բացառիկ արժանիքներով: Այս տեսակետից եզակի երևույթ է «Գետաշենի» անվամբ հայտնի այն Ավետարանը, որ 1211 թ. «ի սուրբ ուխտս Հաղբատայ գծագրեցաւ ձեռամբ Յակոբայ, յառաջնորդութեան տեառն Յոհաննիսի արքեպիսկոպոսի»[30]: Մի այլ ձեռագիր՝ Տոնապատճառ, ստեղծվել է «ի թուականութեանս հայոց ՈԿԷ (1218) և ի հայրապետութեան սուրբ ուխտիս Հաղբատայ տեառն Յովհաննիսի հեզի և առաքինւոյ և (ի) սպարապետութեանս

---

[23] Կիրակոս, էջ 88:

[24] Կիրակոս, էջ 174:

[25] Գարեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ա, էջ 86:

[26] Կ. Լ. Հովհաննիսյան, XII—XIX դարերի հայկական ճարտարապետությունը. Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 288:

[27] В. Арутюнян, В. Сафарян, Памятники армянского зодчества, Москва, 1951, էջ 57:

[28] Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 92:

[29] Անդ:

[30] Մատենադարանի ձեռ. № 6288, թ. 348բ: Ձեռագրիս ճկարագրությունը տե՛ս Արցախ, էջ 262—268, ընդարձակ ու հանգամանալից քննությունը՝ Գարեգին Հովսեփյան, Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց (Գետաշենի Ավետարանը). Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Ա, էջ 41—75:

Հայոց և Վրաց Իւանեի և մանկանն Շահնշահի...»[31]։ 1220-ին ընդօրինակված մի ձեռագրի գրիչ խնդրում է՝ «զտէր Յովհաննէս զարհեպիսկոպոս... յիշեսջիք յաղաւթս ձեր»[32]։

Հովհաննես եպիսկոպոսի այս տարիների վաստակի մեջ պետք է մտցնել նաև նրա վանքաշինարարական գործունեությունն մի ուրիշ կողմը. երբ նրա գործունեությամբ Հաղբատում շինարարական ու վերանորոգչական հսկայական աշխատանք են կատարում և վանքին մեծամեծ ընծաներ տալիս ժամանակի մեծատունները՝ Տփղիսի հայ իշխանավորներից սկսած մինչև Վաչուտյանց և Ուքանանց տոհմերի պայազատները[33], մինչև իր հայրենի Խաչենի իշխաններն ու իշխանուհիները[34]։ Եվ իզուր չէ, որ վերջիններս իրենց արձանագրությունների մեջ Հովհաննեսի անունը հիշում էին մի առանձնահատուկ երախտագիտությամբ՝ ոչ միայն որպես վանահոր։ Այսպես, ո՛ն Հովսեփ, որ Հաղբատում ՈԺԸ (1209) թ. խաչքար է կանգնեցրել «Յառաջնորդութեամբ տէր Յովհաննիսի և ի տէրութեան Զաքարէի և Իվանէի», խնդրում է հիշել նշված անունները և՝ «եւս առաւել զՅովանէս»[35]։

Սակայն այսպես թե այնպես Հովհաննես Ա-ը հայտնի է որպես եռանդուն շինարար և դժվար է պատկերացնել, թե նա հանգիստ պիտի նստեր Հաղբատի մեծ տաճարին կից գավթի կառուցումից հետո։ Պահպանված արձանագրությունները պատմում են, որ 1211 թվականին նորոգել է վանքի՝ 1025 թվականին կառուցված սուրբ Գրիգոր եկեղեցին։ Այդ եկեղեցու ճակատին, մուտքից վերև՝ նորոգմանը նվիրված արձանագրությունն է. «թվին ՈԿ (1211) նորոգեցաւ եկեղեցիս ի ձեռն տէր Յոհանիսի եւ միաբան եղբարցս»։ Ապա նորոգումը հիշատակվում է Հովհաննիսի 1221 թ. գրած, իր գործերն ընդհանրացնող արձանագրության մեջ։ Ս. Գրիգոր եկեղեցու վերանորոգումը, ըստ երևույթին, վերակառուցման պես մի բան է եղել, եթե, ինչպես Կ. Ղաֆադարյանն է իրավացի կերպով ենթադրում, նորոգման հետ միասին, եկեղեցուն ավելացվել են ներքին ավանդատները։ Այլապես Հովհաննես եպիսկոպոսն իր գլխավոր արձանագրության մեջ, մեծ գավթի կառուցման կողքին չէր հիշի փոքրաչափ մի գործ[36]։

1214 թ. Խաչենի իշխանաց իշխան Վախտանգի մահից հետո, նրա կնոջ նախաձեռնությամբ սկսվում է Վերին Խաչենի առաքելադիր Դադի վանքի մեծ եկեղեցու կամ կաթողիկեի կառուցումը։ Հետազոտողների կողմից արդեն նկատվել է, որ այս շինքի մեջ իրենց կիրառությունն են գտել Հաղբատի ս. Նշան եկեղեցու ճարտարապետական վսեմ արժանիքները։ Մեսրոպ Մագիստրոսն այս մասին խոսելիս հաստատում է, որ Հովհաննես Խաչենեցին, Հաղբատում իր կառուցած մեծ ժամատան մեջ իրականացնելով Դադի վանքի հին բազիլիկի ճարտարապետական որոշ տարրերը[37], հետո էլ Հաղբատի կաթողիկեի փորձն է կիրառել Արզու-խաթունի կառուցած եկեղեցու մեջ՝ Դադի վանքում։ «Շատ հավանական ենթադրությամբ կարելի է ընդունել,— գրել է Մեսրոպ Մագիստրոսը,—որ Հաղբատի վանքի հոչակավոր շինարար առաջնորդ Խաչենցի Հովհաննես եպիսկոպոսը, ազգական իշխանացն Խաչենո, հետևապես և Արզու-Խաթունի, սրա գլխավոր խորհրդատուն էր եկեղեցու շինության դեպքում և նրա առաջարկով Դադի վանքի կաթողիկեին Սուրբ Խաչ կամ սուրբ Նշան անունը տվել, հետևողությամբ Հաղբատի սուրբ Նշանին»[38]։

1221 թ. Հովհաննես եպիսկոպոսն իր կառուցած մեծ գավթի ներսում, արևելյան պատի վրա, քանդակել է մի արձանագրություն, որով թվարկում է Հաղբատավանքի համար կատարած իր հիմնական գործերը։ Այստեղ համեստ երախտավորը, հավանաբար խոր ծերության հասած, ինչպես իր հայրենի Խաչենում են ասում, ոտքի մեկն արդեն գերեզմանում, ասես հաշիվ էր տալիս իր խղճի ու գալիքի առաջ. «Յամս աստուածազարդ թագաւորացս Թամարա եւ որդի իւրոյ Գեորգէ եւ Բ (2) հարազատաց՝ Զաքարէի եւ Իւանէի, հրամանաւ սոցա կոչեցա յեպիսկոպոսութիւն սբ աթոռոյս Հաղբատա ես՝ Յոհաննէս ի Խաչենոյ։ Ներողութեամբ Այ կացեալ իմ ամս բազում յառաջնորդութեանս, սպասաւորեցի սրբոցս ի շինութիւն եւ յառաջդիմութիւն տանս Այ նախ՝ ի ձեռն շինուածոց ի սբ Նշանս, ի մատենս, ի սպաս զարդուց, զկաթողիկէս սալել եւ զդուռնս կազմել, զսբ Գրիգորն նորոգել, զգաւիթս շինել, զգաւթի սբ սեղանոյն եւ զԳ (3) սբ նշանս։ Եւ իմ խնդիր է ի միաբանացս՝ զսբ Յակոբա տաւնի կիրակէն իմ սբ Նշանացս տաւն կատարեն և զպատարագ աւուրս ինձ մատուցանեն յամէն եկեղեցիս... ՈՀ (1221)[39]։

Հայտնի չէ, թե ե՞րբ է մահացել Հովհաննես Ա Խաչենեցին։ Հետազոտողները 1221-ի արձանագրությունից հետո նրա և հաջորդի՝ Հովհաննես Բ-ի անունները խառնված են համարում։ Սակայն նկատի

---

[31] «Բազմավէպ», 1887, էջ 107—108, Այիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 821։ Գարեգին կաթողիկոս, Ցիշատակարանք, Ա, էջ 795։

[32] Մատենադարանի ձեռ. № 1912, թ. 228։ Գարեգին կաթողիկոսը հանձին այս արհեպիսկոպոս Հովհաննիսի ենթադրում էր, որ Ա-ի հաջորդն էր և նրա նրբորդը։ Սակայն քիչ հետո կտեսնենք, որ ոչ միայն 1220-ին, այլև առնվազն մինչև 1225 թ. Հովհաննես Ա-ն էր Հաղբատի առաջնորդը։ Հետևապես, ձեռագրում հիշվող Հովհաննես արհեպիսկոպոսը նույն ինքը՝ Հովհաննես Ա-ն է եղել։

[33] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 172—174, 280—281 ևն։

[34] Կիրակոս, էջ 215—216։

[35] Ղրիմեցի, Պատմութիւն, էջ 82։

[36] Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 60։

[37] Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքեր, էջ 134։

[38] Անդ, էջ 88։

[39] Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 180։

ատնելով, որ Հաղբատում իսկապես նրան անմիջապես հաջորդել է իր եղբորորդի Հովհաննեսը, որը միաժամանակ քվերորդին էր Զաքարեի ու Իվանեի[40], Հաղբատից առաջ էլ Սանահնի առաջնորդ եղած, կարելի է առաջինի մահվան տարին մոտավորապես որոշել նրանով, թե երկրորդը մինչև երբ է մնացել Սանահնում: Հովհաննես Բ-ը Սանահնում էր մինչև 1225-ը հաստատապես: Նա 1225 թվականից այնտեղ ունի արձանագրություն, որով հայտնում է, որ «Ի թվի ՈՀԴ» (1225) մատուռ է կառուցել[41]: Այս Հովհաննեսին Սանահնում անմիջապես հաջորդած Գրիգոր եպիսկոպոսին վերաբերող առաջին արձանագրությունն էլ 1228-ից է[42]: Նշանակում է՝ Հովհաննես Բ-ը Սանահնից Հաղբատ է տեղափոխվել 1225—1228 թվականների միջև, և հենց այս ժամանակ էլ մահացած է եղել Հովհաննես Ա-ը:

Ստուգապես հայտնի չէ Հովհաննես Խաչենեցու գերեզմանի տեղը: Հայտնի չէ՝ նրա վրա քաշե՞լ են տապանաքար, թողե՞լ են տապանագիր[43]: Ինքը կենդանության օրերում, ամենաեռանդունը եռանդավորների մեջ և համեստագույնը համեստներից, դասակիցներին խնդրում էր հիշել նախ և առաջ իր կառուցածները, իր խաչարձաններն ու հավաքած մատյանները. «Իմ խնդիր է միաբանաց՝ զսուրբ Ցակոբայ տօնի կիրակէն իմ սուրբ Նշանաց տաւն կատարէն»:

Իսկ այդ կառուցածներն ու նորոգածները, կանգնեցրած խաչարձաններն ու հավաքած մատյանները այնքան շատ են, որ պարզապես թվում են անհնար՝ սովորական մի կյանքի համար: Բավական է, թեկուզ, հիշել ամենակարևորները՝ Սանահնի Ամենափրկիչ եկեղեցին՝ գավթով հանդերձ, Խաթրավանքի գլխավոր տաճարը, Հաղբատի մեծ ժամատունը, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած՝ բավական կլիներ գալիք սերունդների խորին երախտագիտությունը նվաճելու համար:

(Շարունակելի)

---

[40] Կիրակոս, էջ 99: «Եւ յետ նորա (Յովհաննիսի Խաչենեցւոյ միւս Յովհաննէս՝ քուերորդի իշխանացն Զաքարէի և Իւանէի և եղբօրորդի առաջնոյ Յովհաննիսին»:

[41] Ղաֆադարյան, Սանահին, էջ 170:

[42] Անդ, էջ 190:

[43] Ռ. Երզնկյանցը Հաղբատում գտնված մի խաչարձանի ճակատին կարդացել է. «Այս է հանգիստ տէր Յոհաննիսի»: Հետազոտողն այս խաչարձանը համարել է Հովհաննես Խաչենեցու տապանաքարը (տե՛ս նրա՝ Հնախօտական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից սրբոյ Նշանի, Վաղարշապատ, 1888, էջ 84): Եվ Գարեգին Հովսեփյանը էլ, դա համարելով անքննելի ճշմարտություն, ավելացրել է. «Նա թաղված է Գևորգ եպիսկոպոսի գերեզմանին կից և վերան յուր գեղարվեստասեր ճաշակի համապատասխան, ճարտարաքանդակ մի ավելի մեծ խաչարձան կանգնած...» (տե՛ս նրա՝ Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց, էջ 87): Սակայն, դժբախտաբար, ոչ Երզնկյանցը, և ոչ էլ՝ նման դեպքերում բծախնդիր Գարեգին Հովսեփյանը չեն ասում, թե իրենք ինչպես են Հաղբատի առաջնորդ եղած մի շարք Հովհաննեսներից Հովհաննես Ա-ին տալիս հիշյալ տապանաքարը, մանավանդ, երբ նրա վրայի գրի մեջ բացակայում է այդ Հովհաննեսին երկրորդ անվան պես կցած «Խաչենեցի» տարբերակիչը:



ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԻԶԱՆՑԻ

Վասպուրականի մանրանկարչության ուրույն ոճը իր ավարտուն տեսքը ստացավ այդ դպրոցի ամենաբեղուն դեմքերից մեկի՝ Հովհաննես Խիզանցու մոտ: Հովհաննեսը ստեղծագործական ասպարեզ է դուրս եկել XIV դ. վերջին քառորդին և XV դարի սկզբներին: Ապրել է Խիզան քաղաքում: Կենսագրական տեղեկությունները շատ կցկտուր են: Իր ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում նա խնդրում է հիշել իր երախտապարտ ու սիրելի հորը՝ Մկրտիչ քահանային, ընդհուպ տեղեկություն տալով նրա մահվան մասին.

«...Զի հայրն իմ էր քաղցր և բարի,
Ի յանուանէ յոյժ գովելի,
Ինձ խնամատար և բերկրալի,
Ի յայսմ ամի (1392 թվ.) առ տէրն փոխի»[1]:

Անվանի գրիչ է եղել նաև Հովհաննեսի եղբայրը՝ Զաքարիան: Նրա գրչագրած ձեռագրերը երբեմն ինքն է պատկերազարդել[2]: Բացի Զաքարիան, Հովհաննեսն ունեցել է ևս երկու եղբայր, որոնք մահացել են երիտասարդ հասակում: Մեր նկարիչը չի մոռանում նաև իր հորեղբայրներին՝ Գրիգոր և Ստեփանոս քահանաներին: Հետաքրքրական է, սակայն, որ այս տեղեկությունների մեջ բացակայում է մոր անունը. դա այն դեպքում, երբ նա մի առ մի թվարկել է իր բոլոր հարազատներին, նույնիսկ եղբոր որդիներին: Արդ, ենթադրում ենք, որ նկարչի մայրը շատ վաղ է մահացել՝ փոքրիկների խնամքը թողնելով տատի վրա. «...զերախտաւոր մեծ մամն մեր զԷլխաթունն, որ քան զմայր առաւել աշխատեցաւ ի վերայ մեր և սնոյց զմեզ»: Մեկ անգամ էլ Հովհաննեսը ակնարկում է մորաքրոջը՝ Խել-Մելեքին, ինչպես նաև երկու որդյակներին (գուցե՞ եղբոր), որոնք մահացել են տարաժամ անմխիթարելի վիշտ պատճառելով ծնողներին: Գրեթե իր բոլոր ձեռագրերում Հովհաննեսը խորին երախտագիտությամբ խնդրում է հիշել մեծանուն ուսուցիչներ «...զՅովանէս և զԿիրակոս վարդապետք, որ էին առաջնորդք սուրբ ուխտիս»: Խոսքը վերաբերում է Վասպուրականում քաջ հայտնի րաբունապետեր Հովհաննես և Կիրակոս քահանաներին, որոնք հանդիսանում էին Խիզանի ս. Խաչ վանքի առաջնորդները: Վերջիններս, որպես հմուտ ու գիտուն ուսուցիչներ և մշակույթի հովանավորողներ, վկայակոչվել են նաև ուրիշ գրիչների ու մանրանկարիչների կողմից[3]: Այս րաբունապետերը ժամանա-

[1] Ձեռ. Մաշտոցի անվան Մատենադարանի, № 9717, էջ 9ր:

[2] Այս Զաքարիային Հ. Անտոնյանը նույնացրել է Աղթամարում XIV դարի երկրորդ կեսին ապրած Զաքարիա «փիլիսոփա» կոչվող նկարչի հետ (Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, Երևան, 1948, էջ 884 (№ 707):

[3] Տես «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 448, էջ 578, «ԺԵ դարի հայերեն ձեռա-

նին իրենց ուսումնառությունը ստացել են Մեծոփիա հռչակավոր ուխտում, որը միջնադարյան Հայաստանի մշակութային խոշոր կենտրոններից մեկն էր: Ի դեպ, այդ ընթացքում Մեծոփում գործել է մեր մատենագիտությանը քաջ հայտնի Հովհաննես Մեծոփեցին[4]: Մեծոփա կրթարանի հետ կապեր էին հաստատել նաև միջնադարյան Հայաստանի շատ անվանի գործիչներ, որոնց թվում նաև Գրիգոր Տաթևացին, որը նույնիսկ մի կարճ ժամանակամիջոց անց է կացնում այստեղ:

Այդ բոլորից հետևում է, որ հանձինս Հովհաննես Խիզանցու մենք գործ ունենք մի անհատականության հետ, որն իր վրա անմիջականորեն կրել է ժամանակի առաջավոր մտավորականների բարերար ազդեցությունը, անտարակույս, հաղորդակից դառնալով մշակութային խոշոր կենտրոններում ընդունված գեղագիտական նախասիրությունների ու ճաշակի հետ:

Ավարտելով Հովհաննեսի մասին եղած կենսագրական տեղեկությունները, ասենք, որ նա Վասպուրականի դպրոցի միակ ներկայացուցիչն է, որի ստեղծագործությունները դեռ մեր դարի 20-ական թվականներին արժանացել են հատուկ ուշադրության[5]:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում է Հովհաննեսի պատկերազարդած և ընդօրինակած տասներկու ձեռագիր-մատյան: Դրանք ընդգրկում են շուրջ երեսուն տարվա ժամանակամիջոց՝ 1390—1420 թվականները:

I. **Ձեռ. № 846,** Աստվածաշունչ, 1390—1400 թթ., Խիզան, Գրիչ՝ Պետրոս, ստացող՝ Հովհաննես, թերթ՝ 560, թուղթ, 28×18,5 մեծության, երկսյուն, բոլորագիր:

Մանրանկարներ—Մի քանի թեմատիկ գլխազարդեր ու լուսանցազարդեր:

II. **Ձեռ. № 8717,** Ավետարան, 1392 թվ., գրիչ՝ Պետրոս, ստացող՝ Թադեոս, թերթ՝ 329, թուղթ, 27×18,5 մեծության, երկսյուն, բոլորագիր:

Մանրանկարներ—ավետարանական լրիվ շարը, խորանաներ, գլխազարդեր, լուսանցազարդեր:

III. **Ձեռ. № 898,** Մաշտոց, 1401 թվ., գրիչ՝ Հովհաննես ստացող՝ Գրիգոր, թերթ՝ 166, թուղթ, 18,5×13,7 մեծության, միասյուն, բոլորագիր:

Մանրանկարներ—միայն աղքատիկ լուսանցազարդեր:

IV. **Ձեռ. № 8904,** Մաշտոց, 1401 թվ., գրիչ՝ Հովհաննես, ստացող՝ Հովհաննես, թերթ՝ 46, թուղթ, 31,7×24 մեծության, երկսյուն, բոլորագիր:

Մանրանկարներ—գլխազարդեր, լուսանցազարդեր:

V. **Ձեռ. № 4228,** Ավետարան, 1401 թվ., գրիչ՝ Զաքարիա, ստացող՝ Աստվածատուր, թերթ՝ 298, թուղթ, 25×17 մեծության, երկսյուն, բոլորագիր:

Մանրանկարներ—ավետարանական լրիվ շարը, խորանաներ, գլխազարդեր, լուսանցազարդեր:

VI. **Ձեռ. № 5562,** Ավետարան, 1402 թվ., գրիչ՝ Հովհաննես, ստացող՝ Հովհաննես, թերթ՝ 311, թուղթ, 25,5×17 մեծության, երկսյուն, բոլորագիր:

Մանրանկարներ—ավետարանական ընկարաշարը՝ ոչ լրիվ, խորանաներ, գլխազարդեր, լուսանցազարդեր:

VII. **Ձեռ. № 5727,** Ավետարան, 1404 թվ., գրիչ՝ Ստեփանոս, ստացող՝ Մովսես, թերթ՝ 298, մագաղաթ, 23×17 մեծության, երկսյուն, բոլորագիր:

Մանրանկարներ—ավետարանական ընկարաշարը՝ ոչ լրիվ, խորանաներ, գլխազարդեր, լուսանցազարդեր:

VIII. **Ձեռ. № 4984,** Հայսմավուրք, 1407 թվ., գրիչ՝ Հովհաննես և Ստեփանոս, ստացող՝ Պողոս, թերթ՝ 534, թուղթ, 39×29 մեծության, երկսյուն, բոլորագիր:

Մանրանկարներ—ստացողի դիմապատկերը, կիսախորան-գլխազարդեր, լուսանցազարդեր:

IX. **Ձեռ. № 5444,** Ավետարան, 1417 թվ., գրիչ՝ Հովհաննես, ստացող՝ Ստեփանոս, թերթ՝ 310, թուղթ, 24,5×16,5 մեծության, երկսյուն բոլորագիր:

Մանրանկարներ—ավետարանական ընկարաշարը՝ ոչ լրիվ, խորանաներ, գլխազարդեր, լուսանցազարդեր:

X. **Ձեռ. № 8897,** Ավետարան, XIV դար, գրիչ՝ Հովհաննես, թերթ՝ 328, թուղթ, 27,5×18,2 մեծության, երկսյուն, բոլորագիր:

գրերի հիշատակարաններ», մասն Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1955, էջ 168: Նույնիսկ Մեծոփում 1411 թվ. ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում գրիչը ի թիվս այլ երախտավորների հիշատակել է նաև Հովհաննես և Կիրակոս ռաբունապետերին, որոնք արդեն իմարկե մահացած էին («ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հտ. Ա, էջ 127):

[4] Հովհաննես Մեծոփեցու մասին տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», Գ, Երևան, 1946, էջ 637—638:

[5] **Никольская Е. А.**, Рукописи мастера Ованеса из Гизане, Харьков, 1928. Ընդամենը 7—8 թերթ ունեցող մի գրքույկ է սա, որտեղ հեղինակի խոսքը պարզ ինքնագրական բնույթ է կրում: Ըստ որում, Ե. Նիկոլսկայային հայտնի են եղել Հովհաննեսի միայն չորս ձեռագրերը:

Մանրանկարներ—ավետարանիչներ, խորանաներ, գլխազարդեր, լուսանցազարդեր:

XI. **Ձեռ. № 1875**, Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, XIV—XV դդ., գրիչ՝ Հովհաննես, ստացող Հովհաննես, թերթ՝ 227, թուղթ, 24,5×17 մեծության, երկսյուն, բոլորագիր:

Մանրանկարներ—մեկ թեմատիկ, ստացողի և նկարչի ինքնանկարը, գլխազարդեր, լուսանցազարդեր:

XII. **Ձեռ. № 5458**, Ավետարան, XIV դար, գրիչ՝ Հովհաննես (բ), թերթ՝ 312, մագաղաթ, թուղթ, 32,5×24 մեծության, երկսյուն, բոլորագիր:

Մանրանկարներ—գլխազարդեր, լուսանցազարդեր[6]:

Վերոհիշյալներից բացի Հովհաննեսին ենք վերագրում ևս չորս ձեռագիր, որոնց մասին եղած տվյալները վերցված են պրոֆ. Լ. Խաչիկյանի կազմած հիշատակարաններից[7]:

I. Ավետարան, 1413 թվականի, նկարազարդ[8]:

II. Գանձարան, 1416 թվականի[9].

III. Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, 1419 թվականի[10].

IV. Ավետարան, 1420 թվականի[11]:

Այժմ՝ Հովհաննեսի կատարած նկարազարդումների մի քանի առանձնահատկությունների մասին:

Թեմատիկ շարը այստեղ, և ընդհանրապես Վասպուրականի ձեռագրերում, տարբերվում է հայ մանրանկարչության մյուս դպրոցներում ընդունված կարգից: Տոնական ցանկը բավական ընդարձակ է. սովորաբար ներկայացվող տասներկու-տասներեքի փոխարեն լինում են շուրջ քսանքսանհինգի հասնող պատկերներ[12]: Ըստ որում, դա կատարվում է ինչպես մի շարք հին, նույնպես հին կտակարանային թեմաների վերականգնման ճանապարհով (թեմաներ, որոնք XI—XII դարերից հետո հիմնականում դուրս էին եկել պատկերագրությունից՝ Խաչի մեծադիր պատկերը, Աբրահամի զոհաբերությունը, Աբրահամի հյուրասիրությունը, Եզեկիելի տեսիլքը, Եվայի և Հովսեփի հանդիպումը, Մոգերի երկրպագության առանձին տեսարանը), այնպես էլ զուտ տեղական նախասիրություններից ու սովորույթներից եկող միջանկյալ թեմաների հավելմամբ՝ Բեթղեհեմի մանկանց կոտորումը, Պիղատոսի դատը, Հիսուսի հրաշագործությունների ընդարձակ խումբը[13], առակները[14] և այլն:

Սակայն թեմատիկ շարի այդչափ ընդարձակ բնույթը պարտադիր չի դառնում ամեն մի ձեռագրի համար: Կայուն են մնում մոտավորապես 15-ից 16-ի հասնող կանոնական պատկերներ, որոնց կարելի է հանդիպել մեր հեղինակի պատկերազարդած գրեթե բոլոր ձեռագրերում[15]:

---

[6] Այս ձեռագիրը սկզբնապես ընդօրինակվել և նկարազարդվել է Կիլիկիայում մագաղաթյա թերթերի վրա: Ենթադրվում է, որ նկարազարդումների հեղինակը Թորոս Ռոսլինն է: XIV դ. վերջում միայն ձեռագիրը հասել է Վասպուրական, որտեղ արդեն լրացվել է մեր Հովհաննեսի կողմից, իսկ ավելացված թերթերը թղթյա են:

[7] Այդ ձեռագրերի ներկայիս գտնվելու վայրը մեզ հայտնի չէ:

[8] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, էջ 147:

[9] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, էջ 182:

[10] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, էջ 235:

[11] Փիրղ. Ճստարք, 82—83 և № 4515, էջ 123—124, Բաբերդ: Պետք է ենթադրել, որ դարերի ծանր արհավիրքներից Հովհաննեսի ոչ բոլոր աշխատանքներն են փրկվել և հասել մեզ:

[12] Ավետարանական կանոնիկ նկարաշարի առանձնահատկությունների մասին տես «Лазарев В. Н., Новые данные о мозаиках и фресках Софии Киевской», «Византийский Временник», 1956, էջ 168:

[13] Հարսանիքը Կանայում, նկանակի բաշխումը, Պետրոսի թյուրահավատությունը, կույրի, անդամալույծի և դիվահարի բուժումը:

[14] Աղքատ Ղազարոսն Աբրահամի գրկում, մեծահարուստը՝ դժոխքում, իմաստուն և հիմար կանայք...

[15] Նկարաշարի այդպիսի յուրօրինակ բնույթը տեղական-վասպուրականյան միջավայրի, ըմբռնումների ու տրամադրությունների արգասիքն էր: Պետականությունից և ազգային ինքնությունից զուրկ երկրում մի քանի հարյուրամյակ շարունակ տնօրինում էին օտար բռնակալները: Վերջիններս միջոցների առջև չկանգնելով ձգտում էին ոչ միայն օրինականացնել իրենց ռազմական ու քաղաքական իշխանությունը, այլև տարածել տեղական բնակչության համար խորթ իրենց դավանանքն ու սովորույթները: Նման ծանր կացության մեջ ընկած ժողովուրդը ազգայինը չկորցնելու միտումով, բնականաբար, Է՛լ ավելի ամուր է կառչում հին ավանդներին՝ թե՛ իր սովորույթներում ու կենցաղում, թե՛ լեզվում և թե՛ արվեստում: Առաջին պլան են մղվում ոչ այնքան արվեստի որակի ու տեսակի, նրա առաջընթացի խնդիրները (դրա համար այլևս համապատասխան նախադրյալներ էլ չկային), որքան հինը իր բովանդակությամբ ու մաքրությամբ պահպանելու միտումը: Թերևս դրանով էլ պետք է բացատրել ոչ միայն նկարաշարի, այլև Վասպուրականի մանրանկարչության ոճի հայտնի պահպանողականությունը, որն այս դեպքում արդեն դրական երանգավորում է ստանում:

Ամբողջությամբ վերցրած պատկերագրությունը այստեղ կազմում է մի խումբ, որտեղ կենտրոնական կերպարը Քրիստոսն է իր համամարդկային առաքելական գործունեությամբ: Նկարիչը այդ գլխավոր կեր-

Պատվիրատու Հովհաննես Բարունու դիմանկարը (ձեռ. № 348, Մաշտոցյան Մատենադարան)

պարով է խորհրդանշել քրիստոնեական կրոնի և ուսմունքի հիմնական սկզբունքները՝ հավասարապես ընդգծելով թե՛ հայտնության և թե՛ վախճանաբանական բնույթի թեմաները: Իսկ հին կտակարանային պատմությունների հաճախակի մեջբերումը ներքին կապվածությամբ ուղղակիորեն զուգորդվում են Նոր կտակարանի հետ[16]: Սիրարփի Տեր-Ներսեսյանը նկատում է, որ թեմաների ընտրության խորհրդանշական-

[16] Օրինակ՝ Արրահամի գոհաբերությունը՝ իբրև խաչելության և փրկության խորհրդանշան: Ի դեպ, Հովհաննեսի ընդօրինակած № 5727 ձեռագրում «գոհաբերության» նկարի մոտ մակագրված է «Արրահամ որ զորդին մատոյ առնէ Աստուծոյ, վասն որոյ հաճեալ Աստուած հետ զնայն փոխանակ՝ և արձակեաց զորդին. յարիւնակ միւսին որդոյն որ ալատեաց զմեզ խաչին» (էջ 2ր):

տիպհարաբերական այս եղանակը տարածված է եղել Հայաստանում ավելի վաղ, քան X դարը, իսկ X դարում որոշակի արտահայտություն ստացել «Էջմիածնի» 898 թվականի նշանավոր Ավետարանում[17]:

Թեմատիկ նկարները զբաղեցնում են ձեռագրի սկզբի թերթերը[18]: Այնուհետև հանդիպակած երկու էջերի վրա Կարապետոսին ուղղված Եվսեբիոսի ոջոյնի բնագիրն է: Ապա՝ համաբարբառի տախտակները՝ գեղեցիկ խորանազարդերով ու այուներով: Յուրաքանչյուր ավետարանական բնագրի սկզբին համապատասխան ավետարանիչի (հեղինակի) դիմանկարն է, իսկ հանդիպակաց էջում՝ զարդարուն անվանաթերթը: Այստեղ մասնավորապես առանձնանում են խորհրդանշող կենդանիների՝ մարդ, եզ, առյուծ և արծիվ, զարդապատկերները:

Մանրանկարները ունեն հորինվածքային պարզ կառուցվածք և հաջորդականորեն զարգացող պատմողական բնույթ: Նույնիսկ այն դեպքերում, երբ նկարիչը փորձում է յուրովի մեկնաբանություն գտնել, նա չի համարձակվում խախտել ընդհանուր այդ սկզբնատարրը, որպեսզի դիտողի ուշադրությունը չբեկվի պատկերների անմիջական-հաջորդական կապակցությունից:

Հովհաննես Խիզանցու մանրանկարների պատկերագրության հարցերին այս հոդվածում չենք անդրադառնալու[19], բացառությամբ թերևս № 5444 ձեռագրի Ցա էջում հանդիպող «Վերջին դատաստան»-ից: Այդպիսի հորինվածք Վասպուրականում առաջին անգամ է հանդիպում: Տեսարանը բաժանված է երկու հատվածի: Վերին ձախ մասում ողջ հասակով կանգնած հրեշտակը

[17] *Der-Nersessian*, The date of the initial miniatures of the Etchmiadzin Gospel, Chicago, 1933, p. 4.

[18] Վասպուրականի նկարազարդ ձեռագրերի գեղարվեստական հարդարանքի ընդհանուր սկզբունքների մասին հանգամանորեն խոսել ենք հրատարակության հանձնված մեր «Վասպուրականի մանրանկարչությունը», գիրք Ա, աշխատությունում:

[19] Հովհաննեսը մեծ մասամբ կրկնում է Վասպուրականի նախորդ մանրանկարիչների մոտ հանդիպող ձևերը: Այդ մասին տես մեր հրատարակած մի քանի հոդվածները. Սիմեոն Արճիշեցին Վասպուրականի մանրանկարչական դպրոցի վաղ շրջանի ներկայացուցիչ, «Բանբեր Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 297—320: Մանրանկարիչ Զաքարիա Աղթամարցի, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1966, Երևան, էջ 199—209: Մանրանկարիչ Կիրակոս քահանա, «Էջմիածին», Գ, 1978, էջ 48—53, ինչպես նաև՝ Ծաղկող Ծերուն քահանա, «Էջմիածին», 1974, № Գ, էջ 28—33:

կշռում է մարդկանց մեղքը: Նրա դիմացում պաղատողի տեսքով թողություն է խնդրում մի աշխարհական՝ «զգործս մարդոյս այս կշռեն և սա աղաղակէ»: Ցածի մասում սևի, գորշ շագանակագույնի, մուգ կապույտի ծանր տոնների մեջ դժոխային վիհերում դատապարտվածներն են, որոնց մերկ մարմինները տանջահարվում են թունավոր օձերի ու հսկա վիշապների առաջացրած գալարապտույտներում: Պարզ, թերևս փոքր-ինչ սրամիտ լուծմամբ նկարիչը կարողանում է ամբողջ էությամբ արտահայտել դժոխքի զարհուրանքները: Տպավորությունը ուժեղանում է այդ երեք-չորս գույների (նաև կեռասակարմիր) ստեղծած շարով, որտեղ հիմնական մոտիվը մուգ կապույտի և կարմիրի հակադրությունն է:

Հովհաննեսը պրոֆեսիոնալ մակարդակ ունեցող նկարիչ է: Քաջ ծանոթ լինելով պատկերվելիք նյութին, նա այնես ասես ճիգ չի գործադրում ինչպես դրանց մեկնաբանման, այնպես էլ արտահայտման միջոցների ընտրության համար: Հարթագծային ոճը նրա տարերքն է: Էջի մաքրության վրա, որտեղ չկա բնանկար ու երկրորդ պլան, սահունությամբ ուրվագծվում են միայն ֆիգուրներն ու անհրաժեշտ առարկաները: Գծային սուղ կառուցվածքին համապատասխան արժեք է ձեռք բերում գույների սակավաթիվ, բայց հնչեղ շարը, բաղկացած կարմիրից, կանաչից, կապույտից և շագանակագույնից: Վերջիններս մեծ մասամբ գործածվում են մաքուր, չնայած նրկարիչը երբեմն դիմում է խառնուրդներին ստեղծելով հատկապես իր սիրած մոխրաշագանակագույնի և վարդաշագանակագույնի երանգները:

Գեղանկարչական այդ զուսպ միջոցներով ստեղծված աշխարհը իրականի նմանակումը չէ, և նկարիչն այդպիսի խնդիր չունի: Ուստի վերացական թվացող այդ պատկերաձևում խորթ են լինելու ռեալ իրականությունից բխող չափանիշները, ինչպիսին հեռանկարի ու ծավալի հասկացողությունն է, նյութականության արտահայտումը և այլն: Միջնադարյան մտածողությունը կերպարվեստում հակված է ամեն մի իրի մեջ այլաբանական իմաստ տեսնել, նրա հետևում թաքնված այլ գաղափարների խորհրդանիշը կռահել: Միջնադարյան մարդը ձգտում է հոգեպես կապվել իր պաշտամունքային էակների հետ: Ահա այս առումով, թվում է, Վասպուրականի մանրանկարչության հարթագծային, այսպես ասած, «վերացական» ոճը լրիվ հակամետ է ժամանակի գեղագիտության գաղափարական միտումներին: Նայում ես «Մկրտության», «Այլակերպության», «Ոտնլվա» և տնօրինական մեկ-երկու այլ տեսարաններին ու զարմանում, թե այդ մերկ գծերի, մեկ-երկու հասարակ, պարզ գույների միջոցով ինչպես է նկարիչը կարողանում իր միտքը այնքան դիպուկ,

Աստվածամայրը Մանուկ Հիսուսի հետ և պատվիրատուները (ձեռ. Մատ. № 848)

այնքան սուր ու անսպասելի հրամցնել քեզ:

Բայց ձևի ու բովանդակության արտահայտման հենց այս սահմանագծում վասպուրականցի նկարիչը ասես անհնատելի ու անզգալի մի քայլ է կատարում դեպի իրականն ու շոշափելին: Եվ դա մեր վարպետի արվեստի հետաքրքրական կողմերից մեկն է: Առանձին պահերի ընդգծմամբ կամ մի փոքրիկ շեշտով դիտողին նա հաղորդակից է դարձնում իր աշխարհական հույզերին ու հետաքրքրություններին և՝ իրողության ինչպիսի՞ ճանաչողությամբ: Հենց դրանում էլ՝ վերացականության, գաղափարների չոր ցուցադրման ու, միաժամանակ, կյանքի ու իրականության անսասան արտահայտության մեջ է միջնադարյան արվեստի հակասությունը: Ս. Տեր-Ներսեսյանը մի առիթով նկատում է, որ

նույնիսկ Կիլիկիայում, կրոնական գաղափարախոսության հուժկու ներգործության պայմաններում, նկարիչները երբեմն հակասական են ձգտել՝ իրենց ստեղծագործությունները ճոխացնելով կյանքից ու բնությունից առնված մոտիվներով:

Նանայի հարսանիքը
(Ձեռ. Մատ. № 8717)

Հովհաննեսի մոտ ես նույն բանն ենք տեսնում. № 8717 ձեռագրում, օրինակ. «Մուտք Երուսաղեմ» նկարը ավելի շատ հիշեցնում է ժողովրդական ծաղկատոն: Նույնիսկ բաց տարածությունները օգտագործվել են գունագեղ ծառ ու ծաղկունք ցուցադրելու համար: Հյուրին դիմավորողները, հատկապես երեխաներն, իրենց զվարթ տրամադրությամբ և շարժ ու ձևով հեռու են կանոնիկ որևէ ըմբռնումից: Նման տպավորություն դիտողը ստանում է նաև «Ծնունդ» պատկերից, որը վեր է ածվել ցնծության, համընդհանուր ուրախության: Ուշագրավ է հատկապես Հիսուսի հրաշագործությունները պատկերող նկարների հարուստ շարը: Գործողություններն ընթանում են ժողովրդական միջավայրում և նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ: Արժե այստեղ կրկնել հայտնի ասացվածքը, թե նկարչի համար թեման ամիթ է ծառայել կյանքից ու կենցաղից վերցրած դրվագներ պատկերելու համար:

Ի դեպ, Հիսուսի հրաշագործությունների նկատմամբ Վասպուրականում ցուցաբերված նախասիրության կապակցությամբ մի միտք է ծագում, որն ինչ-որ չափով կրում է սոցիալ-քաղաքական երանգավորում: Դարեր շարունակ տառապելով օտար նվաճողների բռնակալության ծանր լծի տակ և չընտեսնելով այդ վիճակից դուրս գալու ոեալ հեռանկար, ժողովուրդն ասես, իր փրկության հույսը կապում է հրաշքների հետ: Հիշյալ թեմաներին լայն տեղ հատկացնելն այստեղ, հավանաբար, նման տրամադրությունների արտահայտություն է:

Մեր հեղինակի մոտ ո՛չ միայն թեմաների ընդգրկման, այլև ձևերի նույնիսկ մանրամասն ընտրության. հարցերում բավական կայուն պատկերացումներ կան, որոնք հաճախ միանման մեկնաբանություն են ստանում: Վասպուրականի դպրոցին բնորոշ այդ հատկանիշը առաջ է բերում նկատելի միօրինակություն՝ «տրաֆարետի» հասնող անհրապույր վտանգով հանդերձ: Սակայն նկարիչը, մասնավորապես շնորհալիները, փորձում է խուսափել այդ վտանգից ակտիվ վերաբերմունքի շնորհիվ: Այսինքն նկատվող միօրինակությունները՝ հատկապես մարմնի պատկերման ընդհանուր դիրքը, նստելու եղանակը, ձեռքերի շարժումը և, իհարկե, դիմագծերը «խոսեցվում են» իրենք իրենցով՝ դիմախաղերի մեջ արտիստականության հասնող շեշտ է դրվում, շարժումները հասցվում են խորհրդանշական իմաստի, որոնք խայտաբղետության աստիճան վառ գույների հետ նպաստում են նկարի անմիջական տպավորությանը[20]: Բայց ոչ միայն դա: Չափազանցման կամ պայմանականության հասնող այդ եղանակի հետ մեկտեղ նկարիչը դիմում է համարձակ այլ հնարամիջոցների ևս, ինչպիսին խիստ ոճավորումներն են, կամ մաքուր կենցաղային դրվագների համակցումը: Առաջին դեպքում մենք տեսնում ենք գծի ու գույնի անբնական թվացող, բայց հմայիչ խաղը՝ ինչպես մարմինների մեկնաբանման, այնպես էլ դիմապատկերի մեջ՝ հա-

[20] Տպավորության ամբողջական ընկալման դեպքում դիտողի ուշադրությունը չպետք է ցրվի կատարողական մանրուքների վրա: Նկարիչը առանձին անհանգստություն չի դրսևորում այսպես ասած անատոմիական զեղումների նկատմամբ՝ լինում են անվարժության դեպքեր, սխալներ, բայց դրանք նույնիսկ չեն նկատվում ամբողջականության մեջ, իսկ երբեմն էլ կարծես ուժեղացնում տպավորությունը և դեռ տեղ թողնում երևակայության համար:

ջորդական ռիթմիկ կրկնությունները, մեկ կետից դուրս եկող ճառագայթները, մազերի հարդարանքի յուրատիպ ձևը, աղեղնավոր վերջավորություն ունեցող աչքերն ու հոնքերը, բեղ ու մորուքը... Գույներում ևս ելակետը նույնն է: Գունա-էմոցիոնալ տպավորության լեզուն նույնքան պայմանական է, նույնքան ոճավորված, որքան վերը նշված գծանկարային տարրերը: Ըստ որում, իրենց ողջ հնչեղությամբ դրանք շեշտում են էջի երփնագրի ինքնաբավ բնույթը: Այսպիսի ոճավորման ու զարդայնության դեպքում, մանավանդ երբ մաքուր ֆոնի վրա ընդգծված սիլուետներից զատ լինում են նաև գեղագրության (բացատրությունների) նմուշներ, էջի գեղարվեստական կազմակերպման մեջ գերակշռող է դառնում «տարերային» դեկորատիվությունը՝ վասպուրականի մանրանկարչության հատկանշական գծերից մեկը:

Մյուս դեպքում, ինչպես ասվեց, պատկերները աշխուժացվում են կենցաղային դրվագներով. իրականությունից վերցված մի փոքրիկ շարժմամբ, մի շեշտով նկարիչը անկյանք թվացող գծապատկերներին հոգի է տալիս, առինքնող դարձնում այն: Ահա № 9717 ձեռագրի «Հարսանիքը Կանայում» պատկերը՝ հարուստ ժողովրդական հումորի երանգներով: Խնջույքի մասնակիցներից մեկը ողջ գիշերվա կեր ու խումից հոգնած ու հարբած ձեռքը դեմքին, գլուխը կախ ննջում է, «ննջում է խառբած», բացատրում է նկարիչը:

«Ծննդյան» տեսարանում հովիվներից մեկը, ինչպես մեր գյուղական առօրյայում է լինում, երկու ձեռքերով բռնել է խոյի ոտքերը և գցել մեջքին: «Հարության» տեսարանում խիստ ծիծաղաշարժ են թմրած զինվորները, որոնք մանկական խաղալիքների նման փռվել են այս ու այն կողմ:

Խոսելով ռեալ միջավայրից վերցված մատիվների մասին, հարկ ենք համարում հիշել Հովհաննեսի վրձնած ժամանակակից մարդկանց դիմապատկերները: Վերջիններս ունեն ճանաչողական նշանակություն և արժեք թե՛ ազգային բնութագրման՝ դիմագծերը, արտահայտությունը, և թե՛ ազգագրական առումով՝ տարազը, զանազան առարկաները ու արդուզարդը: Ուշագրավ են այս առումով № 5562 ձեռագրում Հովհաննես քահանայի, նրա կնոջ ու հանգուցյալ որդու ծնրադիր պատկերները. «Յոհաննէս քահանայն և կենակիցն իւր աղաչեն զԱստուած վասն թողութեան մեղաց իւրեանց և ծնաւղացն: Ես Յոհաննէս քահանային որդին եմ, Թումայ քահանայն, որ տարաժամ փոխեցայ ի Քրիստոս. ո՛հ, ո՛հ, ո՛հ»: Վիշտ ու թշվառություն տեսած նկարիչը խորապես զգում է դա՝ այդ տրամադրությունը մարմնավորելով նաև պատկերի մեջ՝ թախիծ ու խղճահարություն կա երիտասարդ Թումայի դեմքին: Իսկ մեկ այլ ձեռագրում, լուսանցքի զարդամոտիվների մեջ, նկարիչը սրտից բխած հոգոցն է գաղտնագրել. «Սև աշխարհ, սուտ ես ամեն, ո՛հ, ո՛հ»[21]:

«Մուտք Երուսաղեմ»
(ձեռ. Մատենադարանի № 9717)

Հովհաննեսի թողած ժառանգության մեջ հատուկ տեղ են գրավում Մատ. № 346 Աստվածաշնչի բարձրարվեստ մանրանկարները: Աստվածաշունչն ընդօրինակվել է մեզ արդեն հայտնի Հովհաննես Բարունու պատվերով: Մանր հիշատակագրություններից պարզվում է, որ այս ձեռագրի վրա աշխատելիս Հովհաննեսին զգալիորեն օգնել է շատ շնորհալի մեկը՝ «զելուզակ Պետրոսը»[22]: Մեզ չհաջողվեց պարզել Պետրոսի ով լինելը: Համենայնդեպս վերջինս մի սովորական աշակերտ չէր և իր նշանակալի դերն է խաղացել հիշյալ Աստվածաշնչի պատկերազարդման գործում[23]: 560 թերթ ունեցող այս մատյանի գեղարվեստական հարդարանքը փոքր-ինչ այլ սկզբունքով է արված: Բացառությամբ մեկ դեպքից (էջ 1բ), երբ նկարը ամբողջական էջ է զբաղեցնում, մյուս թեմաները տեղադրվում են բնագիր պարունակող էջի մի որևէ հատվածում կամ ուղղակի լուսանցք-

[21] Ձեռ. № 346, էջ 458բ:

[22] Մի քանի մանրանկարների մոտ այս Պետրոսը թողել է հետևյալ տողերը. «Անմեղադիր լեր բարունի (խոսքը պատվիրատուի մասին է—Հ. Հ.) զայս երկու երեսս անձրևն լերդեցն ի վայր աւերեց և զելուզակ Պետրոս վիրաւորեց: Ո՞վ որ կարդա, թող զմեզ յիշեայ»:

[23] Այդ պատճառով էլ մենք հիշյալ ձեռագրին առանձին ենք անդրադառնում:

ների մեջ: Իսկ 1բ էջի վրա տեղադրված է Հովհաննես Ռաբունու պատկերը: Վերջինս ներկայացված է պաշտոնական արարողության պահին. վրան շքեղ թիկնոց՝ ինչպես թագավորական ծիրանի, հանգիստ ու արծանապատվությամբ լի նա ունկնդրում է (կամ ընդունում) իր դիմացում կանգնածների մեծարանքը: Ձեռագրի 451ա էջում «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ» նկարն է, 280ա էջում՝ Դավիթ թագավորի, որը նըստած բարձր աթոռին նվագում է թառը հիշեցնող մի գործիք, 343ա էջում՝ Երուսաղեմի տաճարը և այլն[24]: Գեղեցիկ է հատկապես 441ա էջի հարդարանքը: Ծաղի ձևխկողմում առանձին շրջանակի մեջ Աստվածամայրն է մանկան հետ. նրա ոտքերի մոտ պաղատողի դիրքով կրկին Հովհաննես Ռաբունին: Նկարի ֆոնը ծածկված է մուգ կապույտի հավասար շերտով, որի հետ հագուստների կարմիր, կանաչ և վարդագույն երանգները փայլփլող քարերի տպավորություն են թողնում:

Այսպես շքեղ զարդարված ձեռագիր մենք, փաստորեն, առաջին անգամն ենք հանդիպում Վասպուրականի XIV—XV դարերի մանրանկարչական արվեստում: Գուցե մեծանուն պատվիրատուի հեղինակությունն ու ճաշակն է ստիպել Հովհաննես Խիզանցուն և իր աշխատանքային ընկերոջը՝ ելուզակ Պետրոսին, ներդնելու իրենց ողջ շնորհքն ու հմտությունը նման որակի աշխատանք ստեղծելու համար[25]: Աչքի է զարնում հատկապես գույների ճոխ տպավորությունը. ոսկու ֆոնի վրա գերիշխում է կապույտը՝ միահյուսված արմավենու թավ կանաչ տերևազարդերի հետ: Կեռասակարմրի ու դեղինի առանձին բծահատվածները ինքնաբավ խաղ են ստեղծում նպաստելով նկարների ոչ այնքան իրական պատմողական մեկնաբանությանը, որքան զուտ գույնի շահեկանությանը, այսինքն, դիտողի վրա թողած գունային ազդեցության շափանիշը դառնում է ոչ թե բնության նկատմամբ եղած հարազատությանը, որքան էջի գունային զարդահարդարանքը որպես այդպիսին: Դա արդեն մեր նկարչի անհատական նախասիրության ու ճաշակի, նրա գունային երևակայման արտահայտությունից է բխում:

Ավետարանիչների դիմանկարներում, անվանաթերթերում ու խորանազարդերում հետևողականորեն պահպանվում են Վասպուրականում ընդունված սովորույթները: Հատկապես հետաքրքրական են խորանազարդերը № 3717 ձեռագրում՝ երբեք չկըրկնվող, երբեք չնմանվող: Դրանցում մի կողմից տեղական-վասպուրականյան հին ձևերն են դրսևորվում՝ ավելի կոնստրուկտիվ բնույթի պայտաձև կամարներ, սյացիկ, պարզ սյուներ, մյուս կողմից՝ զարդային մեկնաբանման հակումը, որն ամբողջ էջին ավելի դեկորատիվ բնույթ է տալիս: Մասնավորապես ցայտուն են ոսմբաձև ծիածանազարդերը, բուսահյուսվածքները: Խորանների գլխազարդերի մեջ հաջորդականորեն տեղադրված են խորհրդանշական առարկաներ—գիրք, սկիհ, խաչ և այլն: Խարիսխներն ու խոյակները համեմատաբար պարզ են:

Հովհաննեսի ձեռագրերում չափազանց հարուստ են ներկայացված հատկապես լուսանցազարդերը: Ե. Նիկոլսկայայի պատկերավոր արտահայտությամբ «նկարչի երևակայությունը այստեղ ստեղծում է այնպիսի քանակությամբ ամենատարբեր բուսական ու կենդանական զարդամոտիվներ, որոնցից գրեթե ոչ մեկը նույնությամբ չի կրկնում մյուսին»: Թռչունների տեսակները, ձկները, նապաստակը, կապիկն ու վագրը, սիրենները ու երևակայական մյուս կենդանաձևերը ներկայացված են բուսամոտիվների հետ հյուսված, արտակարգ վարժ ու մհուտ ձեռքով:

Հովհաննեսը Վասպուրականի XIV—XV դարերի մանրանկարչության ամենափայլուն դեմքն է, առավել տաղանդավորն ու հմուտը:

Սույնով մենք ավարտում ենք Վասպուրականի XIV—XV դդ. անվանի մանրանկարիչներին նվիրված մեր հոդվածաշարը: Նախորդների մասին տե՛ս ծանոթագրություն № 19:

---

[24] Այս ձևի նկարազարդումները, հատկապես լուսանցքում, մեզ հիշեցնում է Էջմիածնի ավետարանը:

[25] Հավանաբար, դա այդպես է եղել: Շնայած կոնկրետ փաստերի բացակայությանը, ենթադրում ենք, որ նկարիչները իրենց աշխատանքը կատարելիս հաշվի են առել և պատվիրատուի ով լինելը, և, բնականաբար, տրվող վարձը:

Ա. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

ՔԻՇՆԵՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԸ ԵՎ ՆՐԱ ՄԻ ՔԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քիշնևը հայտնի է հայերին դեռևս XVII դ.-ից: Ըստ տեղեկությունների, հայերի թիվը այս քաղաքում շատ չի եղել: Ինչպես երևում է Ներսես Աշտարակեցու վավերագրից (1831 թ.), հայերի քանակը Քիշնևում և ամբողջ Բեսարաբիայում մեծ չէր: XIX դ. սկզբներին (1809 թ.) Քիշնևում հաստատվում է Բեսարաբիայի հայոց առաջնորդարանը, որին գլխավորեց մինչև 1827 թ. տ. Գրիգոր արքեպ. Զաքարյանը: Նրան հաջորդում են հայ եկեղեցու փայլուն դեմքեր. Ներսես Աշտարակեցին, Եփրեմը, Զորագեղցին և ուրիշներ:

Քիշնևի հայկական գաղութի զարգացման և ամրապնդման գործում մեծ կարևորություն ունեցավ հայերին 1813 թ. հատկացված հողամասը, որի վրա կառուցվեցին գաղութի կյանքի համար մեծ նշանակություն ունեցող շենքեր: Մինչև այժմ այդ հողամասը իր կառույցների հետ միասին հայտնի էր որպես «Армянская ограда» («Հայկական բակ»): XIX դ. 60-ական թվականներին Քիշնևի հայության թիվը հասավ ավելի քան հազարի, երբ հայկական մի այլ գաղութի՝ Գրիգորիոպոլի հայերի մի մասը տեղափոխվում է Քիշնև (Գրիգորիոպոլը գտնվում է Քիշնևից ոչ հեռու):

Քիշնևի հայերը զբաղվում էին առևտրով, արհեստներով, հողագործությամբ: Նրանց մեջ, առանձնապես XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին, կային փաստաբաններ, բժիշկներ, ճարտարապետներ, գրողներ և այլ մասնագիտության տեր հայեր:

Քիշնևի հայերը ունեին երեք եկեղեցի, որոնցից մեկը գլխավորն էր: Այն գտնվում է մինչև այժմ քաղաքի «Հին հայկական» կոչված փողոցի վրա, որտեղ և կենտրոնացված էր հայկական թաղամասը: Մնացած երկու եկեղեցիները գտնվում են տեղի գերեզմանատներում:

Սուրբ Աստվածածին գլխավոր եկեղեցին, ըստ իր հորինվածքի, XVIII դ. մոլդավական ճարտարապետության օրինակներից է: Այժմյան տեսքը ունի միանեֆ երկարավուն ձև: Արևելյան կողմում եկեղեցին վերջանում է կիսակլոր խորանով, արևմտյանում՝ երեք հարկանի զանգակատնով: Եկեղեցու հարավային պատին կից կա քառակուսի հատակագիծ ունեցող գավիթը, որի առաջ շինված է երեք կամարանոց պորտիկ:

Եկեղեցու մի քանի հայկական արձանագրությունները հաստատում են, որ նա մի քանի անգամ վերակառուցվել և նորոգվել է:

Ամենահին՝ 10 տողանոց արձանագրությունը թվարկված է 1809, գտնվում է եկեղեցու բակի մեջ, փորագրված սպիտակ մարմարյա սալի վրա (նկ. 1): Նրա նախնական տեղը, զանգակատան մուտքի վրա էր, որից հետո այդ փոխարինվեց 1885 թ. արձանագրություններով:



Նկ. 1. 1809 թ. արձանագրությունը (արտանկար)

Մեր կարծիքով, այս արձանագրությունից կարելի է հետևցնել, որ 1803 թ. հայերի կողմից կառուցվել է եկեղեցու հյուսիսային պատին կից քառակուսի շենքը, որի հյուսիսային պատի խորշի մեջ մինչև վերջերս կարելի էր տեսնել փոքրիկ սալիտակ մարմարյա մկրտարանը: Շատ հավանական է, որ այս աշխատանքի ընթացքում կատարվել են և ուրիշ փոփոխություններ՝ զանգակատունն իր քարե հենապատերով, եկեղեցու ծածկը և այլն:

Երկրորդ արձանագրությունը, փորագրված նույնպես մարմարյա համարյա քառակուսի սալի վրա (1,00×0,935 մ), տեղավորված է եկեղեցու հարավային մուտքի վրա, գավթի ուղղությամբ: Սալատեսիտակն ունի զարդաքանդակ՝ սբ. Աստվածածինը մանուկ Քրիստոսի հետ, մի շարք շենքերի պատկերներ, բուսականություն՝ նոճենու ծառեր սալի երկու կողմերում: Արձանագրությունն ունի 19 տող:

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ, ՆՈՐ Ի ՆՈՐՈՑ
ՇԻՆՈՒԵՑԱՒ ԳԻՇՆՕՎՈՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՍ
Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ՏԵԱՌՆ ԴԱՎԴԻ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽՐԻՔ (՝)
ԲՍԴԱՑԻ ԲԱՐՍԵՂԻ ՈՐԴԻ ՄԱՀՏԵՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՕՂԱԿ-
ՑԻՆ ՄԱՀՏԵՍԻ ԽԱԹՈՒՆԻՆ ԵՒ ՈՐԴԻՆ ՄԱՀՏԵՍԻ ՄՈՎՍԷՍԻ
ԲՍԴԱՑԻ ԱՎԷՏԻՔԻ ՈՐԴԻ ՍԱՆԴՈՒՐԻՆ ԵՒ ԻՒՐ ԿՕՂ(Ա)
ԿՑԻՆ ՋԻՒՄՈՒԴԻՆ ԵՒ ՈՐԴԻՆ ԸՍՏԵՓԱՆ
ԳԻՇՆՕՎՑԻ: Լ(ՈՒՍԱ(Հ)ՈԳԻ) ՄԿՐՏԻՉԻ ԵՒ ՈՐԴԻՆ ՊԱՐՈՆ ՅԱՐՈՒ-
ԹԻՒՆԻ
ԵՒ ԿՈՂԱԿՑՈՒՆ ՄԱՆԱՆԻՆ ԵՒ ՄՕՐՆ ՄԱՀՏԵՍԻ ՀԻՒՐԻԿԻՆ
ՅԱԿՕԲՄԱՆԻ ՈՐԴԻ ՕՀԱՆՆԷՍԻ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՆ ՀՌԻԲ-
ՍԻՄԷԻՆ ԵՒ ՄՕՐԸՆ ՆՈՐԱՑ ՃԻՒՀԷՐ ԽԱԹՈՒՆԻՆ
ԱԽԳԻՐՄԱՆՑԻ ՄԷԼՔՈՆԻ ՈՐԴԻ ՊԱՂՏԱՍՐԻՆ ԵՒ ԿՕՂ-
ԱԿՑԻՆ ԱՍԼԻԿԻՆ ԵՒ ՈՐԴԻՆ ՏԻՐԱՑՈՒ ԳՐԻԳՈՐԻՆ
ԱՇԽԱՏԱՒՈՐ ՏԻՐԱՑՈՒ ԳԷՈՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲՆ
ԵՒ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎ(Ր)ԴՈՑ ՀԱՄԱՅՆ ԿԵՆԴԱՆԵԱՑԸՆ
ԵՒ ՆՆՋԵՑԵԼՈՑ ՀՕԳԻՆ ՏԷՐ ԼՈՒՍԱՒՈՐԵԱՅԷ ԱՄԷՆ
ՇԻՆԵՑԱՒ ՁԵՌԱՄԲ ԵԱՇՑԻ ԳԼԽԱ ՎԱՐԴԱՆԻՆ. ԹՈՒԱԿԱՆ ՓՐԿՉԻՆ
...1804:

Այս արձանագրությունից մենք ենթադրում ենք, որ նրա մեջ հիշված Յաշի հայ վարպետ Վարդանը կառուցել է եկեղեցու հարավային պատին կից՝ այժմ գոյություն ունեցող ընդարձակ գավիթը: Այդ ժամանակամիջոցում կառուցվել է նաև եկեղեցու հյուսիսային պատին կից հենապատը: Շատ հավանական է, որ զանգակատան առաջին հարկը նույնպես այս հայ վարպետի գործն է, քանի որ այս երկու կառուցվածքների ծածկերի շինարարական եղանակները նույնն են (գավթի ծածկի հյուսիսային երեսը և զանգակատան ծածկի արևմտյան երեսը ունեն աղյուսյա քարակ հենարաններ, որոնք ըստ ամբողջ այս կառուցվածքների բարձրությանը, կպցված են եկեղեցու հիմնական հիշված պատերին՝ հարավային և արևմտյան):

Հիշված գավթի խաչակալի վրա գրված սև ներկով մի ուրիշ արձանագրություն (այժմ գոյություն չունի) հիշեցնում է, որ այդ խաչակալը վերանորոգվել է 1874 թ. (նկ. 2):

ԼՈՐՈՎՆՅԱՆ ԽԱՉԱԿԱԼ ԳԱՒԹԻՍ ՍՐԲՆԱՄԲՔ ԵՒ ԾԱԽՐԻՔ ՍԱԼՈՒԱԿԱՆ
ԴԱՒԹԻ ԱՆԴՐԵԱՍԵԱՆԼԻ ԵՒ ԿՈՂԱԿՑԻ
ԼՈՐԻՆ ԵՂԻՍԱԲԵԹ ԵՐԵՄԵԱՆ ՋԱԽԱՐԵԱՆՑ Ի 25 ՄԱՐՏԻ 1874 ՄԱՍ

Նկ. 2. 1874 թ. արձանագրությունը (արտանկար)

Չորրորդ և վերջին շինարարական ինը տողանոց ոսկեջրով ներկված տառերով արձանագրությունը գտնվում է զանգակատան մուտքի վրա: Այդ, այժմ գոյություն չունեցող, արձանագրությունը կատարված էր եղել բաց-մոխրագույն մարմարյա կիսակլոր սալատախտակի վրա (նկ. 3):

Այս ժամանակ է, որ կատարվում են եկեղեցու վերակառուցման մեծ աշխատանքները: Այսպես՝ երրորդ հարկի ծածկը քանդվելուց հետո բարձրացվում են նրա



Նկ. 3. 1885 թ. արձանագրությունը (արտանկար)

պատերը: Այդ պատճառով զգալի բարձրացվում են բուն եկեղեցու դահլիճի պատերը՝ պահպանելով նրա ծածկի սկզբնական բարձրությունը:

1885 թ. կամ մի քիչ ուշ կառուցվել է գավթին կից հարավային բաց գավիթը՝ պորտիկը, որը բարձրացվել է Մանուկ-Բեյի՝ Բեսարաբիայի XIX դ. սկզբների մեծ դիվանագետի և խոշորագույն կալվածատերերի ու նրա դուստրերի գերեզմանների վրա:

Եկեղեցու հիշված գավթի խաչակալի տակ մինչև վերջերս գոյություն ուներ նույնպես բաց-մոխրագույն սալատախտակ (1,17×0,89 մ), որը ամրացված էր պատին: Այն ունի տասը ոսկեջրված տառերով հետևյալ արձանագրությունը.

ԱՍՏ
ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ
Տ. ԳԷՈՐԳ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆ ԵՐԵԻԱՆՑԻՈՑ
ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՎԻՇԱԿԻՍ
ԵՒ
ՄԻԱԲԱՆԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
1871 ԱՄԻ
80 ԱՄԱՑ:

Եկեղեցու հարավ-արևելյան մասում, պատին կից, պահպանվել է սպիտակ զարդաքանդակված մի տապանաքար, որի վրա կա հինգ տողանոց արձանագրություն, տեղտեղ աղավաղված (նկ. 4):

ԱՅՍԷ ՏԱՊԱՆ ՀԱՆԴՍՏ ԵԱՆ
ԵԱՂՈՒԹ ՏԻԿՆՈՋՆ ՋԱՐԱԼ ԵԱՆ
ՀՕՐՆԱՐ Ք ՊԵԶԱՐԱՊ ԵԱՆ
ԴՈՒՐԴՈՒՐ ԴՈՏԻ ԱՐԱՄ ԵԱՆ
ՌՅ. ՀՈԿՏԵՄ. 20 ՌՔԻՂՈՆ Ն

Նկ. 4. Հայկական եկեղեցու հարավ-արևելյան մասում գտնվող տապանաքարի արձանագրությունը

Հայոց գերեզմանատան եկեղեցին կառուցվել է 1915—1916 թվականներին՝ որպես ընտանեկան մատուռ Բորիս Բաղդասարովի՝ գերեզմանի վրա: Այս մասին վկայում է ռուսերեն լեզվով հետևյալ արձանագրությունը.

ЦЕРКОВЬ—ПАМЯТНИКЪ
ВО ИМЯ ВОСКРЕСЕНИЯ СПАСИТЕЛЯ
СООРУЖЕНА НА МОГИЛЕ
БОРИСА ФЕОДОРОВИЧА
БОГДАСАРОВА
СКОНЧ. 27/II 1912 г. ВДОВОЙ
АНТОНИНОЙ (АНТАРАМ) КАРПОВНОЙ
БОГДАСАРОВОЙ
УРОЖД. БАЛИОЗЬ[2]
И ДЕТЬМИ: ИВАНОМ, КАРПОМ
И ФЕДОРОМ, МАРИЕЙ
ПАКЕНТРЕЕРЬ
АННОЙ ПОПОВОЙ
И ОЛЬГОЙ (ЕЛЕНА)

. . . . . .

Ուշագրավ են հայկական գերեզմանատանը գտնվող մի շարք տապանաքարեր:

Ահա մի քանիսը.

Տապանաքար 1. ունի հորիզոնական դիրք, վարդագույն մարմարից, արձանագրություն՝ 15 տող, գեղաքանդակ: Արձանագրության վերևում՝ խաչ, որի տակ մի գունդ՝ «Ադամի գերեզմանը», որի մեջ փորագրված է խույր, խաչի երկու կողմերը՝ վեցաթևյուն փոսիկներ: Արձանագրության տակ՝ ծաղկաման:

Տես արձանագրության արտանկարը[3] (նկ. 5):

Տապանաքար 2. կրաքար ուղղահայաց դիրքով, սալատախտակի վրա փորագրված խույրից կարելի է կռահել, որ այն դրված էր եկեղեցական բարձր աստիճան ունեցող անձի՝ հավանական է արքեպիսկոպոսի գերեզմանի վրա: Ինչպես այլ ուղղահայաց կանգնեցված տապանաքարերի վրա, այնպես էլ այստեղ կարելի է տեսնել վերևի անկյուններում արևի և լուսնի նկարները: Այս

---

[1] Հայ կալվածատեր: Նրան էին պատկանում այժմյան Սուլեմ գյուղի Որգեևի շրջանի մեծ հողամասերի տարածությունները:

[2] Հայ կալվածատեր, որը նույն շրջանի Իվանջա գյուղի մեջ ուներ մեծ հողամասեր: Ինքը և նրա ընտանիքի անդամները թաղված են Քիշնևի հայկական գերեզմանոցում:

[3] Նաև մեր հոդվածը՝ „Архитектура армянских надгробных памятников в Кишиневе". Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1968, № 4;

ՀՈՂԱՊԱՏԵԱԵՆԱՅՐ·ԻՄ ԱՒ ԾԻՆ
ՔՈՐԴԻՍ ԸՆԿԱԼ·Ի ԾՈՑ ՓՈ ՅԻՆ
ՋԻ ՔԻՍ ԲԱՀԻՆ·ԻՄ ՅԱՄՈՒՑ ՀԻՆ
ՏԱՑԵՍ ԱՆԴՐԷՆ·ՅՕՐՆ·ՎԷՐ ՀԻՆ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ·ԻՄ ՀԱՅՐԵ ՆԻՍ
ԱՆՏՈՆ ԱԻԱԳ· ՔԱՀԱՆԱՅ ԻՍ
ՓԻՀԵԻՔԱՂԱՔՆ· ԵՂԷԻ ԶԱՐ ԳԻՍ
ՈՐ ԸՆԿԱԼԱ· ՊԱԿ ԿԱՐ ԳԻՍ
ԱՔ ԻՄ ԿԵՆԱՑ· ԼՒԻ. ՅԻ ՍՈՒՆ
ՎՃԱՐ ԷԱՌ·ՅԱՅՍ ԱՆՑՈՒԿ ՏՈՒՆ
ՈՅՔ ԷՔ ԲԱՌԲ·ԵԻ ԲԱՌ ՄՈՅՆ
ՏՈՒՔ ԻՆՁ ԲԱՆԻԻԶՈՂՐՄՈՒԹՒՆ
ՔՈՀԻՆ ՄԵՌՅԹԻԱԿԱՆ·1827 Ա
ԵԻՅՄ ՍԵԱՆՆ·ԱՐՏԻ·ՏԱՍՆ ԵՐԵՔԻ
ԵԴԻՆ Ի ՍՈՅՆ·ԳԵՐԵԶՄԱ ՆԻ

Նկ. 5. Հայկական գերեզմանի 1827 թ. տապանաքարի արձանագրությունը

երկուսի միջև փորագրված է խաչ, որը նախորդի օրինակով հենված է կիսագունդ ձև ունեցող հողի վրա։ Տապանաքարի գլխավոր մասը վերցված է կիսակլոր շրջանակի մեջ։ Սույն ձևով կազմված մակերեսի մեջ, անմիջապես շրջանակի տակ, տեղավորված է խույրը, գավազանը և բուն արձանագրությունը, ինը տողանոց (նկ. 6)։

1828
ԴԷԿ(ՏԵՄԲԵՐ)Ի 16
ԹՈՎՄԱՍ ՀԱՑՐՆ
ԱԳՈՒԼԵՑԻ ՈՐ
Ի ՏՈՀՄԵՆ ՅՕՀ(Ա)Ն
ԾԱՆԻ ՔՆՈՎ Մ
ԱՀՈՒ ԱՍՏ Է ՆՆՋԻ
ՄԻՆՉ ԻԾԱՑՆԵԼ ԻՒՐ
ՓԵՍԱՑԻ Է Է Է։

Նկ. 6. Հայկական գերեզմանի 1828 թ. տապանաքարի արձանագրությունը

Տապանաքար 6. սպիտակ մարմարյա ութ տողանոց այս տապանաքարը տարբերվում է հիշվածներից իր բարձր զարդաքանդակներով։ Այս տեսակետից այն ունի նմանություն Գրիգորիոպոլի հայկական գերեզմանատան տապանաքարերին, ինչպես և մոլդավական XVIII—XIX դդ. որոշ տապանաքարերին։ Մեր տապանաքարի արձանագրությունը տեղավորված է կլոր շրջանակի մեջ, տապանաքարի մեջտեղի մակերեսին (նկ. 7)։

Այս արձանագրության վերծանումը հետևյալն է՝

---

[4] Համաձայն Լ. Մ. Меликсет-Беков-ի, «Է»-ն սր. Երրորդությունն է նշանակում (նայիր *Л. М. Меликсет-Беков*. Армянские древности в Аккермане (в Бессарабии). Тифлис, 1911, էջ 95։ «Է» նաև Աստված է նշանակում, ըստ որում արձանագրության մեջ կարելի է կարդալ «Աստված», «Աստված», «Աստված»։



Նկ. 7. Հայկական գերեզմանի 1852 թ. տապանաքարի արձանագրությունը

ՆԵՐ Տ(Ա)Պ(Ա)ՆԻՍ
ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ
Հ(Ա)ՆԳՈՒՑԵ(Ա)Լ Խ(Ա)ՉԿԻՐ
ԱՒ(Ե)ՏԻՍ Ք(Ա)Հ(Ա)Ն(Ա)ԻՆ Տ(Է)Ր
ԱՒԵՏԻՍԵԱՆ ՈՐ ԷՐ
60 ԱՄԱՑ ԵՒ ՎԱԽ
ՅԱՆԵՑԱՒ՝ Ի 25
ԴԵԿՏ(ԵՄԲԵՐԻ) 1852 ԱՄԻ:

Տապանաքար 4. այս կրաքարե երկլեզվյան տապանաքարն ունի ընդհանրություն հիշված տապանաքարերին: Բայց, ի տարբերություն նախորդների, ավելի ցայտուն կերպով ձևավորված է նրա քանդակազարդ արձանագրության վերին մասը: Ըստ մեր օրինակի, խաչը դրված է անոթի մեջ, որտեղից դուրս են ընկած գեղարվեստականորեն մշակված, բուսական աշխարհը խորհրդանշող տերևներ: Այսպիսի օրինակների հանդիպում ենք ոչ միայն այս գերեզմանատան տապանաքարերի վրա, այլ նաև Որգեվի հայկական գերեզմանոցում: Մեր այստեղ բերված Քիշնևի տապանաքարը բաղկացած է հայերեն և ռուսերեն 6-ական տողանոց արձանագրություններից (նկ. 8):

Ահա արձանագրությունը՝

ЗДЕСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ
ДВОРЯНКИ МАРИИ ЛЕ
БЕДЕВОЙ ЖЕНА Х. А.
БОГДАСАРОВА СКОНЧАВ
ШАЯСЯ 1855 АВГУСТА
21 ДНЯ

Ի ՆԵՐՔՈՑ ԱՅՍՐ ՏԱ
ՊԱՆԻ ՆՆՋԷ ՄԱՐԻ
ԱՄ ԿԻՆՆ Մ(Ա)Հ(ՏԵ)ՍԻ ՊԱ
ՂՏ(Ա)ՍՐԵՆ ՎԱՂՃԱՆ
Ե(Ա)ԼՆ Ի 1855 ԱՄԻ Ի 21
ՕԳՈՍՏ:

Նկ. 8. Հայկական գերեզմանի 1855 թ. տապանաքարի արձանագրությունը

Տապանաքար 5. հետաքրքիր է 1882 թ. սպիտակ մարմարի վրա փորագրված արձանագրությունը՝ բաղկացած տասնինը տողից և հորիզոնական դիրք ունեցող սալատախտակի զարդաքանդակից (նկ. 9):

Վերծանումից հետո արձանագրությունը ընդունեց հետևյալ տեսքը՝

Նկ. 9. Հայկական գերեզմանի 1832 թ. տապանաքարի արձանագրությունը

ՏԵՍ ԴՈՒ ՈՎ ԿԻՆ Զ(Ա)ՅՍ Մ(Ա)Հ(Ա)Ր-
ՋԱՆ
ՈՒՐ ԿԱՅ Մ(Ա)ՐՄԻՆ ԻՄ ԵՂԾԱԿԱՆ
ԵՐԲԵՄՆ ԷԻ ԵՍ ՔԵԶ ՆԸՄԱՆ
ՔԵԶ ՆՄ(Ա)ՆԵԱՑ ԸՆԿԵՐ Ի ՏԱՆ
ԵՍ Մ(Ա)ՐԻԱՄ ԱՅՆ Մ(Ա)ԼԽԱՍԵ(Ա)Ն
ԼԵԱԼ ԿԵՆ(Ա)ԿԻՑ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ
ԱՂԱՅ ՅԱՐՈՒԹ(Ա)ՒԸՆ ՄՈՒՐ(Ա)ՏԵԱՆ
ԱՌՆ Ի ՏՈՀՄԷ ԱՋՆՈՒԱԿԱՆ
Յ(Ա)Մ(Ա)Ց ՅԻՍՆԻՑ ԵՐԻՑ ԼԸՐՄԱՆ
ԻՄՈՑ ԿԵՆ(Ա)Ց ԵՀԱՍ ՎԱԽՃԱՆ
ԱՆՇՈՒՆՉ, ԱՆԽՈՍ ԵՒ ԱՆԿԵՆԴԱՆ
ԴՆԻՄ ԱՀԱ ՅԱՅՍ ՔԵՐԵՋՄԱՆ
ՈՐՔ Հ(Ա)ՆԴՊԻՔ ՅԱՅՍ ԻՄ ԴԱՄԲԱՆ
ՋԻՍ ԱՐԺ(Ա)ՆԻ Վ(Ա)ՐԿԻԿ ՅԻՇՄԱՆ
ՓՐԿՉԻՆ ՀԱՋԱՐ ՈՒԹ ՀԱՐԻՒՐԻ
ԵՐԵՍՆԵՐԿՈՒ ԹՈՒԱԿԱՆԻ
ՅՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ Դ(Ե)ԿՏ(Ե)ՄԲԵՐԻ
ՋՈԳԻՍ ԱՌ ՏԷՐ ԱՒԱՆԳԵՑԻ
1832:

Անհրաժեշտ է նշել, որ սա միակ տապանաքարն է, որի վրա կարելի է տեսնել խաղողի ողկույզներ: Անհրաժեշտ է նշել նաև, որ այս տապանաքարերի մնացած զարդաքանդակները՝ նոճեզիները, շեղքերի պատկերները, նույնությամբ հանդիպում ենք Քիշնևի գլխավոր եկեղեցու 1804 թ. արձանագրության սալատախտակի վրա:

Այսպիսով, մի շարք տվյալներ և արձանագրություններ թույլ են տալիս պատկերացում կազմելու Քիշնևի հայկական գաղութի եկեղեցիների պատմության և նրա գերեզմանատան տապանաքարերի մասին: Հետագա ուսումնասիրությունները, ոչ միայն Քիշնևի գաղութի, այլև ամբողջ Բեսարաբիայի հայերի անցյալի պատմության հետ կապված, անհրաժեշտ են նաև հայ ժողովրդի պատմության ընդհանրացման համար:

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԷՋՄԻԱԾԻՆ

1974, մ=1

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ

1. Մայր Աթոռի հրատարակություն **«Հայկական խաչքարեր»** ալբոմը, հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, 213 գունավոր և միագույն (սև) նկար, կավճապատ ընտիր թուղթ, 12500 տպաքանակ, 230 էջ, գեղարվեստական գեղեցիկ ձևավորում և ընտիր տպագրություն՝ կատարված Բեյրութի «Էրեբունի» հրատարակչության կողմից:

2. **Օրացույց**, Մայր Աթոռի, 1975 թվականի, 14 մամուլ, 220 էջ, պատկերազարդ, 20000 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան:

3. **Պատի օրացույց**, Մայր Աթոռի, 1975 թվականի, 55×76 սմ չափի, երիզված կինամոնագույն կամ կապույտ գույնի զարդանախշերով, 10000 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԷ

1. **Նոր Կտակարան** (Հորս Աւետարաններ, Գործք առաքելոց, Առաքելական թղթեր և Յայտնութիւն), արևելահայերեն թարգմանություն, 10000 տպաքանակ, ընտիր տպագրություն, Մայր Աթոռի տպարան:

2. **«Էջմիածին» ամսագրի մատենագիտություն**, 1944—1974 թթ., մատենագիտություն, թեմատիկ, անձնանունների, տեղանունների ցանկեր, 400 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան: